

Հիմնադիր՝  
լրատվական գործունեություն իրականացնող  
«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Վկայական N 03Ա 059505,  
գրանցման տարեթիվը 07.04.2003

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

N 2 (55) 2018

Հիմնադրվել է 1998 թվականին  
Գիտական, տեսական, քննադատական-  
հրապարակախոսական, երաժշտական ամսագիր

Երաշխավորված է՝ ԵՊԿ գիտական խորհրդի կողմից 1996 թ.

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ

**Սոնա Տ. Հովհաննիսյան** (խմբավար, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ ղեկավար,  
ԵՊԿ գիտական խորհրդի նախագահ)

**Լիլիթ Վ. Երեջանյան** (արևելագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Փարիզի  
«Արարատ» միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս, ԵՊԿ կառավարման խորհրդի նախագահ)

**Ծովինար Տ. Մովսիսյան** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր)

**Սերգեյ Գ. Մարաջյան** (դաշնակահար, պրոֆեսոր, Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ,  
«ԵՊԿ հրատարակչական» խորհրդի նախագահ)

**Օլյա Յ. Նորիջանյան** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ գիտական քարտուղար)

**Արմեն Բ. Սմբատյան** (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ամսագրի հիմնադիր-տնօրեն)

**Գոհար Կ. Շագոյան** (երաժշտագետ, ՄՊԿ հայցորդ, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս,  
հրատարակիչ, ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր)

**Մարգարիտ Ա. Ռոխիսյան** (երաժշտագետ, քննադատ, արվեստագիտության դոկտոր, ՀՀ վաստակավոր գործիչ)

**Իրինա Լ. Ջուրտովա** (երաժշտագետ, դաշնակահարուհի, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր)

**Սվետլանա Կ. Մարգարյան** (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի և  
Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ)

**Աննա Ս. Արեշտայան** (միջնադարագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**Ժաննա Պ. Ջուրաբյան** (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**Գալինա Գ. Ղազարյան** (խմբավար, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ)

**Լևոն Ա. Չաուչյան** (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**Արթուր Յ. Ավանեսով** (կոմպոզիտոր, դաշնակահար, արվեստագիտության թեկնածու, դասախոս)

**Կարինե Ա. Ջաղացյանյան** (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**Ալինա Ա. Փահլևանյան** (երաժշտագետ-ֆոլկլորագետ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**Լուսինե Ջ. Սահակյան** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ)

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

**Կոնստանտին Վլադիմիրի Ջեյնյան** (երաժշտագետ, դաշնակահար, խմբավար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
Պ. Չայկովսկու անվ. ՄՊԿ գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր, **Մոսկվա, ՌԴ**)

**Ելենա Բորիսի ԳՈՒԻՆՍԿԱՅԱ** (երաժշտագետ, դաշնակահար, Ա. Շնիտկեի ինստիտուտի հիմնադիր,  
արվեստագիտության դոկտոր, ՄՊԿ պրոֆեսոր, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, **Մոսկվա, ՌԴ**)

**Ռուբեն Ավետի ՏԵՐՏԵՐՅԱՆ** (երաժշտագետ, քննադատ, արվեստագիտության թեկնածու, PhD Էսպիրիտու Սանտո համալսարանի  
պրոֆեսոր, **Գուայարուի, Էկվադոր**)

**Գրիգոր Պետրոսի ՓԻՏԵՃԵԱՆ** (միջնադարագետ, երաժշտագետ, խմբավար, ԵՊԿ պատվավոր պրոֆեսոր, **Նյու-Յորք, ԱՄՆ**)

**Վաչե ՊՆՐՍՈՒՄՅԱՆ** (խմբավար, Լարբ երաժշտական կենտրոնի հիմնադիր-տնօրեն,  
«Դրագարբ» հրատարակչության հրատարակիչ, Կալիֆորնիա, **Լոս-Անջելես, ԱՄՆ**)

**Հրանտ Հովհաննեսի ԽԱՋԻԿՅԱՆ** (երգիչ, արվեստաբան, լեզվաբան՝ անգլ., ֆրանս., ռուս. լեզուների, **Ժնև, Շվեյցարիա**)

**Նարինե Հարությունի ԳԵԼԼԱՅԱՆ** (կատարողական արվեստ, ջութակահար, Պորտուգալիայի ազգային սիմֆոնիկ նվագախմբի  
մենակատար, Դելլայան Տրիոյի հիմնադիր-ջութակահար, Հայրիկ Մուրադյան ՀԿ-ի նախագահ **Լիսաբոն, Պորտուգալիա**)

**Արթուր սարկավազ ՎԱՐԳՄՆՅԱՆ** (միջնադարագետ, երգիչ, խմբավար, դպրասպետ, **Երոստղեն, Իսրայել**)

Գլխավոր խմբագիր-հիմնադիր,

Համարի թողարկման պատասխանատու՝ երաժշտագետ **Գոհար Կաղենի ՇԱԳՈՅԱՆ**

Պատասխանատու քարտուղար՝ **Գրիգոր Հարությունի ՀՆՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագիր՝ **Սոֆա Մաթևոսի ԱՋՆԱՌԻՐՅԱՆ (ռուս.)**

Թարգմանիչ՝ **Ջենմա Ստեփանի ԳԱՄՊԱՐՅԱՆ (անգլ.)**

Գեղարվեստական խմբագիր և

կազմի ձևավորումը՝ **Գոհար Վիլենի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ամսագիրն ընդգրկված է

ՀՀ ԲՈԿ-ի «Առեմախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի պարբերականների ցուցակում»

Արտատպումը միայն «Երաժշտական Հայաստան» ամսագրի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ  
է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը խմբագրության կողմից չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Գիտական հոդվածները ենթակա են գրախոսման:

**Учредитель:**

*осуществляющий информационную деятельность*  
**“ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМ.КОМИТАСА”**  
*государственная некоммерческая организация*

Свидетельство N03U 059505,  
дата регистрации 07.04.2003

## **МУЗЫКАЛЬНАЯ АРМЕНИЯ**

N 2 (55) 2018

**Научно-теоретический,  
критико-публицистический журнал**

**Основан в 1998 году**

*Рекомендован к изданию Научным советом ЕГК с 1996 года*

### **РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:**

*Сона Оганесовна Оганесян (хормейстер, профессор, Заслуженный деятель искусств РА, ректор ЕГК, председатель Научного совета ЕГК)*  
*Лилит Вардгесовна Ериджакян (востоковед, доктор искусств., Заслуженный деятель искусств РА, членкор-академик Парижской международной академии “Арапат”, профессор, председатель Управленческого совета ЕГК)*  
*Цовинар Грайровна Мовсисян (музыковед, к-т искусств., доцент, проректор по науке ЕГК)*  
*Сергей Георгиевич Сараджян (пианист, профессор, Заслуженный деятель Польской культуры, председатель издательского совета ЕГК)*  
*Оля Юрьевна Нуридджяни (музыковед, к-т искусств., ученый секретарь ЕГК)*  
*Армен Баграмович Смбалян (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, Посол РА в Израиле, директор-основатель журнала)*  
*Гоар Карленовна Шагоян (музыковед, членкор-академик Парижской международной академии “Арапат”, главный редактор-основатель журнала)*  
*Жанна Петровна Зурабян (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)*  
*Светлана Корюновна Саркисян (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель культуры РА, Заслуженный деятель Польской культуры)*  
*Анна Сеновна Аревицян (медиевист, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)*  
*Давид Гарсеванович Казарян (хормейстер, профессор, Заслуженный деятель культуры РА, председатель АМО)*  
*Левон Александрович Чаушян (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, председатель АМА)*  
*Артур Юрьевич Аванесов (композитор, пианист, к-т искусств.)*  
*Карине Азатовна Джагацян (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)*  
*Маргарита Ашотовна Рухкян (музыковед, музыкальный критик, доктор искусств., Заслуженный деятель искусств РА)*  
*Ирина Леонидовна Золотова (музыковед, пианистка, доктор искусств., профессор)*  
*Алина Ашотовна Пахлеванян (фольклорист, музыковед, к-т искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)*  
*Лусине Завеновна Саакян (музыковед, к-т искусств., доцент)*

### **МЕЖДУНАРОДНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ:**

*Константин Владимирович Зенкин (музыковед, доктор искусств., профессор, пианист, проректор по научной работе МГК им. П. И. Чайковского, Москва, РФ)*  
*Елена Борисовна Долинская (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств России, основатель Института А. Шнитке, Москва, РФ)*  
*Рубен Аветович Тертерян (музыковед, музыкальный критик, PhD, профессор университета Эспириту Санто, Гуаякуил, Эквадор)*  
*Григор Петросович Питеджян (музыковед, медиевист, дирижер, почетный профессор ЕГК, Нью-Йорк, США)*  
*Ваче Парезуни (дирижер, издатель, директор-основатель Центра Lark, “Дразарк Пресс”, Калифорния, Лос-Анджелес, США)*  
*Нарине Арутюновна Деллалян (скрипачка, солистка Национального симфонического оркестра Португалии, основатель-скрипачка Трио Деллалян, председатель ОО “Айрик Мурадян”, Лиссабон, Португалия)*  
*Артур Дьякон Варданян (певец, хормейстер, регент, Иерусалим, Израиль)*

*Главный редактор-основатель, музыковед, издатель,  
ответственный за выпуск номера: Гоар Карленовна ШАГОЯН*

*Ответственный секретарь: Григор Арутюнович АРУТЮНЯН*  
*Редактор: Софа Матеосовна АЗНАУРЯН (рус.)*  
*Переводчик: Джемма Степановна ГАСПАРЯН (англ.)*  
*Художественный редактор и дизайн обложки: Гоар Виленовна ОГАННИСЯН*

**Журнал включен**

**ВАКом РА в Список научных изданий для публикации результатов диссертаций.**

**Перепечатка материалов производится исключительно с согласия редакции журнала “Музыкальная Армения” в письменном виде.**

**Редакция не всегда согласна с мнением авторов. Материалы редакцией не рецензируются и не возвращаются. Научные статьи рецензируются.**

Founder, information provider  
"YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS"  
State non-trade organization

Certificate # 03 A 059505,  
date of registration 07.04.2003

## MUSICAL ARMENIA

N 2 (55) 2018

Established in 1998

Scientific, critical and publicistic musical journal

Since 1996 publishing by the warranty  
of The Scientific Council of YSC

### EDITORIAL BOARD:

**Sona H. Hovhannisyan** (Conductor, Professor, Rector of the YSC, Honored Artist of RA,  
Chairman of the Scientific Council of the YSC)

**Lilit V. Yernjalyan** (Oriental Studies, PhD of Oriental Studies, Professor, Reporter Academic of  
international Science academy "Ararat" of Paris, Chairman of the Management Board of the  
YSC)

**Tsovinar H. Movsisyan** (Musicologist, PhD candidate, Docent, Vice Rector by scientific part)

**Sergey G. Sarajyan** (Pianist, Professor, Honored Artist of Art Poland, Chairman of the  
Publishing Council of YSC)

**Olya Y. Nurijanyan** (Musicologist, PhD candidate, Scientific secretary of the YSC)

**Armen B. Smbatyan** (Composer, Professor, Honored Artist of Art RA,  
Founder-director of journal)

**Gohar K. Shagoyan** (Musicologist, Reporter Academic of international Science academy  
"Ararat" of Paris, Founder-editor-in-chief)

**Zhanna P. Zurabyan** (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Artist of Art RA)

**Svetlana K. Sarkisyan** (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Artist of  
Art Poland and Honored Artist of Culture of RA)

**Anna S. Arevshatyan** (Musicologist, Medievalist, PhD Doctor, Professor, Honored Artist of Art RA)

**David G. Ghazaryan** (Conductor, Professor, Honored Artist of Culture of RA)

**Levon A. Chaushyan** (Composer, Professor, Honored Artist of Art RA)

**Arthur Y. Avanesov** (Composer, Piano Performing Arts, PhD candidate)

**Karine A. Jaghatspanyan** (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Artist of Art RA)

**Margarita A. Rukhkyan** (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Artist of Art RA)

**Irina L. Zolotova** (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor)

**Alina A. Pahlevanyan** (Musicologist-Folclorist, PhD Candidate, Professor,  
Honored Artist of Art RA)

**Lusine Z. Sahakyan** (Musicologist, PhD Candidate, Docent)

### INTERNATIONAL EDITORIAL COUNCIL

**Konstantin Vladimir Zenkin** (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor,  
Choirmaster, Vice-Rector for Science in MSC after P. I. Tchaikovsky, Honored  
Artist of Art RF, Moscow, RF)

**Elena Boris Dolinskaya** (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor, Honored  
Artist of Art RF, founder of A.Schnittke's Institute, Moscow, RF)

**Ruben Avet Terteryan** (Musicologist, Musical criticist, PhD candidate, Professor of  
Espiritu Santo university, Guayaquil, Ecuador)

**Grigor Petros Pidedjian** (Medievalist, Musicologist, Choirmaster, Honoured  
Professor at YSC, New-York, USA)

**Vache Barsumyan** (Conductor, publisher, founder - in-chief of Lark  
musical center, "Drazark" Press, Californian, Lan Angeles, USA)

**Narine Harutyun Dellalyan** (Violinist, Soloist of the National Symphony Orchestra  
of Portugal, Founder and violonist of Dellalyan Trio, President of Hayrik Muradyan's SO,  
Lisabon, Portugal)

**Artur diacon Vardanyan** (Singer, Choirmaster, Regent, Jerusalem, Israel)

Editor-in-chief, musicologist, publisher,

Responsible of the published issue: **Gohar Karlen SHAGOYAN**

Responsible secretary: **Grigor Harutyun HARUTYUNYAN**

Editor: **Sofa Mateos AZNAURYAN (Russian)**

Translator: **Jemma Stepan GASPARYAN (English)**

Cover Designer and Artistic Editor: **Gohar Vilen HOVHANNISYAN**

The publication is entered into the List of the issues accepted by the Supreme.

Certifying Commission of RA for publishing the results of theses.

Re-printing is possible only on written permission by "Musical Armenia" journal.

The publishing house does not always share opinions or points of view of authors.

Materials are not reviewed are not returned from the publishing house.

Scientific articles are reviewed.

Արդեն 20-րդ տարին է, որ տպագրվում է 1998 թվականից հայ իրականության մեջ երաժշտական մասնագիտական արվեստը ներկայացնող միջազգային պարբերական կոնսերվատորիայի պաշտոնական մամուլը՝ «Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ» գիտական ամսագիրը:

Նախախնամությունն այդպիսին էր, որ ԵՊԿ հիմնադրվեց որպես Երաժշտական ստորիա 1921-ին և միայն 3 տարի հետո վերածնակերպվեց՝ կոնսերվատորիա, այնպես էլ 3 տարվա ընդմիջումով, կարծես թե ավանդաբար, սակայն պատմականորեն այդպես ստացվեց՝ 1996-ին երաշխավորվեց ԵՊԿ գիտական խորհրդի կողմից և 1998-ին միայն, լույս տեսավ 1-ին համարը:

Հայկական իրականության մեջ առ այսօր ամսագիրը հանդիսանում է գիտական միակ հայ երաժշտական մասնագիտական պաշտոնական մամուլը: Այս մասին բազմիցս արձանագրվել է թե՛ սփյուռքում և թե՛ հայրենիքում երաժիշտ-լրագրողների կողմից և այն տարածվում է բազմաթիվ երկրներում:

Ամսագրի ցանկացած համարի տիտղոսաբերքում, ժամանակի քննությունը բռնած, կարող ենք ընթերցել ուղերձները և ամսագրի կարևորության գնահատումը մեր անվանի մտավորականների՝ Էդվարդ Միրզոյանի, Մարգարիտ Բրուտյանի, Արարսի Սարյանի, Պերճ Զեյթունցյանի, Լևոն Անանյանի, Ռադիկ Մարտիրոսյանի, Սերգեյ Համբարձումյանի և այլոց:

Ամսագրի տարածման շնորհիվ Կոնսերվատորիայի սաները հնարավորություն ունեցան ներկայանալու միջազգային ասպարեզում՝ շնորհիվ գրված հոդվածների, որոնք ներկայացնում էին համապատասխանաբար զարգացած հայ մշակույթը: Այդ համատեքստում հրավերներ են ստացել մասնակցելու միջազգային մրցույթների այն բնագավառներում, որոնք ոչ հանրահայտ են, ինչպես օրինակ՝ «Ընդհանուր դաշնամուր» անվանակարգում՝ Եկատերինիբուրգում՝ 1-ին մրցանակը (պատճառը «Երաժշտական Հայաստան» ամսագրի 2004 թ. Ա. Տերտերյանի հոբելյանական կրկնակի համարի տարածումն էր): Կամ, իտալացիների՝ Միլանի կոնսերվատորիայի կողմից մատենագիտակազմվել է շուրջ 60 հոդված: Երիտասարդ գիտնականներին ասպարեզ է և հետագայում իրենց հրատարակումներով գիտական կոչումների արժանանալու: Եվ նմանատիպ հետաքրքիր պատմական ընթացք է անցել ամսագիրը՝ առ այսօր իր ճանապարհը հարթելով ի փաստ հայ երաժշտության զարգացմանն ու տարածմանը:

**ԳՈՀՏԱՐ ԿԱՌԱՆԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ**

երաժշտագետ, հրատարակիչ  
«Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ»  
ամսագրի հիմնադիր-գլխավոր  
խմբագիր,  
«ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթի  
հիմնադիր-համարի թողարկման  
պատասխանատու,  
«ԵՊԿ հրատարակչության»  
հիմնադիր-ղեկավար

**Ա Ր Մ Ի Ն Ե Ա Շ Ո Տ Ի  
Հ Ա Կ Ո Ր Յ Ա Ն**

**Ֆոլկլորագետ, արվեստագիտության թեկնածու,  
Խ. Արուսյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի  
Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս**  
E-mail.armine151@mail.ru

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ Ալինա Աշոտի Փահլևանյանի 12.12.2018 թ. երաշխավորությամբ և գրախոսությամբ՝ ընդունվել է տպագրության դեկտեմբերի 11-ին ներկայացրել է հեղինակը՝ հոկտեմբերի 2-ին

**Մ Շ Ո Ւ Դ Ա Շ Տ Ի Ծ Ի Մ Ա Կ Ա Ն Ե Բ Գ Ե Բ Ը**

Մշու աշխարհ անուշ է.  
Մարն ու ձոր մշուշ է.  
Հիսսիս քամին քշէ զիս՝  
Ուր ծոցի մէջ թաղէ զիս (1. էջ 147):

**Մ** ուշ անունը ժառանգություն ենք ստացել հնագույն ժամանակներից ի վեր, և շատ ուսումնասիրողներ դրա ծագումն ու իմաստը, առաջացումը կապում են հնագույն արձանագրություններում հիշատակվող ցեղերի ու աշխարհագրական անունների, քաղաքական դեպքերի կամ բնական որոշ երևույթների հետ: Ժողովրդական ամենահին ավանդույթներից մեկի համաձայն Մուշ անունը համարվում է «մշուշ»-ից առաջացած: Ըստ ավանդության՝ Արածանիում լողանալու ժամանակ երիտասարդներից իր մերկությունը քողարկելու համար «մշուշը» արարում էր սիրո աստվածուհին՝ Աստղիկը (2. էջ 197-198): Հեթանոսական ժամանակներից մեզ հասած այդ ավանդության արձագանքը կարելի է տեսնել նաև Կոմիտասի գրառած «Մշո սարեր մշուշ էր» պարերգում (3. երգ թիվ 207, էջ 133):

կան են մի քանի հարսանեկան երգեր՝ «Վեր էլի, հայ», «Խարսիկ վեր արե», «Մը քորսե դանհինա», «Շկավե զավե», որոնց միջոցով նաև կարելի է պատկերացում կազմել մշեցիների ծիսական ավանդույթների մասին: Հարսանիքը Մուշում մի յուրահատուկ արարողակարգ էր՝ հարսնացուի ընտրություն, աղջիկտես, նշանդրեք, հաց կտրել, հարսնատես, խոնջա-բոխջա, տաշտադրոնք, ազպալվածք, հինադրեք, կնտրել կամ թրաշ, պսակ և այլն: Նշված բոլոր արարողություններում վառ ընդգծված են մշեցիներին հատուկ սովորությունները, իսկ այս ամենի անբակտելի մասն են կազմել երգն ու պարը: Մշեցիք ավանդապահ ժողովուրդ էին: Իրենց ապագա հարսնացուին ընտրում էին դեռ օրորոցում: Այդ երգերը կոչվում էին օրորոցախազ (օրորոցի կամարի վրա այդ առիթով խազ էին քաշում) (1. էջ 157): Հնում հարսնացուի ընտրությունը կատարում էին ծնողները, և պատահում էին դեպքեր, երբ միայն պսակի օրն էին հարսն ու փեսան միմյանց տեսնում: Աղջիկ տեսնելու գնում էր երիտասարդի մայրը մի քանի ազգականների հետ. եթե աղջկա ծնողները դրական տրամադրված էին լինում, թողնում էին, որ ապագա փեսայի ծնողները տեսնեն իրենց աղջկան: Վերջիններս գնում էին աղջկան, խոսում նրա հետ, շատ անգամ նաև մերկացնում նրան: Հավանելուց հետո համբուրում էին ճակատը, ձեռքին մի ոսկի դնում: Երկկողմանի համաձայնության գալուց հետո հյուրասիրում էին և հեռանում (1. էջ 157): Աղջիկտեսին հաջորդում էր նշանդրեքը: Այս անգամ փեսացուի հայրը իր տուն է հրավիրում բարեկամ տղամարդկանց: Հյուրասիրելուց հետո գնում էին հարսնացուի տուն, հարսնացուին ներս էին բերում, առատ ոսկի նվիրում և նշանում: Երբեմն հրավիրում էին քահանա, որ օրհնի ամենը (1. էջ 157-158): Պսակի արարողությունը մշեցիների մոտ հազեցված է երգով, պարով, նվագով, հետաքրքրական սովորություններով: Ահավասիկ դրանցից մի քանիսը: Հարսնացուի հանդերձը հազցնելուց երգում էին (1. էջ 166-167):

207. Մ Շ Ո Ւ Մ Ա Բ Ե Բ Մ Շ Ո Ւ Ե Բ

[Չափավոր. Sostenuto]  
[Միայնակ]

Մը - շու սա - թեր մը - շուշ էր,  
Մը - շու խոտ ջուր ա - նուշ էր,  
հար նազ, հար նազ, հար նազ - զիզ,  
հար նազ, հար նազ, հար նազ - զիզ:

Մշու սարեր մշուշ էր,  
Հար նազ, հար նազ,  
Հար նարզիզ:  
Մշու խոտ ջուր անուշ էր,  
Հար նազ, հար նազ,  
Հար նարզիզ:  
Կոմիտասի գրառած Մշո երգերի մեջ հետաքրքրա-

Տնիկ ու շենքիկ,  
Էլ դուք միք ժաժա,  
Մենք ինք ժաժալու,  
Շողիկ տանելու:

Խարս, վեր արի քյո թախտեն,  
Գանգյատ մ'անե քյո բաղտեն:  
Խարս, վեր արի քյո օղից,  
Գանգյատ մ'անե քյո բախտից (3. էջ 28):

Աղբրիկ էլ չծրմծրմաս,  
Մաղիկ էլ չխըլվըլաս (շարժուել),  
Մենք ինք երալու,  
Շողիկ երամէն ջոկելու:

Եկեղեցում պսակի արարողությունը ավարտելուց հետո ուղևորվում են դեպի փեսայի տուն: Երբ մոտենում են փեսայի տանը, մեկը երգում է.

Գիշեր, դու տարի եղիր,  
Աղօթբան դու լէ հեռացիր,  
Մէր երան հասրաթ հանիր,  
Էս անդարձ, օղուք (յաջող) օրին:

Թագուորի հէր տիրս արի,  
Փունջ մը շուշան ինք բերի,  
Թագուորի մէր, տիրս արի,  
Թուփ մի խութնի ինք բերի,  
Թագուորի աղբէր, տիրս արի,  
Ապըմէ փէժկիր մ'ինք բերի (1. էջ 170):

Երբ հարսին հանում են հոր տանից, նրա գրպանը չամիչ են լցնում և մի քանի գույգ փոքր գուլպաներ դնում, այս ժամանակ աղջիկները երգում են (1. էջ 168).

Գյուղերում տղայի մայրը մի քանի հաց ձեռքին դուրս է գալիս, հացը դնում է հարսի գլխին, մնացած հացերը ձեռքին սկսում է պարել: Այդ միջոցին մեկը ջրով լի մի փարջ խփում է գետնին՝ հարսի ու փեսայի առջև, ու կոտրում: Այդ երևույթը չարխափան նշանակություն ունի: Տանեցիներից ոմանք կտուրից չամիչ, ընկույզ, երբեմն նաև մանր դրամ են թափում հարսի գլխին: Տուն մտնելուց առաջ քահանան փեսայի մորը խնդրում է, որ գա և ավետարանը համբուրի, իսկ ծերունիներից մեկն ասում է (1. էջ 170-171).

Ջչամիչ մաղով մաղեցին,  
Շողերի (հարսնացուի) ջէբեր լցրեցին,  
Ջղարիբ ճամփայ դրեցին:

Սովորություն էր, որ հարսնացուին տանելուց հետո նրա հետևից չեն ավում, որպեսզի չանհետանա աղջկա հետքը և հայրական տունը չավիրվի: Այս առիթով աղջիկները երգում են (1. էջ 168).

- Ո՞վ ջաղամաթ, հանդիսականք,  
Դուք լէ օրհնէք մըր թագուորին.  
Որ մըր ջուխտաթ ծլին ծաղկին,  
Ընդրանց պտուղք մանկունք եղնեն:  
- Դուք օրհնելով մըր արև-յուսին,  
Մենք լէ կը խնդրենք վերին հօրին,  
Որ մըր ջուխտակի աղուբաթին  
Բարով խէրով որդիքդ հասնին:

Մէրիկ, մի ալի գտախտիկ,  
Որ չարի քու աղջկայ հետիկ,  
Թըղ մնայ քի նմուշիկ,  
Որ հանիս քու սրտի հասրաթիկ:

Հարսանյաց հանդեսին թագվորի մորը պարելու հրահրող դեր ունի այս երգը (3. էջ 178, երգ թիվ 73, էջ 75).

Պսակ տանելիս հարսնացուի կոշիկների մեջ գյուղերում զարնանացան ցորեն են ածում, իսկ քաղաքում՝ մանր դրամ, որպեսզի հարսի ոտը բարով լինի (1. էջ 168): Իսկ ահա թագվորի տանից եկող հարսնածները աշխատում են հարսնացուի տանից գողանալ մի խուփ, որ ապագա հարսը չխտական լինի, մի գդալ, որ նրա բաժին դամաթն էլ նրա հետ գնա (1. էջ 168):

73. ՎԵՐ ԷԼԻ, ՀԱՅՅ  
(Մուշ)

[Եռանդով. Energico]

վեր է - լի, հայ, վեր է - լի, խար - սի կե - սուր, վեր է - լի:

Այսպիսով, հարսին դեղ-գունուայի առաջնորդությամբ ուղևորում են դեպի եկեղեցի: Երբ հարսին գուլպած-գարդարված հայրենի տանից դուրս են բերում, դռան առաջ այս երգն են երգում (3. էջ 178, երգ թիվ 63, էջ 72).

63. ԽԱՐՍԻԿ ՎԵՐ ԱՐԵ՝  
(Մուշ)

[Ասեղով. Recitativo]

խար - սիկ, վեր ա - ռե, վեր ա - ռե:

Վեր էլի, հայ, վեր էլի,  
Խարսի կեսուր, վեր էլի:  
Վեր էլի, հայ, վեր էլի,  
Թագվորի մեր, վեր էլի:

Խարս վեր արի, նագ մի անե,  
Փեշերդ տուր վեր, թոզ մի անե:

Հարսանեկան երգերի շարքից հետաքրքրական են Կոմիտասի գրառած «Մը քորսե դանինա»-ն, «Շկավե գավե»-ն: Թեպետ երգի խոսքերը քրդերեն են, բայց այս երգերը բնիկ ավանդական հայկական Մշո հարսանեկան երգեր են: Սրանք, բնականաբար, քրդական հարսանեկան երգերի եղանակներին նմանություն չու-

# Ծ ո լ կ լ ը ռ ա գ ի տ ո թ յ ո լ ը

նեն, մինչդեռ դրանք ոճական անվիճելի ընդհանրություն ունեն հայ ավանդական հարսանիքի, մասնավորապես փեսային գովերգող երգերի հետ, և երկու երգերն էլ իրենց վերջավորություններով (հանգաններով) ակնարկում են տվյալ երգերի հնության մասին: Պրոֆեսոր Ռ. Աթայանն այս առթիվ գրում է. «Եթե դրանց խոսքերն ազգագրական առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում ոչ հայկական, ոչ էլ քրդական բանահյուսության տեսակետից, ապա եղանակներն իրենց խոր ավանդականությամբ ու յուրահատուկ վիպականությամբ կարող են դիտվել որպես հայկական գյուղական ֆոլկլորի խիստ հետաքրքրական նմուշներ» (3. էջ 179):

Այս երգը հայտնաբերվել է Կոմիտասի կազմած հայ գյուղական երգերի ժանրային հատուկ ժողովածուում: Առաջին գրանցման մոտ Կոմիտասը մակագրել է «Քրդերեն. արտագրել եղանակը» (3. էջ 179, երգ թիվ 81, «Մշո հարսանեկան», «Մը քորսե դանինա» (3. էջ 78):

81. ՄՇՈ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ



(3. երգ թիվ 82, «Նկավն Ջավն» էջ 78).

[Ազատ չափով. Tempo rubato]

Մշո հարսանեկան երգերից է «Վայ, մայրիկս, զիս տարան» հարսի գովերգը: Այն իր կառուցվածքով պարային է, բովանդակությամբ՝ բանաստեղծական, բանաձևով՝ միջոցներով՝ հարսանեկան (4. էջ 23): Այն և հարսի գովերգ է. «Նիգյար մներ հալուկ եղ», և հարսի հրաժեշտ լացի, «Վայ, մայրիկս, զիս տարան», և հարսին մխիթարելու երգի տարրեր ունի. «Տարան, տարան, թող տանին, օր մը էսօր կու բերին» (4. էջ 23, երգ թիվ 7. էջ 67).

- Արճեշու սար երկու հերկ,
- Վայ, մայրիկս, զիս տարան.
- Արճեշու սար երկու հերկ,
- Քաղին, Նիգյար, զիս տարան:

ՎԱՅ ՄԱՅՐԻԿՍ, ՉԻՍ ՏԱՐԱՆ 7. ОЙ, МАТУШКА, УВЕЛИ МЕНЯ

♩ = 126

- 1) - Տարան, տարան. թող տանին, Օր մը ըսօր կու բերին:
- 2) - Վայ, մայրիկս, զիս տարան, Ջիգյարս քանդին, տարան.
- 3) - Քաղին, Նիգյար, զիս տարան, Ջիգյարս քանդին, տարան (4. էջ 73-74):

Այս երգի երգասացը Բարսեղ Ստեփանյանն է: Բարսեղը գաղթել է 1915-ին Մշո դաշտավայրի Ծոկետ գյուղից: Իր ծննդավայրում եղել է անվանի երգիչ, ունեցել է հարուստ և ավանդական երգացանկ (4. էջ 206): Երգը ձայնագրվել է երգասացի 82 տարեկան հասակում: Այս և մի շարք Մշո երգեր, որոնք զետեղված են «Թալին» ժողովածուում, մեզ են հասել շնորհիվ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության կարիներտի 1969 թվականին կազմակերպած գիտարշավի կողմից, որը ղեկավարում էր պրոֆեսոր Մարգարիտ Արամի Բրուտյանը: Գիտարշավը ղեկաի Թալին պայմանավորված էր այն հանգամանքով, որ Թալինի շրջանի ազգաբնակչությունը բաղկացած է նաև պատմական Հայաստանի Սասունից, Տարոնից և մասնավորապես Մշո դաշտից 1915 թվականին գաղթած վերաբնակիչներից: Երգերը վերծանել է ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ պրոֆեսոր Ալինա Աշոտի Փահլևանյանը, տեքստային վերծանումը իրականացրել է բանագիտական գիտությունների թեկնածու, ԵՊԿ դոցենտ Արուսյակ Շատերի Սահակյանը:

Մշո ծիսական երգերից են նաև «Համբարձման երկուշաբթիի» երգերը, որոնց բովանդակությունը, հատկապես սկզբնատողերը հուշում են, որ դրանք կապված

են Համբարձման տոնի գուշակության ծեսի հետ՝ նվիրված գարնան զարթոնքի, ծի ու ծաղկի, խոտհնձի փառաբանությանը (4. էջ 23):

Մշո դաշտավայրում այս ծեսը նշում էին հետևյալ ձևով. երիտասարդ տավարածները ծաղկեփնջերով զարդարում էին տավարի ճակատներն ու եղջյուրները, և այդ երգերը շուրթերին երեկոյան գյուղ էին մտնում ու ծաղկեփնջերը նվիրում գյուղի հարս ու աղջկան:

Ահա այդ երգերից մեկը, որը կառուցվածքով պարերգային է (4. էջ 22-24, երգ թիվ 81, էջ 154-155):

**ՀԱՄԲԱՐԶՄԱՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ 81. ПОНЕДЕЛЬНИК ВОЗНЕСЕНИЯ**

♩ = 63

Համ - բարձ - ման էր - կու - շար - քին, համ - բարձ - ման էր - կու - շար - քին, վեյ - ցի գիտցի ու գն - ըն - դին, հրո գի - տու ա - փին գա - ցի, ծո - ըն - ցի ծոք - քին

1)

2)

1.2.3.4.5

1)

2)

կամ՝

յա - ռոջ դո - մով ըն - ցու - ցի, հար - յուր բար - դիկ քո - մն - ցի, յա - ռոջ դո - մով ըն - ցու - ցի,

Համբարձման երկուշաբթին.  
 Համբարձման երկուշաբթին.  
 Վերցի զփոցի ու զկերնդին,  
 Հրո գիտու ափին գացի.  
 Վերցի զփոցի ու զկերնդին,  
 Հրո գիտու ափին գացի.  
 Ծորեցի, ծորթըփեցի,  
 Մանդրիկ-մանդրիկ խորմեցի,  
 Մանդրիկ-մանդրիկ խորմեցի,

Հարյուր բարդիկ թըմմեցի.  
 Հարյուր բարդիկ թըմմեցի,  
 Յարոջ դոնով ընցուցի.  
 Յարոջ դոնով ընցուցի,  
 Համբարձման երկուշաբթին (4. էջ 165):

Մշեցիները քաջ, անվախ, հայրենասեր, զիտության և արվեստի ասպարեզում շնորհալի մարդիկ էին: Իբրև ավանդապահ ժողովուրդ՝ նրանք ազգային ավանդույթներն սրբությանը պահպանում էին, և այդ պահպանողականությունը առաջին հերթին դրսևորվում էր նաև ծեսի, ծիսական արարողակարգերի, երգ ու պարի միջոցով: Ծիսական երգերը իրենց բազմազանությամբ լավագույնս արտահայտում էին ժողովրդի հասարակական և ընտանեկան կենցաղը, տալիս հարուստ նյութ նահապետական ընտանիքի բարքերն ու սովորություններն ուսումնասիրելու համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. *Լալայան Ե.*, Ազգագրական հանդես, XXVI գիրք, Թիֆլիս 1916 թ., տպ. «Մլոխ», «Գիմնազիչեսկայա», N1: *Lalayan E.*, Azgagrakan handes, XXVI girq, Thiflis 1916 th., tp. "Slovo", "Gimnazichejskaya", N 1.
2. *Հակոբյան Թ. Խ.*, Պատմական Հայաստանի քաղաքները, Եր., Հայաստան 1987 թ.: *Hakvobyan Th. Kh.*, Patmakan Hayastani qaghaqner', Yer., Hayastan 1987 th.
3. *Կոմիտաս*, ԵԺ 10, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000 թ.: *Komitas*, EZh 10, Yer., HH GAA "Gituthyun" hratarakchuthyun, 2000 th.
4. Թալին, Հայկական ժողովրդական երգեր և նվագներ, Եր., «Սովետական գրող» հրատարակչություն, 1984 թ.: *Thalin*, Haykakan zhoghovrdakan yerger yev nvagner, Yer., "Sovetakan grogh" hratarakchutyun, 1984 th.

**Քանալի-քաներ.** ծիսական երգեր, հարսնացու, նշան, թագվոր, երգասաց, սովորություն, ավանդույթ, Համբարձման երկուշաբթի:  
**Ключевые слова:** обрядовые песни, невеста, обручение, жених-царь, певчий, обычай, традиция, Понедельник Вознесения.  
**Keywords:** ritual songs, bride, betrothal, bride groom, vocalst, hobit, traditions, Fast of Ascension.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ ՀԱԿՈՒՅԱՆ (ծ. 27.12.1981 թ., ք. Երևան): Ավարտել է՝ 2001-ին Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանը, դաշնամուրային բաժինը (ղեկ.՝ Ժ. Գ. Գավջյան), 2006-ին՝ ԵՊԿ երաժշտագիտական բաժինը (ղեկ.՝ Ա. Ա. Փահլևանյան), 2009-ին՝ ասպիրանտուրան (ղեկ.՝ պրոֆ., արվեստագիտության թեկնածու Ա. Ա. Փահլևանյան): 2011-ին ՀՀ ԳԱԱ ԱԻ պաշտպանել է թեկնածուական թեզը՝ «Միջնադարյան ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտական ստեղծագործության լեզվաճանաչական առանձնահատկությունները» թեմայով (ղեկ.՝ պրոֆ., արվեստագիտության թեկնածու Ա. Ա. Փահլևանյան): Դասավանդում է՝ 2006-ից առ այսօր Երևանի Առնո Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական քոլեջում՝ հարմոնիա, տեսություն դասընթացների դասախոս, 2017-ից առ այսօր Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Երաժշտության մանկավարժության ամբիոնում՝ սոլֆեջո, հարմոնիա, պոլիֆոնիա, հայ երաժշտության պատմություն, հայկական ժողովրդական երաժշտական ստեղծագործություն դասընթացների դասախոս: Հեղինակ է գիտական հոդվածների՝ «Ժողովրդա-

կան երգի և ժողովրդամասնագիտացված արվեստի առանձնահատկությունները», /ՀՀ ԳԱԱ ԱԻ երիտասարդ հայ արվեստագետների գիտական 3-րդ նստաշրջան., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2008., էջ 118-129, «Միջնադարյան ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտական ստեղծագործության լեզվաոճական առանձնահատկությունները», //Երաժշտական Հայաստան, #1 (36) 2010թ. Եր., «ԵՊԿ հրատարակչություն», էջ 17-21, «Գուսաններն իրրև աշխարհիկ մասնագիտացված արվեստի կրողներ հին և միջնադարյան Հայաստանում», //Երաժշտական Հայաստան, #1(36)2010թ. Եր., «ԵՊԿ հրատարակչություն» էջ 22-24, «Այնա երգերը որպես գուսանական արվեստի օրինակ», /ՀՀ ԳԱԱ ԱԻ երիտասարդ հայ արվեստագետների գիտական 4-րդ նստաշրջան., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2010., էջ 204-211:

**Сведения об авторе:** АРМИНЕ АШОТОВНА АКОБЯН (род. 27.12.1981 г., г. Ереван). В 2001 году окончила фортепианное отделение (рук Ж. Г. Гавдзьян) Ереванского государственного музыкального колледжа им. Р. Меликяна, в 2006 году - теоретическое отделение ЕГК (рук. кандидат искусств. А. А. Пахлеванян), в 2009 г. - аспирантуру ЕГК по специальности "Музыковедение" (рук. проф., канд. искусств. А. А. Пахлеванян), по теме "Языково-стилистические особенности средневекового народно-профессионального музыкального творчества". Преподает: с 2006 года по сей день в Ереванском государственном музыкально-педагогическом колледже им. А. Бабаджаняна (гармония, теория музыки), с 2017 года - в АГПУ им. Х. Абовяна (сольфеджио-гармония, полифония, история армянской музыки, армянское народное музыкальное творчество). Автор научных статей: "Особенности народной песни и народно-профессионального искусства", 3-я научная сессия молодых армянских искусствоведов, Ер.: Гитуюцян НАН РА, 2008, С.118-129; "Языково-стилистические особенности средневекового народно-профессионального музыкального творчества" //Музыкальная Армения, #1(36) 2010, С.17-21; "Песни Акна как примеры гусанского искусства" 4-я научная сессия молодых армянских искусствоведов, Ер.: Гитуюцян НАН РА, 2010, С. 204-211; "Гусаны как носители светского профессионального искусства в древней и средневековой Армении" //Музыкальная Армения, #1(36) 2010., С. 22-24.

**Information about the author:** HAKOBYAN ARMINE A. (born 27.12.1981, Yerevan). In 2001 she graduated from the piano department (dir. Zh. G. Gavdzhyan) of the Yerevan State Music College after R. Melikyan, in 2006 from the theoretical department of YSC (dir. PhD candidate A. A. Pahlevanyan), in 2009 got a postgraduate degree in YSC with the profession "Musicology" (dir. prof., PhD candidate A. A. Pakhlevanyan). Since 2006 till these days teaches in the Yerevan State Musical Pedagogical College after A. Babajanian (harmony, music theory), since 2017 in ASPU after Kh. Abovyan (solfege-harmony, polyphony, history of Armenian music, Armenian folk musical creativity). Author of scientific articles: "Peculiarities of folk songs and folk professional art", 3<sup>rd</sup> scientific session of young Armenian art historians Yer.: Science, NAS RA, 2008, P. 118-129; "The linguistic and stylistic peculiarities of medieval folk professional musical creativity" //Musical Armenia, # 1 (36) 2010, P. 17-21; "Songs of Akn as an Examples of Gusan Art" 4<sup>th</sup> Scientific Session of Young Armenian Art Critics, Yer: Science NAS RA, 2010, p. 204-211; "Gusans as a bearers of secular professional art in ancient and medieval Armenia" //Musical Armenia, # 1 (36) 2010, p. 22-24.

## Րեզյումե

Փոլկլորիստ, կանդիդատ արվեստագիտության *Արմինե Ասոտովնա Ակոբյան*. - "Օբրյադովե քեսնի Մուսկոյ դոլինայի արվեստագիտական արմենի"։

Среди записанных Комитасом Мушских песен большой интерес представляют несколько свадебных песен, благодаря которым можно получить представление об обрядовых традициях мушцев. Свадьба в Мусхе представляла собой целый ряд обрядовых действий: выбор невесты, смотрины, обручение, разрезание хлеба, закладка теста для хлеба и ритуальной гаты, обряд крашения хной, венчание и т.д. Во всех перечисленных обрядах четко просматриваются черты, свойственные мушцам, а неотделимой частью всего этого являются песни и танцы. Мушцы – народ, приверженный традиции. Свою будущую невестку часто выбирали с колыбели. Песни, сопровождающие этот обряд, назывались "оророцахаз" (на дуге колыбели делали зарубку). В старину выбор невесты осуществляли родители, и были случаи, когда жених и невеста впервые видели друг друга лишь в день свадьбы. Обряд венчания у мушцев богат песнями, танцами, игрой на народных инструментах, интересными обычаями.

## Summary

Folklorist, PhD candidate *Armine Ashot Hakobyan*. - "Culture ritual songs of Moush field's historical Armenia".

Among the many songs from Moush transcribed by Komitas, there are several weddings songs, including Ver Eli, Hay!, Kharsig Ver Are!, Me Korse Tanina; and Shvage Zave. Wedding ceremonies in Moush were unique, and included many rites - the arrangement of the marriage between families, the first visit of the groom's family to see the bride, the engagement, the first shared meal, the first visit of the groom to the bride, khoncha-pokhcha (the sending of presents by the groom to the bride prior to the wedding), dashdadronk (a gathering of the bride's and groom's relatives on the Friday prior to the wedding), azbalvatsk (the laundering of the groom's clothes for the last time before the groom is married), hinatrek (the sending of a meal of bread and fruits from the groom's home to the bride's home), gendrel/trash (the procession that leads the groom, dressed in his wedding suit, to his new home), the wedding, etc. Naturally, for the inhabitants of Moush, song and dance were an integral part of most of these traditional wedding rites.

The people of Moush were superstitious. Weddings were arranged by families while their children were still in their cradles. Songs called ororotsakhaz (cradle tunes) were sung over the cradle to mark the occasion of the choice of the infant's future mate (the infant's parents would draw a musical note on the roof of the cradle while singing these songs). In some cases grooms and brides only met each other for the first time on the day of their wedding. The wedding ceremony itself was accompanied by songs, dances, and unique local rituals.

ԱՆԱՀԻՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ  
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Երաժշտագետ, ֆոլկլորագետ,  
Երևանի Կոմիտասի անվ. պետական  
կոնսերվատորիայի դոցենտ  
E-mail: anki.mus@mail.ru

ԳՈՐԾԻԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամ, արվ. թեկ., պրոֆ. Ալինա Աշոտի Փահլևանյանի երաշխավորությամբ ընդունվել է տպագրության՝ դեկտեմբերի 11-ին ներկայացրել է հեղինակը՝ հոկտեմբերի 9-ին

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳՈՐԾԻՔԱԳԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷԶԵՐ

(սկիզբը տես՝ «Երաժշտական Հայաստան»,  
1 (54) 2018 թ., էջ՝ 27-31)

Մ եր նախորդ հոդվածում (1.) մի շարք երախտավորների կողքին տեղ չէր գտել XIX - XX դդ. Անդրկովկասի երաժշտական կյանքում, հատկապես արևելյան նվագախմբերի ստեղծման ու զարգացման գործում մեծ ավանդ ունեցող շնորհաշատ երաժիշտ, կազմակերպիչ, կոմպոզիտոր և դիրիժոր, արևելյան երաժշտության գիտակ, բժիշկ Ավանես Հայրապետի Իռաննեսյանը (1881-1938 թթ.): Նա ծնվել է Շուշիում: Ավարտելով տեղի ռեալական ուսումնարանը՝ աշխատել է իգական գիմնազիայում որպես երգի ուսուցիչ: 1905 թվականից սովորել է Նովոռոսիյսկի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Աշխատելով որպես բժիշկ՝ հետագայում չի դադարել զբաղվել երաժշտությամբ՝ ղեկավարելով զինվորական նվագախումբը: 1920 թվականին բժիշկ Իռաննեսյանը տեղափոխվում է Բաքու, կազմակերպում Ադրբեջանի ժողովրդական գործիքների առաջին պետական արևելյան նվագախումբը և մինչև կյանքի վերջը մնում դրա անփոփոխ ղեկավարը: Հետաքրքիր փաստ է, որ Իռաննեսյանը, ինչպես և իր ժամանակի մյուս ղեկավարները, չէին օգտվում նոտաներից. մտղամները, թեսնիֆները, ռանգիներն ու պարեղանակները կատարվում էին հիշողությամբ: Ի վերջո, քառանկյան նվագախումբը մեծ ազդեցություն թողեց Ադրբեջանի երաժշտական մշակույթի զարգացման վրա: Անսամբլի կազմում ընդգրկված էին նաև հայազգի գործիքահարներ Լևոն Կարախանը, Կարո Չարչոլյանը, Բալա Մելիքովը, Սողոմոն Մելքոնյանը և այլք: Անսամբլը ելույթներ է ունեցել ոչ միայն Անդրկովկասում, այլև Մոսկվայում, Լենինգրադում (մասնակցել է նաև Մոսկվայում Ադրբեջանի մշակույթի տասնօրյակին), հետագայում՝ Ուկրաինայում և Բելոռուսում: Մամուլը բարձր է գնահատել անսամբլի ելույթները: Հյուրախաղերի ընթացքում Իռաննեսյանն իր անսամբլով հրավիրվում է պատեֆոնային ձայնագրության (ձայնագրվել են մի քանի մտղամներ՝ թեսնիֆներով, հատկապես

նշանակալի է «Չարզյահ»-ի նվագախմբային բարձրակարգ կատարումը):

Ա. Իռաննեսյանն ստեղծել է նաև կանացի նվագախումբ, որն անսովոր երևույթ էր այդ երկրի համար (հայտնի է, որ ըստ ավանդույթի արևելքի կանանց արգելվում էր բեմ բարձրանալ...): Անսամբլը կատարում էր բարդ մտղամներ, ժողովրդական երգեր և պարեղանակներ, ինչպես նաև Իռաննեսյանի կողմից վարպետորեն կատարված մշակումներ:

Երաժշտական մշակույթի զարգացման գործում մեծ ներդրման համար Ավանես Իռաննեսյանը արժանացել է Արվեստի վաստակավոր գործչի կոչման: Եռանդուն և նվիրյալ գործիչը հանկարծամահ է եղել հենց անսամբլի փորձի պահին (2. էջ 93-100):

Մաս 2

Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներում տարածված նվագարանների մասին տեղեկություններ ենք քաղում հնագիտական պեղումներից, հայոց պատմիչների (մատենագիրների) աշխատություններից, միջնադարյան ձեռագրերը ծաղկողների (կամ մանրանկարիչների) նկարներից, հնագույն տապանաքարերի փորագրություններից, ժայռապատկերներից, հին և միջնադարյան դեկորատիվ կիրառական արվեստի հնագիտական նմուշների՝ արծաթե, կավե, ապակե գավաթների, թասերի, անոթների զարդապատկերներից: Մրանց բազմաբովանդակ պատկերներում տեղ են գտել նվագարաններ կամ դրանց բեկորներ, երաժիշտ-նվագածուն իր նվագարանով և անսամբլ հիշեցնող նվագածուների խումբը՝ գործիքադարանի երեք բաժինների ընդգրկմամբ:

Հնագիտական պեղումներն իրենց հնարավոր մանրամասնություններով ի մի բերված և ընդհանրացնող աշխատություն է հրատարակել երաժշտագետ Անահիտ Բաղդասարյանը «Հայկական ժողովրդական նվագարաններ» ձեռնարկում (3. էջ 3-34):

Երաժշտագետ Նաիրի Խաչատրյանն իր «Պեղածո երաժշտություն» հոդվածում գրում է. «Հայկական լեռ-

# Գործիքագիտություն (ժողովրդական)



պարկապուկ



քյամանչա



քյամանի



սանթուր



շփի



պլու



գուռնա



թառ



սազ




դիլ



նաղարա



սրինգ



քանոն



դուդուկ

նաշխարհում պեղումներից հայտնաբերված ամենահին հարկանային նվագարաններն աղմկային և դողանջող խմբերին պատկանող բրոնզե բոժոժները, զանգերն ու ծնծղաներն են, որ տարածված են եղել Ք. ծ. ա. II-I հազարամյակներում: Պեղումներից հայտնաբերված փողային նվագարաններից են եղջերափողը, բազմափող և միափող ոսկրե և քարե սրինգները: Դրանք դասվել են սրբազան նվագարանների շարքին և հնչել պողաբերության պաշտամունքի հետ կապված արարողությունների ընթացքում: Քնարատիպ և լարային այլ նվագարանների առկայությունը մեզ առավելապես հայտնի է դեկորատիվ և կիրառական արվեստի առարկաների պատկերազրույթումից» (4, էջ 173):

Հին ժամանակներում հայոց մեջ տարածված նվագարանների մասին պատկերացում կազմում ենք նաև հայ միջնադարյան գրական բազմաբնույթ երկերից: Այսպես, արդեն իսկ Մուրբ Գրքի հայերեն թարգմանություններում առատորեն գործածվել են վաղ միջնադար-

յան Հայաստանում քաջ հայտնի նվագարանային մի շարք անվանումներ՝ քնար, տավիղ, սրինգ, ծնծղա, թմբուկ և այլն:

Միաժամանակ բազմաթիվ և բազմապիսի նվագարաններ, այդ թվում՝ փող, գալարափող, եղջերափող, գոս, փանդիոն և այլն, նաև նվագարանային երաժշտությունն իր տարբեր ձևերով՝ որպես հայոց կենցաղի անբաժանելի մաս, հիշատակել են Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Սերետը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Առաքել Սյունեցին, Հակոբ Դրիմեցին և հայ միջնադարյան մյուս ականավոր գործիչները՝ պատմագիրներ, հանճարեղ երաժիշտ-բանաստեղծներ:

Մովսես Խորենացին (V դար) իր «Հայոց պատմության» մեջ հիշատակում է տարբեր նվագարանների մասին, դրանց շարքում՝ գոսանների հնագույն և անհետացած **բամբիոն ու փանդիոնը**: Փանդիոնը (այլ ընթերցումներն են՝ փանդիոն, փանտիոն, փանդեոն, բամ-

## Գործիքագիտություն (ժողովրդական)

բիռն, բանդեռն, բանդիռն) լարային կոթավոր կամիթա-հար նվագարան է հին և միջնադարյան Հայաստանում: Փանդիռի մասին հնագույն տեղեկություններ հաղորդում է նաև Փավստոս Բուզանդը:

Հայկական հին թարգմանական գրականության էջերում հանդիպում են նաև «փանդեռնահարությունը» և «փանդեռնեղություն» խոսքերը: Փանդիռը ծանոթ է եղել նաև Կիլիկիայում: Այն հիշատակում է Գրիգոր Դ Տղան, «Ողբ Երուսաղեմի» քերթվածում: 'Դատելով միջնադարյան առանձին ձեռագրերի տվյալներից՝ հայ իրականության տարբեր շրջանակներում «փանդիռ» ասելով երբեմն նույնիսկ տարբեր նվագարաններ են հասկացել: Ուշ միջնադարում փանդիռը դուրս է եկել գործածությունից: Պետք է ենթադրել, որ փանդիռը նույնպես չորս կամ առնվազն երեքլարանի նվագարան է եղել գուսանին նվագակցելու համար: Փանդիռի կիրառման եղանակի, նրա լարերի թվաքանակի և լարվածքի մասին ճշգրիտ տեղեկություններ չեն պահպանվել: Պատճառը թերևս այն է, որ պատմիչների աշխատությունների բուն նպատակը ոչ թե նվագարանների ուսումնասիրումն է եղել, այլ պատմական փաստերի և իրադարձությունների նկարագրությունը, որոնցում անուղղակիորեն տեղ են գտել նաև կենցաղում մեծ տեղ գրադեցնող երաժշտությունն ու նվագարանները:

Փավստոս Բուզանդը և Եղիշեն (V դար) հիշատակում են **եղջերափող**, **թմբուկ**, **սրինգ**, **փող** (բազմատեսակ), **քնար** և **տավիղ** նվագարանները: Հովհաննես Երզնկացին (XIII դար) լուրջ դատողություններ է անում «չորեքաղեան» քնարի (հայկական ուղի) մասին: Առաքել Մյունեցին (XV դար) խոսում է ութլարանի քնարի մասին և առաջարկում հարվածային, փողային ու լարային նվագարանների յուրովի դասակարգում: Հակոբ Ղրիմեցին (XV դար) տալիս է «**սանդիք**» (սանթուր), «**ղանոն**» (քանոն) և «**արղանոն**» կոչվող բազմալար նվագարանների կատարման նկարագրությունը\*:

XII-XIII դարերից սկսած մանրանկարիչ-ծաղկողներն իրենց ձեռագրերի էջերում նկարում էին թե՛ տարբեր երաժիշտների և թե՛ իրենց ծանոթ հին ու նոր նվագարանների պատկերներ: 'Դրանց թվում՝ միակողմանի ու երկկողմանի մեծ ու փոքր թմբուկներ, դափ, դհոլ և ծնծղաներ, հովվական սրինգներ, շվի, կոնաձև փողեր և սրափողեր (գուռնաներ), պարկապուկներ ու եղեգնյա ավագափողեր ու երկար շեփորներ, սազ և սազատիպ նվագարաններ, տավիղ, ջնար և բազմալար տարբեր գործիքներ, իսկ ավելի ուշ՝ աղեղնային գործիքներ և՛ քյամանիներ ու քյամանչաներ: Պատկերների շարքում տեղ են գտել նաև փոքր անսամբլ հիշեցնող նկարազարդումներ\*\*:

Հայաստանում տարածված ու սիրված երաժշտական նվագարանների ուսումնասիրության բնագավառում հայ երաժշտագիտությունը բավական հաջողություններ է գրանցել: Թեև կոնկրետ գործիքագետ-մաս-

նագետների պակասն ակնհայտ է, այնուամենայնիվ, բնագավառը բավականաչափ ուսումնասիրվել է և նույնիսկ՝ տարբեր **ճյուղերով**:

Այսպես, ընդհանուր առմամբ և մասնավորապես բնագավառին անդրադարձել են երաժշտագետներ Կոմիտասը, Քրիստափոր Քուշնարյանը, Գարեգին Լևոնյանը, Արամ Քոչարյանը, Ռոբերտ Աթայանը, Նիկողոս Թահմիզյանը, Աշոտ Պատմագրյանը, Գևորգ Արմենյանը, Մարգարիտ Բրուտյանը, Ալինա Փահլևանյանը, Լիլիթ Երևցակյանը, Անահիտ Բաղդասարյանը, Անահիտ Կիրակոսյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Հասմիկ Ստեփանյան-Հարությունյանը, Նաիրի Խաչատրյանը: Երաժշտագետներին միացել են հնագետներ՝ Էմմա Խանգադյանը, Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը, էթնոլոգ-երաժիշտ-կատարողներ Անահիտ Յիգիկյանը, Էդուարդ Բարսեղյանը, Հովհաննես Դարբինյանը, Մարգարիտ Ոսկանյանը, Անուշ Կիրակոսյանը, արվեստաբաններ Աստղիկ Գևորգյանը, Նազենի Ղարիբյանը, արվեստաբան-երգիչ Հրանտ Խաչիկյանը, պատմաբան Արսեն Բորոխյանը, բանասեր Տորք Դալալեանը, լեզվաբաններ Հրաչյա Աճառյանը, Ներսես Մկրտչյանը, Սարգիս Պետրոսյանը, լրագրող Կամո Մկրտչյանը, որոնց աշխատասիրությունները հրատարակվել են գրքերի ու բառարանների տեսքով, գիտական ամսագրերում, մամուլում, հանրագիտարաններում, և մատենագիտության մեջ\*:

Գրվել են թեկնածուական թեզեր և դիպլոմային աշխատանքներ: Ներկայումս առավել լուրջ ուսումնասիրման կարիք ունեն լարային խմբի նվագարանները, թեև հատուկենա աշխատանքներ գրվել են քյամանչայի թառի, քանոնի և ընդհանուր տեղեկություններ սազի, քյամանիի, ուղի, սանթուրի, բաս-քանոնի և այլ նվագարանների մասին\*\*:

Անշուշտ, ազգային նվագարաններն իրենց բազմադարյա գոյության ընթացքում անընդհատ զարգացել, կատարելագործվել են թե՛ արտաքինով, թե՛ տեխնիկական ու հնչողական հատկանիշների առումով: Նվագարանագործ վարպետները անընդհատ փնտրել են հնչողության նոր երանգներ, լայնացնելով նվագարանների տեխնիկական հնարավորությունները, ստեղծելով նաև նվագարանների ընտանիքներ (բասից մինչև պիկոլո): Փորձեր են արվել և ներկայումս էլ արդեն կիրառվում են նոր տեսակի՝ հատկապես թավ (բասային) հնչողություն ունեցող նվագարաններ՝ նվագախմբի ցածր ձայնային ֆունկցիան ապահովելու նպատակով:

\* Նվագարանների մատենագիտություն – այս բնագավառում առաջին քայլերն են արվում. մեր կողմից կազմվում է «Հայկական ժողովրդական գործիքադարանի մատենագիտություն»-ը (26 էջ, ձեռագիր, անավարտ):

\*\* Թեկնածուական թեզեր են պաշտպանել Ա. Քոչարյանը (փողային և հարկանային գործիքներ), Ս. Հովհաննիսյանը (դուդուկ), Հ. Պիլիպյանը (պատմա-ազգագրական), իսկ դիպլոմային աշխատանքներ գրել են Ս. Հովհաննիսյանը (դուդուկ), Լ. Մամուկյանը (քանոն), Ա. Միրզոյանը (սրինգ), Մ. Բաղդասարյանը (Ժողովրդական կատարողական արվեստ):

\* Տվյալները վերցված են երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր Ն. Թահմիզյանի աշխատություններից (6. էջ 27-28):

\*\* Միջնադարյան մանրանկարչության մեջ նվագարանների և նվագածուների մասին տե՛ս (5. էջ 337-353):

Վերակառուցման միջոցով գործիքների վերափոխումներ են կատարել Վարդան Բունին (Բունիաթյան), վերջինիս աշակերտ Աշոտ Պետրոսյանը (Ուզբեկստանում), Կառլեն Միրզոյանը, Գեորգի Մինասովը (Մինասյան), կատարող-վարպետներ Սաշա Օզանեզազիլին, Մարտին Խաչատրյանը, Նշան Հուպյանը, Ջավեն Տերմենջյանը Ալբերտ Ղազարյանը, Օնիկ Գալստյանը, Հակոբ Խաչատրյանը, Միհրան Դեմիրճյանը, Սամվել Երկնափեշյանը, Գրիգոր Առաքելյանը, գործիքաշեն-վարպետներ Հակոբ Փայասյանը, Ալբերտ Ջաքարյանը, Ռուբիկ Ռուշանյանը, Կարեն Մուրադյանը, Աբել Արշակյանը և շատ ուրիշներ:

Կոմիտաս թանգարան-ինստիտուտի նախաձեռնությամբ 2017 թվականին հրատարակվել է «Հնչյուն և լռություն. երաժիշտը և նվագարանը դարերի հոլովություն» գիտական հոդվածների ժողովածուն և ցուցադրության պատկերագիրը, որտեղ քննարկվում են հայ երաժշտության պատմության մեջ երաժշտին և նվագարաններին առնչվող հիմնախնդիրներ՝ ըստ հնագիտական, մատենագիտական, լեզվաբանական, ազգագրական, մշակութաբանական և այլ աղբյուրների: Ժողովածուն անդրադառնում է նվագարանների ստեղծման և զարգացման պատմությանը, կենցաղավարմանը: Գրքի վերջում տեղադրված անվանացանկը, քարտեզը, գծանկարներն ու լուսանկարները ամբողջական պատկերացում են տալիս ավանդական նվագարանային մշակույթի մասին: Աշխատանքն անգնահատելի ներդրում է ազգային գործիքադարանի պատմության ճանապարհին:

Անշուշտ, նվագարանագիտությունը (органология) մեր իրականության մեջ հարուստ է եղել, սակայն, բնագավառը դեռևս բազում հետազոտությունների կարիք ունի:

1. Կիրակոսյան Ա. Ա., Հայկական ժողովրդական գործիքադարանի պատմության էջեր., //Երաժշտական Հայաստան, 1 (54) 2018, Եր., ԵՊԿ հրատարակչություն: *Kirakosyan A. A.*, Haykakan zhoghovrdakan gortsiqadarani patmuthyan ejjer. //Erazhshtakan Hayastan, 1(54) 2018, Yer., EPK hratarakchuthyun.
2. *Шушинский Ф. М.*, Народные певцы и музыканты Азербайджана., М.: Советский композитор, 1979. *Shushinskiy F. M.*, Narodnye pevtzy Azarbajdzhana., М.: Sovetskij kompozitor, 1979:
3. Բաղդասարյան Ա. Հ., Կիրակոսյան Ա. Ա., Հայկական ժողովրդական նվագարաններ., Եր., Կոմիտաս, 2008 թ. (հայ., ռուս., անգլ. լեզուներով): *Baghdasaryan A. H.*, *Kirakosyan A. A.*, Haykakan zhoghovrdakan nvagaranner., Yer., Komitas, 2008 th., (hay., rus., angl. lezunerov).
4. /Հնչյուն և լռություն. Երաժիշտը և նվագարանը դարերի հոլովություն., (գիտական հոդվածներ և պատկերագիրք), Եր., Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2017 թ., (անվտիմները՝ հայ., ռուս., անգլ. լեզուներով): /Hnchyun ev lr'uthyun. Yerazhisht' ev navagaran' dareri holovuytum., (gitakan hodvatsner ev patkeragirq)., Yer., Komitasi thanganaran-instituti hrata., 2017 th., (ampopunner` hay., rus., angl. lezunerov).
5. Գևորգյան Ա., Միջնադարյան երաժշտական գործիքները հայ մանրանկարչության մեջ., Բանբեր Սատենադարանի, 6, Եր., 1962 թ., էջ՝ 337-353: *Gevorgyan A.*, Mijnadaryan yerazhshtakan gortsiqner' hay manrankarchutyan mej., Banber Matenadarani., 6, Yer., 1962 th., ejj 337-353. Գևորգյան Ա., Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարչություն., պլքում., Եր., Հայաստան, 1978 թ.: *Gevorgyan A.*, Arhestnern u kentzagh' haykakan manrankarnerum., albom., Yer., Hayastan, 1978 th.
6. Թահմիզյան Ն. Կ., Երաժշտությունը Հին և Միջնադարյան Հայաստանում., Եր., Սովետական գրող, 1982 թ.: *Tahmizyan N. K.*, Yerazhshtutyun' Hin ev Mijnadaryan Hayastanum., Yer.: Sovetakan grogh, 1982 th.

Information about the author: ZOLOTOVA IRINA LEONID (born in Odessa, Ukraine). In 1971 graduated with honors from the Odessa State Conservatory after A. V. Nezhdanova on a class of a special piano, and also postgraduate study of the Leningrad State Conservatory after N. A. Rimsky-Korsakov (in profession “history of piano art”) which ended with honors in 1974. Since 1974 teaches in the YSC after Komitas. Students on her class of piano improvisation acted with concerts in Yerevan, Moscow, in the cities of Italy, Finland, Ireland, Germany. Since 1982 she is the member of the Union of composers of the USSR, since 1993 the member of the Union of composers and musicologists of RA, since 2008 the member of council of founders of Fund of assistance to cultural development and education in assistance of the Ministry of Culture of RA. She is the participant of international and the republic scientific conferences and symposiums took part in Moscow, St. Petersburg, Cambridge (USA), Tbilisi, Yerevan, etc. The author of more than 60 published scientific and methodical works. Among them monographs and education guidances (“Ruben Aharonyan”, “Kathy Malchasyan”, “Ways of development of pianism in Armenia”, “Master class at home: D. Shostakovich. Preludes, 34”, “From history of piano performance and pedagogics. The XX century (co-author Sh. H. Apoyan)”, “Children’s music of modern Armenian composers”, etc.) and also articles which were published in publishing houses of Moscow, St. Petersburg, Yerevan, in journals “Soviet Music”, “Musical Life”. The PhD doctor, professor (1991), head of the department of history, the theory of performance and pedagogics of the YSC (1990-2018).

Ամփոփում

Երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր Իրինա Լեոնիդի Չոլոտովա. - «Իգոր Յավրյան. 75-ամյակին»: Հեղինակը ներկայացնում է ԵՊԿ պրոֆեսորին որպես մանկավարժի բազմաթիվ գործունեության արդյունքում: Նա կրթություն է ստացել ՄՊԿ-ում պրոֆեսոր Լ. Վլասենկոյի դասարանում, այնուհետև իր մենակատարի, անգուզակյան կոնցերտաստերի ունակությունները զարգացրել ու փոխանցել է գրեթե կես դարյա, իր մանկավարժական փորձառության շնորհիվ՝ բարեկիրթ, գրագետ, հարուստ գիտելիքների պաշարով երաժշտական օժտվածությամբ, որպես վառ անհատականություն:

Summary

Musicologist, PhD Doctor, Professor of YSC Irina Leonid Zolotova. - “Dedicated to Igor Yavryan’s 75th Anniversary”. The author presents YSC’s professor as a pedagogue in his multi-disciplinary activity. He has received education at the MSC in the class of Vlasenko, then he developed the talents of soloist, unmatched concertmaster and transmitted to people his almost half a century of pedagogical experience showing himself as a vivid personality endowed with rich musical knowledge base.

**Նյութը պետրաստեց՝  
ԼԻԼԻԹ ԿԱՌԼԵՆԻ ԵՓՐԵՄՅԱՆԸ**

**Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու,  
Երևանի Կոմիտասի անվ.  
կոնսերվատորիայի դոցենտ  
E-mail. mikaelterlemez@gmail.com**

«Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամ՝ Կարինե Ազատի Զաղացպանյանի երաշխավորությամբ, ընդունվել է տպագրության՝ դեկտեմբերի 11-ին ներկայացրել է հեղինակը՝ սեպտեմբերի 3-ին

**ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՍԻՐԱՀԱՐԸ...**

**ՆՎԻՐՈՒՄ ԻԳՈՐ ՅԱՎՐՅԱՆԻ 75-ԱՄՅԱԿԻՆ**

Հանրահայտ դաշնակահար, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ պրոֆեսոր Իգոր Մարտինի Յավրյանը 2018 թվականի հոկտեմբերի 14-ին կդառնար 75 տարեկան: Եվ ճշմարիտ է, որ մահը յուրօրինակ վերածնունդ է հավերժության ճանապարհին. դա ամբողջությամբ դրսևորվեց այն օրերին, երբ դաշնակահարի հարազատները, բազմաթիվ ընկերներն ու աշակերտները հավաքվեցին «կլոր սեղանի» շուրջ՝ կիսելու իրենց կյանքի այն բախտորոշ ու հրաշալի պահերը, երբ ամեն մեկի ճակատագրի ուղին խաչվեց Իգոր Յավրյան մեծ անհատակունության հետ:

Կան մարդիկ, որոնք իրենց գոյությամբ միջավայր են ստեղծում, նրանք անտեսանելի նշանոց են սահմանում մարդկային տեսակի անկրկնելի ու (լինենք անկեղծ) անհասանելի անձնական որակներով: Սովորականի պես բոլորի հետ քայլում են փողոցով, բայց կարծես բնության օրենքով մի տեսակ առանձնանում են ամենքից: Բնավ ոչ իրենց կամքով, քանզի շատ մարդասեր են, շփման մեջ անմիջական ու հասարակ: Բայց ընտրյալներ են՝ լուսավոր, լույս առկայծող փարոսներ...

Նրանց մեղմ ժպիտը նույնիսկ առաջացած տարիքում գերում է մանկական պարզությամբ, հպանցիկ խոսքն անգամ խորությամբ է զարմացնում, նրբազգաց էությունն անհամբերի երանգներով է դրսևորվում, իսկ էլեգանտ արտաքինն ասես մազնիսական ուժով դեպի իրեն է ձգում հայացքները:

Այդպիսին էր Իգոր Յավրյանը: Վերջերս նայում էի «Դաշնամուրային տրիոյի» կազմում 1991 թվականի նրա ելույթի տեսագրությունը. հնչում էր արարչական հարմոնիայի աստված Մոցարտի երաժշտությունը: Եվ երբ խոշոր պլանով երևաց դաշնակահարի դեմքը, կայծակի պես մի խենթություն անցավ գլխովս՝ այսր նա Մոցարտին է նման... Բնչ կա որ, ցնորված մտքերն էլ երբեմն ճշմարտության լեզվով են բարբառում:

Փորձելով ուրվագծել Իգոր Յավրյան անհատակունության և արվեստագետի դիմանակարը, նրա դասավանդման մեթոդաբանությունը՝ ընտրեցինք ոչ սովորական մի ճանապարհ. դիմելով բազմաթիվ փորձագետների՝ նրա դպրոցն անցած ուսանողներին, ինչպես նաև գործընկերներին և ընտանիքի անդամներին, հատուկ «Երաժշտական Հայաստան» ամսագրի համար պատրաստեցի հարցազրույցների շարք, որտեղ մասնագիտական խնդիրներ են առաջադրվում: Հարցազրույցները գերազանցապես ներկայացված են առաջին դեմքով, ինչը թույլ է տալիս առավել ամբողջական ներկայացնել ռեսպոնդենտի (զրուցակցի) տեսակետը:

Հողվածում առաջին անգամ ներկայացված են Ի. Յավրյանի ուսանողների անձնական տվյալները, որոնց շնորհիվ տրվում է նրա դաշնամուրային դպրոցը ներկայացնող մասնագետների գործունեության համապարփակ նկարագիր:

**ԼԻԼԻԹ ԵՓՐԵՄՅԱՆ**

Իգոր Մարտինի Յավրյանը ծնվել է 1943 թվականին Թբիլիսիում: 1957-ին ավարտել է Թբիլիսիի 1-ին երաժշտական դպրոցը, 1961-ին՝ Թբիլիսիի 2-րդ՝ Ձ. Փավլիաշվիլու անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը: 1961-1967 թթ. սովորել է Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում, պրոֆեսոր Լև Վլասենկոյի մասնագիտական դասարանի առաջին ուսանողն է: 1980-1984 թթ. եղել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ (դեկավար՝ պրոֆեսոր Յուրի Սուրենի Յայրապետյան):

1969-1972 թթ. դասավանդել է Սուխում քաղաքի երաժշտական ուսումնարանում, հանդիսացել Աբխազիայի պետական ֆիլհարմոնիայի մենակատար և կոնցերտմայստեր: 1972-ից մինչև կյանքի վերջն աշխատել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, 1996-ից՝ պրոֆեսոր: 2002-2003 թթ. եղել

# Ե Պ Կ երախտավոր պրոֆեսորները

է մասնագիտական դաշնամուրի ամբիոնի վարիչ, 2003-2012 թթ.՝ դաշնամուրային ֆակուլտետի ղեկան, 2012-ից մինչև կյանքի վերջը կրկին վերընտրվել է մասնագիտական դաշնամուրի ամբիոնի վարիչ:

Որպես մենակատար հանդես է եկել Թբիլիսիի, Երևանի, Յալթայի, Վորոշիլովգրադի, Սուխումի, Կազանի սիմֆոնիկ նվագախմբերի հետ: Համատեղ ելույթներ է ունեցել նշանավոր երաժիշտներ Ստիվեն Իսերլիսի, Յուրի Բալյանի, Աբգար Մուրադյանի, Արաքս Դավթյանի, Սվետլանա Նավասարդյանի, Հրաչյա Հարությունյանի, Մեդեա Աբրահամյանի, Բարսեղ Թումանյանի և այլոց հետ:

Դաշնամուրային տրիոյի կազմում (Ջոն Գևորգյանի և Արա Բոգդանյանի, հետագայում՝ Լևոն Մամիկոնյանի հետ) հանդես է եկել Իսպանիայում, Ավստրիայում, Ռուսաստանում, Գերմանիայում: Մենահամերգներով, առանձին կատարումներով և անսամբլների կազմում ելույթներով ներկայացել է Հայաստանի հեռուստատեսությամբ, ինչպես նաև տարբեր համերգային դահլիճներում: Հայ կոմպոզիտորների ավելի քան չորս տասնյակ ստեղծագործությունների կատարող է, այդ թվում՝ առաջին կատարող: «Մեկուդիա» ֆիրման թողարկել է նրա ծայրահասակառակը, ունի Հայկական Ռադիոյի ֆոնդային ձայնագրություններ: Երկար ժամանակ խորհրդային իշխանության կողմից չընդունվող կոմպոզիտոր Ալեմդար Կարամանովի դաշնամուրային ստեղծագործությունների առաջին կատարողն է:

Իգոր Յավրյանը վերջին տասնամյակներում իրեն ամբողջությամբ նվիրեց դասավանդմանը, ստեղծեց իր «դաշնամուրային դպրոցը», ունեցել է մոտ 150 ուսանող՝ 85 կամերային անսամբլի, 60-ից ավելի՝ մասնագիտական դաշնամուրի դասարանում: Նրանցից շատերը հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիրներ և դիպլոմանտներ են, նշենք Սարիաննա Շիրինյանի, Աննա Սարկիսովայի, Հրանտ Բագրազյանի, Մարիա Մաթևոսյանի, Կարինե Գիլանյանի, Նարեկ Ղազարյանի, Արմինե Ահարոնյանի, Տիգրան Բերկեյանի անունները:

Ունի մի շարք գիտամեթոդական աշխատանքներ, այդ թվում՝ «Фортепианные сонаты Бетховена в редакции Шнабеля (сравнительный анализ) и их место в свете современных проблем исполнительства»: Կատարել է Արմեն Սմբատյանի դաշնամուրային «Վարիացիաների» և «Չակոնա և Ֆուգա» դաշնամուրային Տրիոյի խմբագրությունը, ինչպես նաև փոխադրել է 2 դաշնամուրի համար հատվածներ Ղազարոս Սարյանի «Պաննոյից»:

2014-ին Ի. Յավրյանին շնորհվել է ՀՀ Արվեստի վաստակավոր գործչի կոչում:

## Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր

### ԼՅՈՒԴՄԻԼԱ ԱՂԱՎԵԼՅԱՆ\*

Ես ինքս շատ եմ հետաքրքրված դասավանդման մեթոդաբանության հարցերով, սովորել եմ փայլուն մասնագետների՝ Վիլլի Մարգարյանի, Էդուարդ Մամանի դասարաններում, և կարող եմ ասել, որ Իգոր Մարտինովիչը շատ անսովոր կերպով էր աշխատում: Նշեմ նրա մոտեցումներից մեկը. նույն ստեղծագործությունը նա սովորություն ուներ հանձնարարելու մի քանի ուսանողի՝ 2-5 տարվա տարբերությամբ, այսինքն՝ մեկ ուսանողի կոնսերվատորիական կենսագրության ընթացքում նույն գործը պիտի անցնեին մի քանի «յավրյանականներ»: Ավագները, ովքեր որպես ասիստենտ, պարապում էին կրտսեր կոլեգաների հետ (նա բոլորիս «կոլեգա» էր անվանում), իրենց մեկնաբանման օրինակով փոխանցում էին դասախոսի մոտեցումները մտահղացման, դրամատուրգիական զարգացման, ապիկատուրայի, պեդալի, դինամիկ նշանների և այլ հարցերի շուրջ: Բայց երբ այդ ամենը ներկայաց-

վում էր Յավրյանին, ով անձամբ էր ղեկավարել նախորդ կատարումը, ամեն ինչ հիմնատակ փոխվում էր՝ ստեղծագործության բջջային մակարդակից մինչև ամբողջական տեսլականը: Հերքվում էր գոնե այն պատճառով, որ մեխանիկորեն ընդօրինակված էր, ոչ թե նորովի իրապես ապրված կոնկրետ կատարողի կողմից:

Նա անընդմեջ որոնումների մեջ էր՝ փորձում էր գտնել իդեալական տարբերակը, և իր հետ այդ փնտրությունների ճանապարհն անցնում էին նաև ուսանողները: Երբեմն ամբողջ դասի ընթացքում աշխատում էինք ընդամենը մեկ հնչյունի կամ համահնչյունի վրա՝ տուշեի, տեմբրի, բնույթի, կերպարի տեսակետից: Լարված մտածում էր, ջղայնանում, երբեմն նույնիսկ բղավում, որ չի ստացվում, այն չէ, նորից փորձիր, նորից... Կենդանի ստեղծագործական պրոցես էր, բայց ոչ երբեք ինքնանպատակ, իսկական խորը երաժշտի ապրումներ էին դրանք: Ու ինչպիսի հրճվանք էինք ապրում, երբ վերջապես հնչում էր. «Ապրենս, ահա սա՛ էի ուզում, մտքումդ ֆիքսիր այս տարբերակը»: Երջանիկ էինք ուղղակի: Մենք հատորներ էինք ուսումնասիրում տրվյալ կոմպոզիտորի հայրենիքի, պատմական ժամանակաշրջանի, կենսագրության, ոճի, ստեղծագործության պատմության, թեմայի և այլնի վերաբերյալ: «Ինչպե՞ս թե, դա չե՞ս կարդացել, հենց այսօր կմտնես ինձ մոտ՝ կվերցնես գիրքը»: Ամոթից գետինն էինք մտնում, աշխատում էինք ոչինչ բաց չթողնել: Հարուստ գրադարան ուներ, չէր խնայում՝ արժեքավոր գրքերն ու այլոսները տրամադրում էր մեզ:

Ահավոր վախենում էինք դասին վատ ներկայանալ, թերանալ ինչ-որ բանում: Խիստ էր, բայց ոչ ավտորի-

\* Ծնվել է 1968 թվականին Երևանում: Երաժշտական կրթությունն ստացել է Պ. Չայկովսկու անվ. երաժշտական դպրոցում (դաս.՝ Շվա Հակոբյան, Վիլլի Մարգարյան): 1986-ին ընդունվել է ԵՊԿ՝ Էդուարդ Մամանի մասնագիտական դասարան, որի արտասահման մեկնելուց հետո 2-րդ կուրսից շարունակել է Իգոր Յավրյանի մոտ և ավարտել նաև ասպիրանտուրան: Մինչ օրս դասավանդում է ԵՊԿ-ում (եղել է Յավրյանի ասիստենտը) և Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ-ում:

տար, ուղղակի չէր հանդուրժում «ֆալշը» կյանքում և արվեստում: Չափազանց նրբանկատ էր ամեն հարցում, կյանքի բարդ իրավիճակներում մեր ամենամտերիմ ու հոգատար խորհրդատուն էր:

Եզակի գործեր էինք կատարում, որ այն տարիներին՝ 80-90-ականներին, Հայաստանում դեռ ոչ ոք չէր հնչեցրել, ձայնագրություններն էլ կամ ընդհանրապես չկային, կամ եզակի էին: Բախի «Ֆուգայի արվեստի» դաշնամուրային տարբերակը (Գրիգորի Սոկոլովի մեկնաբանությունը շատ էր հավանում), Ի. Ստրավինսկու «Capriccio»-ն, Հինդեմիտի «Ludus Tonalis»-ը, որ հայ կատարողներից միայն Սվետլանա Նավասարդյանն էր ձայնագրել... Հիշում եմ, Գագիկ Հովունցի «Մոնոգրամները» ձեռագիր վիճակում էին, դեռ տպագրված չէին, բաժանեց բոլորիս, ու 10 պիեսից բաղկացած ցիկլըն առաջին անգամ մենք կատարեցինք: Լևոն Չաուշյանի, Արմեն Սմբատյանի, իր ընկերոջ՝ Ալեմդար Կարամանովի գործերն էինք նվագում, Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն Իգոր Յավրյանը փոխադրեց 2 դաշնամուրի համար, այն նույնպես հնչել է նրա ուսանողների կատարմամբ:

Հարցնում էր, թե աշակերտն ինչ կուզենա նվագել, և եթե վերջինս պատասխաներ, որ սպասում է դասախոսի հանձնարարականին, շատ էր վրդովվում. ուրեմն դու երազանք չունես, նոր գաղափար չունես, թաքուն փայփայած ցանկությունն չունես կատարելու այս կամ այն գործը: Երաժշտությանը սիրահարված այդ մարդու համար դա աներևակայելի մի բան էր: Իմ դասը տևում էր 3-4 ժամ անընդմեջ, չէինք զգում, թե ինչպես թռավ ժամանակը: Բայց երբ հավաքում էի նոտաներս ու պատրաստվում դուրս գալ, ասում էր. «Էս ո՞ւր, նստիր, մյուսներին կլսես, քո կարծիքը շատ եմ կարևորում, կոլեգա»: Մասնագիտական դասարանի ուսանողները և նույնիսկ շրջանավարտները «հյուր էին գալիս» դասը լսելու, ընդհանուր քննարկմանը կարծիք հայտնելու, իրար խրախուսելու, ոգևորելու, նաև քննադատելու, այսինքն՝ իրական ստեղծագործական մթնոլորտ ստեղծելու՝ մեր մեծ Ուսուցչի առաջնորդությամբ:

**ԿԱՐԻՆԵ ԳԻԼԱՆՅԱՆ\***

«Հաջողությունը բոլորին անսպասելի է այցելում, բայց միշտ պետք է պատրաստ լինել ընդունելու նրան», – ասում էր Իգոր Յավրյանը: Եվ այդպես էլ եղավ: Իմաստուն, անչափ նրբազգաց իմ Վարպետ: Իրապես երջանիկ են նրա աշակերտները, որոնք բախտ ունեցան լսելու Յավրյանի անմոռանալի դասարանային կատարումները: Միևնույն ժամանակ, երիտասարդներին նա երբեք չպարտադրեց սեփական մեկնաբանումները, այլ ձգտեց առավելագույնս բացահայտել յուրաքանչյուրի հնարավորությունները՝ նվիրաբերելով նրանց գույների և տեխնիկական հնարքների անսպաս մի զինանոց՝ ներկնապանակ:

\* Ծնվել է 1981-ին Երևանում: 1998թ. Պ. Չայկովսկու ՄՄԵԴ ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա՝ պրոֆ. Ի. Մ. Յավրյանի մասնագիտական դասարան՝ նրա մոտ ավարտելով նաև ասպիրանտուրան: 2005-ին ընունվել է Լյուբեկի Կոնսերվատո-

Մեզ՝ ուսանողներիս, միշտ դիմում էր «կոլեգա»... մի կողմից՝ դա անչափ հաճելի էր, մյուս կողմից՝ կաշկանդում էր պատասխանատվությամբ, քանի որ մեզանից և ոչ մեկը երբևիցե չէր խիզախի Իգոր Մարտինովիչի հետ հավասար հարթության վրա իրեն պատկերացնել անգամ: Նա սարսափելի վրդովվում էր անմիտ, մեխանիկական նվագից՝ նմանեցնելով այն տպագրական մեքենայի կտկտոցի:

«...Հիմա գնա՛, ու առանց սեփական մեկնաբանության չվերադառնա՛ս», – ասաց ինձ, երբ ես 17 տարեկան էի՝ երկրորդ կուրսի ուսանողուհի: Այդ պահին առաջին անգամ գիտակցեցի, որ գեղանկարչության մասին իմ երազանքները կարող եմ վերջապես կյանքի կոչել դաշնամուրի հնչյունների միջոցով: Հենց այդ պահից ազատվեցի մասնագիտության ճիշտ ընտրության մասին իմ տանջալի կասկածներից, և ինձ համար բացվեց չափազանց բեղմնավոր աշխատանքի ու վերելքի շրջան:

Այսօր էլ, մոտենալով գործիքին, լինի դա համերգ, դասաժամ կամ ուղղակի պարապմունք, ամեն անգամ ներքուստ հարց եմ տալիս, թե ինչ կասեր Իգոր Մարտինովիչը, և ինքս ինձ հույս եմ տալիս, որ գտել եմ հենց այն լուծումը, որն ինքը կհուշեր: Չնայած իր մտահոգումներն անկանխատեսելի էին, դրանք հաճախ անակրնկալի էին բերում սուր մտքի անսպասելի փայլատակումներով...

**ՏԻԳՐԱՆ ԲԵՐԿԵԼՅԱՆ\***

...Երբ հարցնում եք Յավրյանի դասավանդման մեթոդաբանության մասին, ես դժվարանում եմ համակարգված մի տեսակի բերել ասելիքս. ըստ իս նրա մեթոդը չի եղել ինքնանպատակ՝ մեթոդ հանուն մեթոդի: Նրա ելակետը երաժշտական նյութն էր՝ ամեն պահին փոփոխվող: Երբեք չէր պարտադրում նվագել իր պես, դա հնարավոր էլ չէր, որովհետև երբ դաշնամուրով ինչ-որ բան էր ցուցադրում, դա հրաշքի էր նման: Այդ պա-

րիս (Hochschule) ամերիկացի հանրահայտ դաշնակահար՝ պրոֆ. Ջեյմս Տոկլոի դասարան: Արժանացել է DAAD կրթաթոշակի և 2011-ից աշխատում է Բեռլինի “Hanns Eisler” Musikhochschule-ում, 2013-ից՝ նաև Յեհուդի Մենոխինի հիմնադրած Internationale Musikakademie տաղանդավոր երիտասարդ երաժիշտների Ալադեմիայում որպես դոցենտ և կոնցերտմայստեր: Համագործակցել է Բեռլինի լավագույն երաժիշտների հետ որպես մենակատար, նվագակցող, կամերային անսամբլի և նվագախմբի արտիստ: Համերգներով բազմիցս հանդես է եկել Berliner Philharmonie, Konzerthaus Berlin և այլ դահլիճներում: Konzerthaus նվագախմբի առաջին կոնցերտմայստերի՝ Միխայել Էրբալերենի, Gewandhausorchester նվագախմբի անդամների և այլ պրոֆեսորների հետ վարպետության դասեր է տալիս «Կամերային երաժշտություն» մասնագիտությամբ: Հումբոլդտ Համալսարանում Կոմիտասի 140-ամյակը կազմակերպելու և հայ երաժշտությունը տարածելու համար արժանացել է Կոմիտասի մեդալի:

\* Ծնվել է 1988-ին Ռուսաստանում (Նիժնի Նովոգորոդ): Երաժշտական կրթությունն ստացել է Բ. Քուլնարյանի, այնուհետև Պ. Չայկովսկու անվ. (դաս.՝ Մարգարիտա Հակոբյան) դպրոցներում: 2006-ից 6 տարի ուսանել է Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի Ի. Մ. Յավրյանի մասնագիտական

հին թվում էր, որ իրական կատարելությունը սա է, որ կա՝ ավելի լավ նվազել հնարավոր չէ: Երաժշտական ժամանակահատվածի նրա մեկ միավորը հագեցած էր մաքսիմալ էմոցիոնալ լարվածությամբ, իմաստային շերտերի խորությամբ: Բայց դա նրա սեփական պատմությունն էր, իսկ մեր մեկնաբանումը պետք է ծնվեր մեր մտքերից, մեր ապրումներից ու զգացմունքներից...

Այնքան բան կա ասելու ուսուցչի մասին, բայց ուզում եմ հատկապես մի դրվագ հիշել մեր հերթական, արդեն ավանդական դարձած Նոր տարվա հավաքույթից:

Ինչպես միշտ, մի մեծ ընտանիքի նման, այս անգամ ևս Իգոր Մարտինովիչի հյուրընկալ տանը Ամանորի կապակցությամբ հավաքվել էին հեղինակավոր պրոֆեսորներ, հայտնի կատարողներ, երիտասարդ, նոր ավարտած ասպիրանտներ և մենք՝ կոնսերվատորիայի ուսանողներ: Բոլորը, անկախ տարիքից և հասարակական դիրքից, հավասարը հավասարի պես շփվում էին միմյանց հետ ազատ ու անկաշկանդ մթնոլորտում՝ ուրախ, սրամիտ կատակներով ու կենացներով էլ ավելի բարձրացնելով տոնական տրամադրության «գրադուրը»: Փաստորեն, խմիչքն արդեն սկսել էր ազդել ինձ վրա, որովհետև ես, անցնելով կոռեկտության բոլոր սահմանները, հանկարծ որոշեցի բոլորի ներկայությամբ Իգոր Մարտինովիչին ասել «ամբողջ ճշմարտությունը» այն մասին, թե ներքին կարգով ինչպիսի մականուն են նրան կպցրել ուսանողները...

Սկսեցի փոքր նախաբանից, դե գիտեք, ասացի, որ տարվա սկզբին Դաշնամուրային բաժնի ղեկնաստի մոտ միշտ մարդաշատ է լինում. ուսանողները պետք է բախտորոշ որոշում կայացնեն՝ ընտրեն մասնագիտության ուսուցչին: Հասկանալի է, թե որքան նուրբ լարերի վրա պետք է կարողանա խաղալ այս ամենի համար պատասխանատու ֆակուլտետի ղեկանը, որքան ներվեր ու հաստատակամություն է պահանջվում Յավրյանից բոլոր կողմերին գոհացնելու համար: Եվ ահա ծայրահեղ լարված այս վիճակում նրան է դիմում ուսանողներից մեկը՝ շատ անտեղի հարցով: Թե կոնկրետ ինչի մասին է խոսքը, այդքան էլ կարևոր չէ, կարևորն այն է, որ սովորաբար համբերատար Իգոր Մարտինովիչի ջղայնությունը հրաբխի պես այնպես է ժայթքում, որ տղան վայրկյանապես հայտնվում է միջանցքում ու ապշած անսպասելի շրջադարձից՝ բարեկիրթ ղեկանի բղավոցից, նույն պահին բնորոշիչ մի մականուն է հորինում. «Դեկանազավր»...

Ավարտեցի ու ինձանից շատ գոհ նայեցի սեղանակիցներին... Մի պահ քար լռություն տիրեց տոնական սեղանի շուրջ: Բայց մյուս վարկյանին այն պայթեցրեց

նույն ինքը՝ այս պատմության հերոսը մի այնպիսի լիաթոք ու վարակիչ ծիծաղով, որ հյուրերն ուղղակի փվեցին անզուսպ հռիռոցի ալիքից: «Դեկանազավր», – կրկնում էր Իգոր Մարտինովիչը ու նորից փոթկալով էլ ավելի մեծ ծիծաղի ալիք բարձրացնում: Վերջապես, երբ բոլորը հանդարտվեցին, ինձ ասաց. «Տաղանդավոր տղա է երևում, ասա, թող մտնի ինձ մոտ,՝ ուզում եմ իրեն օգտակար լինել»...

**ԼՈՒՍԻՆԵ ՀԱԿՈՐՅԱՆ\***

Իգոր Յավրյանի դասարանում հայտնվեցի 90-ականների սկզբներին: Հայաստանի համար դժվար և ծանր տարիներ էին՝ շրջափակում, էներգետիկ ճգնաժամ, սոցիալական ծանր իրավիճակ... Մի խոսքով, գոյատևման պայքարի տարիներ:

Սովորաբար ձմռան ամիսներին ուսումնական հաստատությունների մեծ մասը՝ այդ թվում երաժշտական դպրոցները, ուսումնարանները, համալսարանները դադարում էին գործել, մենք էլ՝ աշակերտներս, «վայելում էինք» մեզ պարտադրված արձակուրդները: Այսպես, ամանորյա տոներից տասն օր անց շատ-շատերի նման հովհարային անջատումների շնորհիվ մեզ սառնարանային թարմությամբ ապահովող մեր բնակարանում հնչեց հեռախոսազանգ: Ուսուցիչս էր. անհանգստացած հետաքրքրվում էր, թե ո՞ր եմ կորել, կամ չլինի՞ թե «անցել եմ ընդհատակ»... Պարզվեց, որ ձմեռվա ամիսներին երաժշտական «դպրոցս» տեղափոխվել է Իսահակյան 18ա հասցե. Ի. Յավրյանի բնակարանը վերածվել էր ձմեռային դպրոցի:

...Հիշում եմ, որ 1994 թվականի սովորական մի օր հայրս հայտնեց, որ Իգոր Մարտինովիչը պատրաստվում է շուտով մեկնել Հայաստանից և առաջարկել է մտածել նոր ղեկավարի մոտ տեղափոխվելու մասին: Երաժշտական կատարողական լուրջ աշխարհում միայն վերջերս հայտնված պարմանուհուս համար այս լուրը նման էր վերահաս տարերային աղետի: Սակայն, ինչպես ասում էր բույզակովյան հերոսը. «Արյունը մեծ բան է...», Իգոր Մարտինովը հավատարիմ մնաց իր

\* Ի. Յավրյանի դասարանում սովորել է 1993-1996 թթ.՝ Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտական դպրոցում, 1996-2003 թթ.՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում և ասպիրանտուրայում: 2005-ից Ի. Յավրյանի ԵՊԿ մասնագիտական դասարանում աշխատել է որպես ասիստենտ, իսկ սկսած 2011-ից մինչ օրս Կոնսերվատորիայի մասնագիտական դաշնամուրային ամբիոնի դասախոս է: Դասավանդում է նաև Ա. Սպենդիարյանի և Ա. Տիգրանյանի անվ. երաժշտական մասնագիտական դպրոցներում:

Հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր է: Հանդես է եկել Երևանի սիմֆոնիկ, Հայաստանի Կամերային, «Թալայան ֆետա»-ի նվագախմբերի հետ, ունեցել հյուրախաղեր Շվեյցարիայի մի շարք քաղաքներում: 2010-ին եղել է Ս. Էլմասի անվ. երիտասարդ երաժիշտ-կատարողների 5-րդ մրցույթի կազմկոմիտեի նախագահ: Իրականացրել է Տ. Մանուրյանի, Ա. Տերտերյանի, Ա. Ոսկանյանի, Յ. Յակուլովի, Մ. Բրոնների, Ս. Էլմասի ստեղծագործությունների հայաստանյան և համաշխարհային պրեմիերաները: 2005 թ. ձայնագրել է Ս. Էլմասի դաշնամուրային ստեղծագործությունների CD:

հոր՝ կոտորածից փրկված վանեցի Մարտին Յավրյանի այն երազանքին, որ երեխաներից գոնե մեկը հաստատվի Հայաստանում և շենագնի հայրենիքը:

Գրեթե քառորդ դար տևած իմ շփումն Ի. Յավրյանի հետ սկսվեց ուսումնառության հազեցած տասը տարիներից. ինչպես ասում են. «դժվար է ուսման մեջ, հեշտ՝ կովի դաշտում» խորագրի ներքո: Մոսկովյան և պետերբուրգյան կատարողական դպրոցների ավանդույթների կրողը լինելով՝ էությանը կատարելության ձգտող Ի. Յավրյանը դասարանում սահմանել էր բարձր նշանոց: Խստապահանջ էր, բայց և միաժամանակ առիթը բաց չէր թողնում կատակելու և իր կողմից արված դիտողությունները համեմելու սրամտություններով: Հումորը այն հարն էր, որը թույլ էր տալիս աշակերտին կամ ուսանողին հաղթահարել դժվարությունները, արագ և դյուրին յուրացնել նորը: Ժամանակ առ ժամանակ դասընթացը լիցքաթափելու այս փորձերը ծնում էին թևավոր խոսքեր, որոնք այնուհետև շատ արագ շրջանառության մեջ էին մտնում և լայնորեն կիրառվում սաների կողմից, ասես դառնում մովսեսյան տասը պատվիրաններին համարժեք ճշմարտություն:

Կատարողական բարձր չափանիշներով առաջնորդվող պրոֆեսիոնալի անզիջում մոտեցումով Իգոր Յավրյանը միշտ ողջունում էր և մեծ նշանակություն տալիս երիտասարդ սաների նորովի մեկնաբանություններին, ստեղծագործական որոնումներին, հոգու և մտքի «խիզախումներին»: Գեղեցիկը նկատող և ըստ արժանվույն գնահատող Ի. Յավրյանն արվեստագետի քննախույզ դիտողականությամբ փորձում էր վեր հանել և տեսանելի դարձնել արդի արվեստում տեղ գտած և ժամանակի թելադրանքով պայմանավորված նորարարական միտումները, ձևակառուցողական նոր լուծումները, բարձր գեղագիտական և բովանդակային արժեքները: Նշեմ, որ Ի. Յավրյանն ուսանողական տարիներից սկսած եղել է մոսկովյան իր դասընկերների ստեղծագործությունների առաջին կատարողն ու դրանց բեմական կյանք հաղորդողը, այնուհետև հայաստանյան գործունեության շրջանում իրականացրել է բազմաթիվ պրեմիերաներ:

Նորի հանդեպ ունեցած նրա հետաքրքրությունը փոխանցվում էր նաև մեզ, և վաղ թե ուշ մեր նվագա-ցանկում հայտնվում էին ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Դասարանում Ի. Յավրյանն իր կատարումներով սկսնակներին ծանոթացնում էր երգային հնչյունի բազում հնարավոր նրբերանգներին, բացահայտում և տեղափոխում հնչյունապայման այլ տարածաչափական աշխարհներ, փորձում էր սաներին հաղորդակից դարձնել այն խորը զգացմունքային աշխարհին և խոհափիլիսոփայական մտորումներին, որոնք իրենց մարմնավորումն էին գտել մեծերի ստեղծած համաշխարհային գոհարներում:

Տարիների փորձառությամբ ձեռք բերված մասնագիտական հմտությունները կիսելուց բացի, մեր ուսուցիչը առանձնահատուկ նշանակություն էր տալիս արվեստի այլ ճյուղերի՝ գրականության, գեղանկարչության գոհարների ուսումնասիրությանը՝ դրանով իսկ նպաստե-

լով երիտասարդ երաժշտի մտահորիզոնի ու աշխարհընկալման ընդլայնմանն ու հարստացմանը: Արվեստների մի շարք ուշագրավ նմուշներն իրենց ներգործուն ուժի հզորությամբ պետք է, որ «վերածրագրավորեն» սաների ամբողջ զգայական համակարգը ու ապահովեն մտքի, երևակայության ազատ թռիչքը: Մեր՝ սաներիս գիտելիքների պաշարն աստիճանաբար հարստանում էր հենց այսպիսի թռիչքների փորձառությամբ, որոնք, սակայն, դասարանում երբեմն ավարտվում էին ոչ այնքան բարեհաջող «վայրէջքներով»:

Ասում են՝ յուրաքանչյուր ստեղծագործող մի առանձին աշխարհ է: Մանկավարժ Ի. Յավրյանը, կարծես, մարդ-մոլորակ տեսակ էր՝ երկու բևեռներով: Իրարամերժ, հակասական զգացմունքներ առաջացնող աշխարհ, որտեղ համատեղվել էին մեղմ և ջերմ ծնողական հոգատարությունը, քիչ անց՝ սառն ու անողորմ դատավորի վճռականությունը, ապշեցնող նրբանկատությունն ու կծու հեզմանքը: Գեղեցիկն ըստ արժանվույն գնահատելու, տաղանդավորն ու հնարամիտը դրվատելու, դրանցով սքանչանալու առանձնահատկությանը «հակակշռում էին» ժամանակ առ ժամանակ հրաբխի խառնարանում եռացող լավաները՝ ցասման պահերը:

Բայց որքան Ի. Յավրյանը պահանջկոտ էր իր սաների նկատմամբ, նույնքան ինքնաքննադատական և անողորմ էր սեփական անձի հանդեպ: Տպավորվել է այն փաստը, որ միշտ հետադարձ հայացք էր ձգում, վերլուծում իր կողմից կամա թե ակամա թույլ տված վրիպումները, նույնիսկ տարիներ անց բարձրաձայն քննարկում և ավստասնք էր հայտնում դրանց վերաբերյալ: Կրտսեր գործընկերոջ կարգավիճակում հայտնվելով՝ մինչ օրս էլ խորհում եմ այդօրինակ իմաստության, լայնախոհության դրսևորումների մասին, շարունակում ինձ համար բացահայտել Ի. Յավրյանն ուսուցիչ-պրոֆեսիոնալիս և մարդանհատին, շարունակում սովորել:

Միգուցե, ասելիքս ոմանց թվա չափազանցված...

Ինչպես ինքը՝ Յավրյանն էր ասում. «Կատակում միայն մի մասն է կատակ»... Համարյա երկուս ու կես տասնամյակի բազմազան ու խայտաբղետ իմ հիշողություններում ճշմարտության չափաբաժինը եթե այսօր խոսքերս երանգավորել է երախտագիտությամբ ու ակնածանքի զգացումով, կարծում եմ՝ ներդրած լուծման հիքավի եղել է արժեքավոր ու ծանրակշիռ: Եվ արժեքավոր այն անկեղծությամբ ու նվիրվածությամբ, որով Ի. Մ. Յավրյանը միշտ հավատարիմ մնաց իր՝ ուսուցչի կոչմանը, անդադար ծառայեց արվեստներից ամենաանմեկնելիին՝ Նորին Մեծություն ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆԵԼ:

**ՄԱՐԻԱՆԱ ՇԻՐԻՆՅԱՆ\***

Իգոր Մարտինովիչ Յավրյանն իր անսահման ինտելեկտով ինչպես երաժշտական, այնպես և լայն՝ ընդհանրական իմաստով, առանձնահատուկ տեղ էր գրավում իմ կյանքում: Մի մարդ, որն ինձ սովորեցրել է ոչ

\* Ծնվել է 1978 թ. Երևանում, երաժիշտների ընտանիքում: Ավարտելով Պ. Չայկովսկու անվան ՄՄԲԻ (դաս.՝ Մ. Հակոբյան)՝ ընդունվել է Երևանի Կոմիտասի անվ. պետական

# Ե Պ Կ երախտավոր պրոֆեսորները

միայն կոռեկտ կարգալ նոտային տեքստը, այլև հասկանալ այդ տեքստի ներքին իմաստը և մարդկային խորությունը: Նա մեր՝ ուսանողների միջոցով երաժշտական ստեղծագործությունների մեջ շունչ էր ներդնում, ինչպես նաև ոգևորություն և սեր էր ներարկում մեզ կյանքի և երաժշտության հանդեպ, ինչը մեծ նվեր էր մեզ համար: Անփոխարինելի անձնավորություն էր: Բարեբախտաբար, Իգոր Մարտինովիչի կրթած սերունդների շնորհիվ այդ ամենը դեռ կշարունակվի ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհով մեկ, քանի որ նրա սաներն այսօր դասավանդում են աշխարհի տարբեր անկյուններում: Ես շատ շնորհակալ եմ, որ հնարավորություն եմ ունեցել թեև կարճ (1,5 տարի), բայց շատ կարևոր մի ժամանակահատված աշխատել Իգոր Մարտինովիչի հետ: Նա իմ սրտի խորքում մի առանձնահատուկ տեղ ունի...

Երբեք չեմք մոռանա...

## ԷԼԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ\*

Մեր առաջին հանդիպմանը Իգոր Մարտինովիչը չափազանց խիստ դասատուի տպավորություն թողեց: Բայց արդեն մյուս օրը, դասի ընթացքում, իմ այդ թյուր կարծիքը բոլորովին փոխվեց. կարճ ժամանակում նա դարձավ իմ հարազատ և մտերիմ բարեկամը: Անհամբերությամբ էի սպասում, թե երբ եմ գնալու դասի:

Իգոր Մարտինովիչը շատ կատակասեր էր, հաճախ ակնարկում էր գենետիկորեն ձեռքերիս չափազանց փոքրը լինելու հանգամանքը, ասում էր. «Տառիկին կրառենս»:

Նա հետաքրքիր պատմություններ էր պատմում կոմպոզիտորների, նրանց ստեղծագործությունների մասին: Ինձ ստիպում էր ինքնուրույն մտածել, գտնել և առաջարկել սեփական մեկնաբանություններն ու լուծումները: Դա իսկապես բարդ էր. չէ՞ որ ես սովոր էի մեխանիկորեն

կոնսերվատորիա՝ պրոֆ. Իգոր Յավրյանի դասարան: 18 տարեկանում տեղափոխվել է Լյուբեկի կոնսերվատորիա (Գերմանիա)՝ Կոնրադ Էյսերի դասարան: Ուսման հետ համընթաց աշխատել է Լյուբեկի բարձրագույն դպրոցում որպես կոնցերտմայստեր: Այնուհետև տեղափոխվել է Դանիա, եղել է Esbjerg Ensemble-ի դաշնակահարը: 2006-ին նրան շնորհվել է ARD միջազգային մրցույթի Երկրորդ մրցանակը, ինչը նոր հնարավորություններ է բացել մենակատարի և կամերային երաժշտի կարիերայի զարգացման, ինչպես նաև տարբեր նվագախմբերի հետ համագործակցության համար: 2015-ից Օսլոյի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր է: Դանիայում գործող Oremandsgaard kammermusikfestival-ի գեղարվեստական ղեկավարն է:

\* Ծնվել է 2001թ. Երևանում: Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ աշակերտուհի, Ի. Յավրյանի սան, այժմ շարունակում է ուսումը Ա. Աղավելյանի ղեկավարությամբ: Հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր է, բարեգործական հիմնադրամների շահառու՝ Վ. Սպիվակովի, այնուհետև՝ Մշակույթի և արվեստի: Ներկայացրել է Հայաստանը ԱՊՀ և Բալթյան երկրների 2-րդ Մանկական երաժշտական ակադեմիայում (Յ. Բաշմետի հովանու ներքո, ՌԴ), ինչպես նաև Հայաստանի մշակույթի փառատոնին Մալթայում (Վալետտա): Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ Ջազային անսամբլի դաշնակահարուհին է:

կրկնելու այն, ինչ ուսուցիչն է ցույց տալիս:

Ասում էր, որ բավարար չէ սիրել երաժշտությունը. ես պետք է հասնեմ այն մակարդակի, որ երաժշտությունն ինքը սիրահարվի ինձ: Երբ լավ էի նվագում, նշում էր, որ, ճիշտ է, տաղանդավոր կատարում է, բայց դեռ հեռու է հանճարեղ լինելուց՝ դրանով իսկ ոգևորելով և մոտիվացնելով ինձ աշխատել ավելի շատ ու առավել արդյունավետ:

Ափսոսում եմ, որ փոքր էի, երբ ընդունվեցի նրա դասարան, շատ բաներ դեռ չէի հասկանում, բայց, մյուս կողմից, երկար տարիների ընթացքում կարողացա շատ գիտելիքներ վերցնել իմ ուսուցչից: Շատ շնորհակալ եմ Իգոր Մարտինովիչին, որ ծանոթացրեց ինձ «Յավրեններին»՝ իր բազմանդամ թիմի հետ, սովորեցրեց արհեստավարժ նվագել, ապացուցեց, որ չնայած տարիքային մեծ տարբերությանը՝ մանկավարժի և աշակերտի միջև կարող են հաստատվել ընկերական հարաբերություններ:

Իգոր Մարտինովիչը հավերժ կապրի իմ սրտում:

## Գ Ո Ր Ծ Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր

СЕРГЕЙ САРАДЖЯН  
профессор ЕГК

... Когда после окончания Московской консерватории по классу выдающегося педагога Льва Власенко Игорь переехал в Ереван, в первые годы мы не были так близки, поскольку работали на разных кафедрах: он – на кафедре камерного ансамбля, я – специально – фортепиано. И только несколько лет спустя, когда Яврян получил свой класс специального фортепиано, мы нашли общие грани в восприятии искусства и жизни, и зародилась наша дружба...

Я очень ценил его как гибкого, тонкого музыканта. Между прочим, как педагог он начал раскрываться позже и дал много ценных кадров, которые впоследствии вели полезную работу. Во всем, что касалось музыки, вопросов профессионализма, Игорь был очень принципиальным человеком и никогда не отходил от своих принципов, нередко даже во вред себе.

Был очень остроумным. Я вообще убежден, что человек, не обладающий чувством юмора, не может быть талантливым. У Игоря был изысканный вкус, и это проявлялось во всем без исключения. Был очень интересным собеседником, о чем бы ни зашел разговор – от политики и глобального устройства мира до бытовых мелочей, его речь всегда изобиловала яркими примерами из жизни.

Игорь был хорошим другом, по-настоящему преданным, благородным, недаром его очень любили ученики – он им тоже был предан. Относился к ним с уважением и любовью – такие чувства ведь взаимны. Сейчас они, продолжая учиться у других педагогов, часто вспоминают его, ссылаются на его принципы, подходы, то есть уже мыслят, как носители яврянской школы фортепианного мастерства.

Игорь много концертировал не только как солист, но, главным образом, как артист Трио в сотрудничестве

стве с такими музыкантами, как Джон Геворкян, Вилли Мокацян, Ара Богданян, Левон Мамиконян и другие, и каждый из них был о нем превосходного мнения. С ним, как музыкантом, все очень считались.

Был очень благожелательно настроен к людям, отмечал в первую очередь хорошее, ценил это, не остроя внимания на плохом. Кстати, с этих же позиций он оценивал игру студентов на конкурсах и экзаменах.

Игорь был очень отзывчив, и очень остро воспринимал боль или радость другого человека. Всем известно, что он был высочайший эстет. Это выражалось и в музыке, и в еде, и в одежде. Был тонкий знаток гурманских дел, особенно любил хорошее вино, смаковал каждый глоток.

За столько лет я никогда не видел его небритым или небрежно одетым. Даже уже больной, после тяжелой операции он старался держаться молодцом, был очень волевым, никогда не ныл, не плакался, держался очень стойко.

Меня так тронул его поступок незадолго до смерти. Позвонила его студентка, Людмила Агавелян, и сказала, что Игорь Мартынович передал для меня письмо. Написал мне что-то, подумал я, не хочет, чтобы я видел его больным... Когда я раскрыл маленький конверт, то увидел не письмо, а ноты. Фантазия Шопена... И дарственная надпись, которая необыкновенно тронула меня...

**Թավջութակահար, նախկինում ԵՊԿ պրոֆեսոր,**

Fryderyk Chopin

FANTAZJA  
BERCEUSE  
BARKAROLA

Дорогая Сержа,  
остаётся мне эти ноты,  
как память о ~~вашей~~ наших  
добрых, прекрасных отношениях,  
о времени, о часах проведённых  
вместе.  
Ты хранитель тех неслыханных  
ценностей Анского, Великого, неслыханно  
иногда, что безусловно и без  
губы, убавляешь много времени/ду-  
шевно. Я благодарен тебе, что она  
TIFC не ушла, «не ушла»  
PMM Твой Игорь Зерян

Դի Կրանիշեալ և  
նրան արժէք տալու  
արժէքներ

**Ա. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի մենակատար ՋՈՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Ինչպես ստեղծվեց «Դաշնամուրային տրիոն»:

1960 թվականին, երբ Անդրկովկասյան մրցույթում ստացա առաջին մրցանակ, իսկ դաշնակահար Վահե Ահարոնյանը և ջութակահար Վիլի Մոկացյանը գրավեցին երկրորդ տեղը, մրցույթից անմիջապես հետո նույն կազմով տրիո ստեղծեցինք: Միասին աշխատեցինք մոտ հինգ տարի, հյուրախաղերով եղանք Մերձբայրյան երկրներում, Մոսկվայում, Վրաստանում, հանդես եկանք Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում:

Հետագայում Տրիոյի գործունեությունը վերականգնվեց նոր կազմով. Վիլի Մարգարյան (դաշնամուր), Լևոն Մնացականյան (ջութակ), Ջոն Գևորգյան: Այս կազմով հատկապես հիշարժան էին մեր հյուրախաղերը Հարավսլավիայում:

Եվ ահա 1976 թվականին Տրիոյի կազմը նորից փոխվեց. Իգոր Յավրյան (դաշնամուր), Արա Բողդանյան (ջութակ) և ես:

Միասին շատ ենք շրջագայել, հայտնի ճշմարտություն է՝ եթե ուզում ես մարդուն ճանաչել, նրա հետ ճամփա պիտի գնաս: Պետք է անկեղծ լինես. Տրիոյի բոլոր դաշնակահարներից իմ հոգուն՝ որպես երաժիշտ և ընկեր, ամենամոտն ու հարազատը Իգորն է եղել:

Ինչպես կրնոթագրեք նրան:

Մեծատառով մարդ... Շատ գրագետ, բանիմաց, էնցիկլոպեդիկ գիտելիքների տեր՝ ընդ որում, ամենատարբեր բնագավառներում: Իսկական ինտելիգենտ բառի ամենաիսկական իմաստով: Բացառիկ զգայուն անձնավորություն, շատ բարի, երբեմն բռնկվող, անհանգիստ բնավորությամբ, բայց և կռռեկտ, իր խոսքը կարևորող, ասելիքը տասն անգամ չափող ու նոր միայն քարձրածայնող:

Նա ուներ արվեստագետին բնորոշ յուրօրինակ արտաքին. շատ գեղեցիկ տղամարդ էր, ու դրա հետ մեկտեղ հատուկ ուշադրությամբ էր հետևում իր հագուկապին, որը միշտ առանձնահատուկ ճաշակով էր ընտրված: Ջարմանալի բարեկիրթ էր, ի ծնե մեծ ներքին կուլտուրայով օժտված, նրա խոսելու ձևն արդեն մթնոլորտ էր ստեղծում, տիրապետում էր գրուցակցին լսելու, ըմբռնելու արվեստին: Յուրահատուկ հումորի տեր մարդ էր, հաճախ սովորական երևույթի մեջ մի նոր, հետաքրքիր աշխարհ բացահայտել գիտեր: Ամեն ինչից գլուխ էր հանում՝ շնորհքով էր, ձեռից գալիս էր, ու ինչ էլ աներ, գեղեցիկ էր ստացվում:

Դե իսկ կատարողական արվեստում հրաշքներ էինք գործում միասին: Վիեննայի Մարմարյա դահլիճում մեր համերգից հետո թերթերը գրեցին, թե «հայերը Մոցարտի Տրիոյի կատարումով գերազանցեցին ավստրիացիներին»: Պատկերացնում ես: Իգորը ասես խոսում էր իր նվագով. ֆրազը իմաստալից սկիզբ ուներ, զարգացում ու գեղեցիկ ավարտ...

Որքան գիտես, ձեզ անվանել էին «Հայկական վիրտուոզներ»:

...Երբ եղանք Իսպանիայում, տեղի ղեկավարությունն այնքան էր ոգևորված մեր ելույթներով, որ նորից հյուրախաղերի հրավեր ստացանք՝ այս անգամ մի ամբողջ ամսով և շատ ավելի լավ պայմաններով: 30 օրում ունեցանք 28 համերգ տարբեր քաղաքների եկեղեցիներում, որոնք յուրահատուկ համերգային սրահների են վերածված՝ գերազանց ակուստիկայով: Ծրագրում՝ Բեթհովեն, Մոցարտ, Մենդելսոն, Շոստակովիչ, Բաբաջանյան... Այնքան բուռն էր ժողովրդի ընդունելությունը, որ իսկապես հարազատություն զգացինք իսպանացիների հանդեպ, հասկացանք, թե զգացմունքայնությամբ, խառնվածքով հայերը որքան մոտ են նրանց, համոզվեցինք, որ իրենք մեզ նման գնահատում են կատարողի ուժեղ, վառ անհատականությունը, այն արվեստը, որը կյանք, զգացմունք, սեր է փոխանցում:

Երջանիկ ժամանակներ էին: Ամեն համերգից հետո տվյալ քաղաքի քաղաքապետի հյուրասիրությունն էինք վայելում:

Մի զվարճալի դեպք կհիշե՞ք:

...Այդ ամբողջ շրջագայության ընթացքում հիանում էի Իգորի բացառիկ հավաքված (հյուրանոցի համարում բարձի վրա էր պարապում), կազմակերպված կեցվածքով, մանավանդ որ դրանով լրիվ հակադիր էր Արա Բոգդանյանին: Ամեն անգամ ասում էի. տղերք, չմոռանաք ոչինչ՝ բեմի կոստյում կա, բան կա, նոտաները, պուլտը, բանտիկը, գործիքը, լաքով կոշիկները, հետ չենք կարող գալ (մենք երեքով, թարգմանիչն էլ հետներս, ամեն անգամ մեքենայով երկար ճանապարհ էինք անցնում): Արիկը մի օր չդիմացավ, սկսեց բղավել. «Դե հերիք ա ինձ դաստիարակես, ոնց որ մերս ըլնես, զզվացրիք արդեն»: Ես էլ ասեցի. «Էղավ, թե ես էլի մի ծպտուն հանեցի, արի թքի իմ էրեսին»:

...Հիմա էկել հասել ենք տեղ, հագնվում ենք, որ փորձ անենք, Արիկը մեղալոր տեսքով գալիս է թե. «Տղերք, ինչ էլ անեք, ինձ հասնում ա. սպիտակ սառչկես մոռացել եմ»: Տաքսիստին ուղարկեցինք, խանութից վերնաշապիկ առավ բերեց՝ մեծ տուփով, սիրուն փաթեթավորված, վրայից էլ մեխակներ՝ տասը սառչկի գին նստացրին Արիկի վրա...

Մի օր էլ գնացինք ֆլամենկո լսելու: Խոսքերով դժվարանում եմ նկարագրել մեր տպավորություններն ինչ հզոր էներգետիկ ազդեցություն ունեցավ մեզ վրա այդ արվեստը, ինչ գայթակղիչ գեղեցկություն կար այդ հրնչյուններում և չքնաղ պարուհիների շարժումներում: Հատկապես Իգորն՝ իր զգայուն, զգացմունքային խառնրվածքով, խելագարության աստիճանի տարված էր այդ տեսարանով և կարծես չէր կարողանալու բաժանվել դրանից՝ պատրաստ էր մնալ Իսպանիայում, միայն թե չընդհատվեր այդ իրական հեքիաթը...

**Զ Ա Վ Ա Կ Ն Ե Ր Ը**

**Ավստրիական Տիրոլ նահանգի Ինսբրուկ քաղաքի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտայստեր, Իգոր Յավրյանի որդի՝ ՄԱՐՏԻՆ ՅԱՎՐՅԱՆ**

Ո՞րն է հայրիկի հետ կապված մանկության ամենավառ հիշողությունը:

Հիշում եմ, շատ փոքր էի, սիրում էի լսել, թե պապան ինչպես է պարապում, մեր տանը անընդհատ երաժշտություն էր հնչում. կամ ինքն էր նվագում, կամ Տրիոյի փորձերն էին, կամ ուսանողներն էին գալիս: Այդ ժամանակ մեր բնակարանում երկու գործիք կար՝ դաշնամուր և ռոյալ: Ես մտնում էի ռոյալի կամ դաշնամուրի կողքին դրված սեղանի տակ ու, խաղալիքներս մոռացած, երկար լսում էի հայրիկի նվագը: Մի օր, հիշում եմ, այնպես ազդվեցի, որ լաց եղա: Հայրիկն իսկույն դադարեցրեց նվագը, գրկեց ինձ. մի լացիք, հանգստացնում էր իր մեղմ ժպիտով, սա երաժշտական պատմություն է՝ իրական չէ: Հազիվ լացս զսպելով, հարցրի.

- Բայց ինչու՞ է այդքան տխուր:

Ու նա պատմեց ինձ Լիստի էտյուդի հերոս՝ Մագելպայի մասին, թե ինչպես են նրան, ձիու պոչից կապած, քարշ տվել գետնով, նրա ցավը, մարմնի ծանրությունն ու ճակատագրի դաժանությունը լսելի էին հայրիկիս հնչեցրած ամեն նոտայում...

Ո՞րն է ձեր ազգանվան իմաստը, յավրը կարծես ելրել բառից է, հրեա՞ է նշանակում:

Ոչ, սխալվում եք: Հայրս վանեցու տոհմական հայկական ցեղից է, «յավրի» թուրքերենից թարգմանաբար նշանակում է մանչս, տղաս, փոքրիկս: Հենց սա է նշանակությունը, այն կապ չունի նաև Յավրյան ազգանվան հետ, որը, ավելի շուտ, գյավուր բառից է գալիս: Իսկ հորական տատիկս մի քանի ազգությունների խառնուրդ էր՝ լեհ, ռուս, ֆին ու շվեդ:

Ուներ վանեցու խառնվածքին բնորոշ բնավորության գծեր:

Մարսափելի չէր սիրում պարտքով փող վերցնել, ամեն կերպ աշխատում էր խուսափել դրանից, գտնում էր, որ պետք է ծախսերդ չսփավորես՝ ըստ սեփական հնարավորությունների և ուրիշի վրա հույս չդնես, ուրիշից կախման մեջ չընկնես: Դա ինձ էլ է փոխանցվել:

...Բայց նա ոչ միայն հայր է եղել ինձ համար՝ նա իմ երաժշտական հայրն էր նաև, և ես իրենից այնքան մեծ սեր ժառանգեցի երաժշտության հանդեպ, որ շարունակեցի իր գործը նոր դարում, երբ արվեստը հասարակական կյանքում այլևս գիջել է իր առաջնային դիրքերը նորին գերազանցություն դուրսի իշխանությանը:

Կարո՞ղ ես առանձնացնել Իգոր Յավրյանի դասավանդման մեթոդաբանության որևէ սկզբունք:

Շատ դժվար է որևէ գիծ առանձնացնել, բայց երևի ընդգծեմ, թե նա որքան էր կարևորում կատարողի ԵՐԱՄԻՐՏ լինելու, երաժշտությունը խորապես զգալու և փոխանցելու կարողությունը: Մի օր ինձ ասաց. նոտաները շատ գեղեցիկ տպված են արդեն, պետք չէ, որ դու ևս մեկ անգամ դրանք նույնությամբ վերատպես: Քո անձնական վերապրումն է կարևոր, որը կամ կա՝ և ուրեմն կարող է ծնվել երաժշտություն, կամ չկա՝ և այդ դեպքում ոչինչ տեղի չի ունենա:

Շատ եմ կարևորում նրա, այսպես ասած, «ոգեղեն միասնության» (“одухотворяющая связь”) սկզբունքը, երբ մեկ նոտայից մյուսը մախորդի էներգիան պետք է կարողանաս այնպես փոխանցել, որ դրա միջից ծնվի և վերհասնի գեղարվեստական կերպարը: Երբ երկու ձայների, ֆրագերի միջև ոգեղեն կապը չի կարող դիտարկվել որպես ինքնանպատակ՝ գեղեցիկ ձայնի արտաբերման առումով, այլ պիտի կրի իր մեջ հենց այս պահին երաժշտական կերպարի «ծուլման» արարչական էներգիան:

Ինչ հարաբերությունների մեջ էր նա նոտային տեքստի հետ. իրեն հեղինակից վեր էր դասում և աշխատում ազատորեն իշխել տեքստի վրա, թե՞ հակառակը՝ հպատակվում տեքստին:

Կարծում եմ, աշխատում էր պահել հավասարակշռությունը՝ մոտավորապես հավասար դիրքերից երկխոսելով հեղինակի հետ, ոչ թե իրեն համագոր զգալով կոմպոզիտորին, այլ ստեղծագործության գաղափարին հասնելու ճանապարհին նույնչափ կարևորելով մենակատարի ազատությունն ու ինքնատիպությունը:

Մեկ տարուց ավելի է արդեն, ինչ հայրիկդ հեռացել է կյանքից... ուզում եմ նշել քո սքանչելի երաժշտական նվիրաբերումը հայրիկի հիշատակին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում՝ Բախի և Իգորի մենանվագ Սոնատների դանդաղ մասերի սեփական

համարձակ համադրման մտահղացմամբ: Դրանք կարծես մարդկային կյանքի ու ժամանակի մասին փիլիսոփայական ու, միաժամանակ, մտերմիկ զգացմունքային խոհեր էին:

...Հայրիկին հիշելիս, զոր հատկանիշները կամ դրսևորումներն են առանձնացնում: Կամ ինչ-որ բան, որ հիմա ավելի ցայտուն, խոշորացված ընդգծվում է իր կերպարում:

Չգիտեմ... Ուղղակի կարոտում եմ նրան... Գուցե հարցնենք տղայիս՝ Պատրիկին, նա արդեն 8 տարեկան է և լավ հիշում է պապիկին:

Պատրիկ, ինչպիսիքն էր պապիկը, քեզ շատ էր սիրում, չէ՞... Գիտես, երբ պապիկդ փողոցով անցնում էր՝ հմայիչ, ճաշակով հագնված, միանգամից ուշադրություն էր գրավում, մարդիկ շրջվում էին ու շշուկով իրար հարցնում, թե ո՞վ է, ա՛խ, ո՞վ է այս գեղեցիկ տղամարդը:

Իմ պապիկը ամեն ինչում ամենալավն էր աշխարհում:

Ինչո՞վ:

Արդեն ասացի՝ ամեն ինչով:

Մարտին.

Հայրս երբեմն հիշում էր իր վանեցի հոր խոսքերը. «Ամեն նոր սերունդ նախորդից լավն է, եթե նրան չփչացնես»: Եվ ես աշխատում եմ անհարկի ամեն պահին չմիջամտել, չխանգարել տղայիս այդ «ավելի լավը» դառնալու ընթացքին, որ կարողանա անկաշկանդ, նորովի բացահայտել աշխարհը:

Կարող ես համեմատության մեջ դնել քեզ՝ այդ տարիքում և քո 8-ամյա տղային, որն ապրում և սովորում է Ավստրիայում: Ինչ տարբերություններ կան ուսման շրջանի մեկնարկին: Հիշում եմ՝ 1994-ի ձմռանը տաք սփիտերով կանգնած էիր չջեռուցվող դահլիճի բեմում՝ վերարկուներով նստած, հիացմունքով լցված հանդիսատեսի առջև, ու քո ոգեշունչ նվագով հավատ էիր ներշնչում Հայաստանի վաղվա օրվան:

...Երբ ես 7 տարեկան էի, փուլովեց Սովետական Միությունը, սկսվեց պատերազմը, մեր ընտանիքը կիսում էր երկրին բաժին հասած բոլոր գրկանքները: Հայրիկս շատ էր տանջվում, որ չի կարողանում երջանիկ կյանք ապահովել մեզ համար, ասում էր՝ գոնե իմ երեխաները պատերազմ չտեսնեին: Ես ձմեռները Կամերային տան այգում ցախ էի հավաքում, սուղ պայմաններ էին, անընդհատ մթության մեջ, երբեմն սնվում էինք օրը մեկ անգամ, և մի քանի օր շարունակ դա կարող էր լինել նույն ճաշը, օրինակ, հումանիտար օգնություն եկած սիսեռը:

...Ժամանակակից աշխարհում մարդու կայացման հնարավորությունները տասնապատիկ աճել են, իմ հնարավորությունները շատ ավելի փոքր էին: Բայց ես աշխատում էի օգտագործել բոլոր հնարավորությունները, իսկ Պատրիկը այդ առումով շատ ավելի անհոգ է, նա մեծ աշխարհի, Եվրոպայի մի մասնիկն է այլևս և կարիք չունի ավելորդ ջանք թափելու այնտեղ ընդունվելու համար:

Որդիդ Ավստրիայում քեզ նման երաժշտական կրթություն ստանալու հնարավորություն ունի՞:

Այնտեղ չկա Հայաստանում գործող երաժշտական

դպրոցներին հավասարազոր մի համակարգ, որ խորհրդային շրջանից մնացած մեր մեծ հարստությունն է: Եվ միայն մասնավոր ու բավականի թանկ դասերի միջոցով կարելի է հասնել այն մակարդակի, որն ունի մեր միջնակարգ երաժշտական դպրոցն ավարտած աշակերտը: Երբ հայտնվեցի Գերմանիայում, 20 տարեկան էի, արդեն մեծ նվագացանկ ունեի, իսկ տեղացի ուսանողներից շատերը՝ նրանք, ովքեր չէին վերցրել մասնավոր դասեր, քանի որ շատ թանկ են դրանք, սկսնակի կարգավիճակում էին: Բայց ես զարմացա, թե ինչպես բուռնում սովորելու ընթացքում նրանք կարողացան սեղմ ժամկետներում անել այնքան, որքան մենք՝ սկսած 6-7 տարեկանից: Բայց դասական արվեստում ոչ մեկին չես խաբի. անշուշտ, այդքան ուշ պրոֆեսիոնալ կարիերան սկսելով, մենակատար չես կարող դառնալ՝ հազվադեպ: Այնպես որ, ես հպարտ եմ այն երաժշտական համակարգի գոյությամբ, որն ունի Հայաստանը, և առավել հպարտ եմ, որ հայրս զարգացրեց այստեղ այն երաժշտական ավանդույթները, որոնք ստացել էր Թբիլիսիում, հետո Մոսկվայում՝ հանրահայտ Լև Վլասենկոյի դասարանում: Չնայած, անկեղծ ասած, պապան վերջերս երբեմն ասիսուսանքով էր հիշում, որ ժամանակին չարձագանքեց Ավստրիայում կամ Իսպանիայում աշխատելու հրավերներին: Չէ՞ որ իրենց հանրահայտ տրիոյի համարյա բոլոր երաժիշտները մեկնեցին արտասահման. Ջոն Գևորգյանը՝ Միլիա, հետո ԱՄՆ, Վահե Բագրատունին՝ Գերմանիա, Արա Բոգդանյանը՝ Ռուսաստան, Լևոն Մամիկոնյանը՝ Ֆրանսիա, Վիլլի Մոկացյանը՝ Կուրա և այլն:

Ինչ ես կարծում, եթե հայրիկն ականատես լիներ մեր թավջառ հեղափոխությանը, ինչպե՞ս կընդուներ այն:

Այնպես, ինչպես ես՝ համարելով սա Հայաստանի համար պատմական շանս: Ճիշտն ասած, հայրս հակված չէր առանձնապես հավատալու մարդկանց, և հեղափոխական լիդերներին աստվածացնելու, անհարկի պաշտամունք դարձնելու կողմնակից հաստատ չէր լինի: Բայց, որ սա եզակի պատմական հնարավորություն է Հայաստանի համար ստեղծելու՝ մարդավայել պետություն՝ ոչ մի կասկած...

**НАТАЛЬЯ ЯВРЯН**

*дочь И. М. Явряна, историк, дипломат, административный директор московского отделения "Россия-СНГ" фирмы "Дженерал электрик"*

Папа принадлежал к очень редкому типу людей, которые видят (слышат, чувствуют) красоту этого мира в любом ее проявлении. Всю свою жизнь он транслировал эту красоту и учил ее видеть и различать. Красоту – как нечто абсолютное, максимально гармоничное и идеальное проявление божественного, как откровение и дар человеку в качестве камертона для распознавания Света и Тьмы.

В своем деле не выносил «полуусилий» и требовал, в первую очередь от себя, абсолютной искренности исполнения. Всю свою жизнь он преданно служил этой Красоте, и миссию свою он выполнил.

**Բանալի-բառեր.** մանկավարժություն, հայկական դաշնամուրային դպրոց, մեթոդաբանություն, Իգոր Յավրյան, հուշապատում, ավանդույթների փոխանցում, դասախոս-ուսանող:

**Ключевые слова:** педагогика, армянская фортепианная школа, методология, Игорь Яврян, воспоминания, преемственность традиции, преподаватель-студент.

**Keywords:** pedagogy, Armenian piano school, methodology, Igor Yavryan, memorialization, tradition transfer, lecturer-student.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԵՓՐԵՄՅԱՆ ԼԻԼԻԹ ԿԱՆԼԵՆԻՑ (ծ. 14.5.1963, ք. Երևան) երաժշտագետ, հոգեբան, սոցիոլոգ, լրագրող, բարձրմանիչ, ցեղասպանագետ: Ավարտել է ԵՊԿ-ի երաժշտագիտական բաժինը (1989 թ., դեկ.՝ պրոֆեսորներ Ռ. Հ. Ստեփանյան, Ն. Վ. Գերոյան), Ռուսաստանի Պետական արվեստաբանության ինստիտուտի (ՊԱԻ, Մոսկվա, դեկ.՝ արվ. դոկտոր Ի. Ռ. Յոլյան) ասպիրանտուրան ԵՊԿ-ի հետ համատեղ (1993), նույն ինստիտուտում պաշտպանել է քեկնածուական թեզը, 1995 թ., Մոսկվա, 2001-ին Երևանի պետական համալսարանի Գործնական հոգեբանների պատրաստման կենտրոնը, 2006-ին՝ ՋԼՄ Կովկասյան ինստիտուտը՝ «Տարածաշրջանագիտություն» մասնագիտացմամբ: Դասավանդում է՝ 1996-ից ԵՊԿ-ում հոգեբանություն, մանկավարժություն, համընդհանուր երաժշտության պատմություն դասընթացները, դրցենտ (2002 թ.): Նույն, 1996-ից՝ «Новое Время»-ի քրթակից է: Իր երաժշտագիտական ուսումնասիրություններում հաճախ օգտագործում է այլ գիտությունների մեթոդաբանությունը՝ նորովի լուսարանելով շատ արդիական երաժշտագիտական հարցեր, աշխատում է միջառարկայական հետազոտությունների ոլորտում, պրակտիկ հոգեբան է: Հեղինակ է՝ «Լրվարդ Միրզոյան՝ նամակներում և երկխոսությամբ» մենագրության Եր., Տիգրան Մեծ, 2011 թ., - 616-էջ (ռուս. լեզվով): Մասնագիտացել է էթնիկ ավանդույթի, քաղաքային ֆոլկլորի, ինչպես նաև Հայոց ցեղասպանության սերնդե-սերունդ փոխանցվող խեղման խնդիրներով: Ավելի քան 20 գիտական և 500-ից ավելի հրատարակախոսական հոդվածների հեղինակ է: Կոմպոզիտորների (1997-ից) և Գրողների (2016-ից) միությունների անդամ է:

**Сведения об авторе:** ЕПРЕМЯН ЛИЛИТ КАРЛЕНОВНА (р. 14.5.1963, Ереван) - музыковед, психолог, социолог, журналист, переводчик, геноцидолог. В 1989 окончила Ереванскую государственную консерваторию им. Комитаса по специальности "музыковедение" (кафедра теории музыки, классы проф.: Р. О. Степаняна, Н. В. Дерояна), 1993 - аспирантуру Государственного института искусствознания (Москва, класс докт. иск. И. Р. Еолян) совместно с ЕГК. В 1995 в ГИИ (Москва) защитила канд. диссертацию. В 2001 окончила Центр подготовки практических психологов при Ереванском Государственном университете, в 2006 - Кавказский институт СМИ по специальности "Регионоведение". С 1996 по настоящее время в ЕГК ведет курс лекций по психологии, педагогике, истории музыки (бакалавриат), основы музыкальной научно-педагогической деятельности (магистратура). Доцент (2002). С 1996 является корреспондентом газеты "Новое Время". Автор монографии о композиторе Эдварде Мирзояне ("Эдвард Мирзоян в письмах и диалогах", Ер., 2011), занимается феноменом этнической традиции, вопросами городского фольклора, проблемой трансгенерационной травмы Геноцида армян, практикующий психолог. Работает в области междисциплинарных исследований, в музыковедческих исследованиях использует методы других наук, по-новому освещая проблемы музыкознания. Автор более 20 научных статей, в том числе "Этнокультурный подход в социологии музыки", "Лику этнической традиции", "Виноваты ли мы", или "Усвоенная беспомощность" как гибель "внутреннего агента", "Маргинальность как судьба", "Судьбоносный выбор (к проблеме осмысления векторов развития армянской музыки XX века)" и др., более 500 публицистических статей. Практикующий психолог, член Союзом композиторов РА (с 1997) и писателей РА (с 2016).

**Information about the author:** YEPREMYAN LILIT K. (born 14.05.1963, Yerevan) the musicologist, the psychologist, the sociologist, the journalist, the translator, genocide examiner, PhD candidate. In 1989 graduated from YSC on specialty of musicologist (chair of the theory of music, a class of the prof. N. V. Deroyan). In 1993 got a postgraduate degree in YSC together with the State institute of Art Studies (Moscow, a class of PhD doctor I. R. Eolyan). In 1995 in SIA (Moscow) protected master's thesis. In 2001 graduated from the Center of training of Practical psychologists at the Yerevan State University, in 2006 from the Caucasian mass media Institute on speciality of regional studies. In her researches uses methods in the field of musicological and interdisciplinary sciences. From 1996 to the present she teaches in YSC and she is a docent since 2002. She worked as a correspondent in the newspaper "Novoe Vremya". The author of the monograph "Edward Mirzoyan in letters and dialogues", Yer.: Tigran Mets., 2011., - 616 P. The practicing psychologist is engaged in a phenomenon of ethnic tradition, questions of city folklore, a problem of a transgeneration trauma of Genocide of Armenians. The author of more than 20 scientific and more than 500 publicistic articles.

## ՐԵԶՅՄԵ

Музыковед, кандидат искусствоведения, доцент ЕГК **Лилит Карленовна Епремян**. – “Влюбленный в жизнь и искусство (к 75-летию со дня рождения Игоря Явряна)”.

В статье, составленной из авторских интервью с членами семьи пианиста, его коллегами и учениками, раскрыта личность выдающегося музыканта и методология его работы со студентами - представителями фортепианной школы И. М. Явряна.

Выпускник Московской консерватории по классу Льва Николаевича Власенко, он проявил себя и как солирующий пианист, и как концертмейстер, и как артист камерного ансамбля-трио, и как педагог, и как автор фортепианных переложений и научных работ. Все эти ипостаси его многосторонней деятельности затронуты в данной статье, приуроченной к 75-летию со дня рождения музыканта.

## Summary

Musicologist, PhD candidate, Docent of YSC **Lilit K. Yepremyan**. - “Devoted to Igor Yavryan's 75<sup>th</sup> Anniversary”.

In the article which is made of author interviews with the members of the pianist's family, his colleagues and students the identity of the outstanding musician and methodology of his work with students who are the representatives of Piano School of I. M. Yavryan is revealed

The graduate of the Moscow conservatory on Lev Nikolay Vlasenko's class, showed himself both as the soloist pianist, as the concertmaster and as the actor of chamber ensemble trio, as a pedagogue and as the author of piano transpositions and scientific works. All these forms of his multilateral activity are mentioned in this article devoted to the 75<sup>th</sup> anniversary of the musician.

**ԼԻԼԻԹ ԿԱՌԼԵՆԻ  
ԵՓՐԵՄՅԱՆ**

**Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու,  
Երևանի Կոմիտասի անվ.  
կոնսերվատորիայի դոցենտ  
E-mail.mikaelterlemez@gmail.com**

«Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամ Կարինե Ազատի Ջաղացպանյանի երաշխավորությամբ և ընդունվել է տպագրության՝ դեկտեմբերի 11-ին ներկայացրել է հեղինակը՝ սեպտեմբերի 10-ին

**ՋՈՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ. «Հայաստանը դրախտավայր է»**

**նվիրվում է թավջութակահարի 80-ամյա հոբելյանին**

Հայտնի թավջութակահար, նախկինում Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի մենակատար Ջոն Գևորգյանը 80 տարեկան է: Արդեն 27 տարի բնակվելով ԱՄՆ-ում, նա յուրաքանչյուր տարի 2-3 ամսով վերադառնում է Հայրենիք՝ հազեցնելու հարազատ երկրի, ջրի, մրգերի, ուտեստների, երևանյան արևի կարոտը, վայելելու հին ընկերների հետ շփվելու քաղցրությունը: Հատուկ «Երաժշտական Հայաստան» ամսագրի համար պատրաստված հարցազրույցում երաժիշտը կիսվում է իր ամենամոլորական հիշողություններով և մտորումներով:

80-ամյա հոբելյանը կամա թե ակամա ստիպում է իմի բերել կատարած աշխատանքը, վերհիշել անցած ուղին, երիտասարդ տարիները...

Հիշում եք 1960-ականների երաժշտական Երևանը:

Փայլուն ժամանակներ էին, իրական Հայկական Վերածննդի շրջան: Մանավանդ արվեստում, ու մանավանդ երաժշտական բնագավառում: Օպերա, Ֆիլհարմոնիա... Ի՜նչ ներկայացումներ, ի՜նչ համերգներ... Բայց ինձ համար միշտ առանձնահատուկ տեղ ուներ կոնսերվատորիան՝ Արվեստի Տաճարը, արվեստի ամենավեհ օջախը: Մտնում էիր. մի դասարանում Տաթևիկ Սազանդարյանն էր պարապում, մյուսում՝ Գոհար Գասպարյանը, երրորդում՝ Պավել Լիսիցյանը, չորրորդում՝ Թամարա Շահնազարյանը, ու դա դեռ միայն վոկալիստների բաժնում... Աննա Ամբակումյանը, Սիլվա Բունիաթյանը, Կետտի Մալխասյանը, Գեորգի Մարաջը, տակավին երիտասարդ Վիլի Մարգարյանը, Ռոզա Թանդիլյանը... Կոնսերվատորիայի ղեկավարն էր Ղազարոս Մարյանը, որը Հայաստանի ամենահեղինակավոր դեմքերից էր, մեր, այսպես ասած, ազգային բրենդը:

...Գիտես, ընկերներիս շատ են կարոտում, մեծ վարպետներ են, սովետահայ կատարողական արվեստի լավագույն ավանդույթները մինչ օրս էլ փոխանցում են երիտասարդներին՝ պահելով այդ բարձր նշանոցը: Որ գալիս են, միշտ հանդիպում ենք. Մեդեա Աբրահամյան,

Ջենֆիրա Բարսեղյան... ցավոք, արդեն չկա Իգոր Յավրյանը, ում հետ, ի դեպ, երկար տարիներ աշխատեցինք «Դաշնամուրային տրիո»-ում:

Հիմա արդեն հազվադեպ են հիշատակվում 60-80-ականների կամերային փոքր կազմերով անսամբլները: Դրանցից էին Տրիոն, կոնսերվատորիայի Կվարտետը, համարյա ոչ մի ձայնագրություն չի պահպանվել:

Ինչպե՞ս ստեղծվեց Կվարտետը:

1965-ին չորս տարով մեկնեցի Սիրիա, 1974-1976 թթ. Վիլի Մոկացյանի ու Ռուբեն Ալթունյանի հետ (Ռուբենը՝ 3 տարի) աշխատեցինք Կուբայում: Հայրենիք վերադառնալուց որոշ ժամանակ անց կոնսերվատորիային կից նոր անսամբլ կազմեցինք՝ Կվարտետ. Վիլի Մոկացյան (1-ին ջութակ), Ռուբեն Պողոսյան (2-րդ ջութակ), Ռուբեն Ալթունյան (ալտ), Ջոն Գևորգյան (թավջութակ): Որոշ ժամանակ անց, երբ Ալթունյանին փոխարինեց Ջարեհ Սահակյանը, այնպես ստացվեց, որ Մոսկվայում գործող Կոմիտասի անվ. քառյակը մեկնել էր արտասահման հյուրախաղերի, և ԿՄ միութենական պլենումին հայտարարված Առնո Բարաջանյանի 3-րդ Կվարտետի բեմելը վստահվեց մեզ: Լավ աշխատեցինք, Առնոն մեզ հետ հյուրանոցի համարում էր պարապում... Մեծ հաջողություն ունեցանք: Հետագայում Ավետ Գաբրիելյանը, լսելով մեր կատարումը, ոգևորված բացականչեց. «Ребята, вы просто здорово играете!» («Տղերք, ուղղակի փայլում ենք կատարում»): Այնտեղ մի հատված կա, որտեղ ալտը պիտի հնչի դուդուկի նման, պատկերացրո, Ջարեհն ալտով դուդուկի ձայն էր ստանում՝ շատ բնական:

...Ինչպե՞ս եղավ, որ որոշեցիք ընդմիշտ տեղափոխվել ԱՄՆ:

1991 թվականին օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը դիրիժոր Յուրի Դավթյանի ղեկավարությամբ մենակատարների հետ (այդ թվում՝ Գեղամ Գրիգորյան, Արաքս Դավթյան, Արաքս Մանսուրյան, Բարսեղ Թումանյան և ուրիշներ) հյուրախաղերով մեկնեց ԱՄՆ: Համերգներ ունեցանք Նյու Յորքի Carnegie Hall-ում, Բոստոնում, եղան փայլուն արձագանքներ, բայց, ճիշտն ասած, երկիրը չհավանեցի: Ավելի ուշ

Կ Ա Ս Մ Ա Ղ Ա Վ Ա Մ Ն Ա Մ Ե Պ Կ Հ ի մ ն ա դ ր մ ա ն 95 - ա մ յ ա կ ի ն

կնոջս բարեկամների հրավերով, որպես տուրիստ, նորից մեկնեցի Ամերիկա ու էլի համոզվեցի, որ դա իմ երկիրը չէ: Հայաստանից արտասահման տեղափոխվելու ոչ պատճառ ունեի, ոչ էլ ցանկություն: Ֆինանսապես էլ ապահոված էի. կոնսերվատորիայի պրոֆեսորի աշխատավարձս 500 ռուբլի էր, որպես Օպերայի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստեր 300 ռուբլի էի ստանում, տրիոյում էլ՝ մի 175, կնոջս աշխատավարձն էլ գումարած՝ ոչ մի ֆինանսական խնդիր չուներինք: Բայց երբ սկսվեց Արցախյան պատերազմը, դադարեց կանոնավոր աշխատանքի միջոցը, հետո էլ քենուս ու կնոջս տեղափոխվելու պահանջն էլ ավելի սաստկացավ: Ու ես 50-51 տարեկանում ճարահատյալ փակեցի կյանքիս նախորդ էջը և, դիմելով աներևակայելի միակի, այդ տարիքում գրոյից սկսեցի կառուցել կարիերաս Ամերիկայում: Իսկ տրիոն իմ ու Արիկի մեկնելուց հետո շարունակեց աշխատել նոր կազմով. Լևոն Մամիկոնյան, Իգոր Յավրյան, Վահե Բագրատունի:

*Ինչպե՞ս դասավորվեց Ձեր կարիերան արտասահմանում:*

Ամերիկայում եթե աշխատասեր չլինես, երբեք ոչինչի չես հասնի: Դե ես ամբողջ կյանքս «էջի պես» աշխատել եմ: Երբ 16 տարեկան էի, դեռ դպրոցում թավջութակ էի սովորում, քեռիս՝ Թաթուլ Ալթունյանը, ինձ վերցրեց Երզնի-Պարի նվագախումբ. դոմրա էի նվագում՝ մեծ գործիք էր, մասնագետ չկար: Մերանգույլանի ժողգործիքների համույթում բամբիռն էր ձեռքիս: Ավելի ուշ՝ Պարոնյանի թատրոնի նվագախմբի թավջութակահարն էի: Մանգասարյանի ղեկավարությամբ Հեռուստառադիոյի սիմֆոնիկ նվագախմբում, որ հիմնականում հայ կոմպոզիտորների գործերն էր հնչեցնում, նույնպես նվագել եմ: Ֆիլհարմոնիկում աշխատեցի Գերգիևի հետ որպես հրավիրյալ երաժիշտ, նաև Մոսկվա հյուրախաղերի գնացի Ֆիլհարմոնիկի հետ: Դե էլ չասած կոնսերվատորիայի, օպերայի նվագախմբի, կամերային անսամբլներում գործունեության մասին... Ի դեպ, Գերգիևի հետ մենք հենց այդ տարիներին ընկերացանք, հիմա որ ԱՄՆ է գալիս, միշտ լինում է իմ տանը:

*Ափսո՛ս, Գերգիևին չկարողացանք Հայաստանում երկար վայելել: Վերջին անգամ այստեղ Նարեկ Հախնազարյանի հետ հանդես եկավ:*

Ի դեպ, ես եմ Գերգիևին ծանոթացրել Նարեկ Հախնազարյանի հետ, ով, իմ համոզմամբ, բացառիկ երևույթ է՝ աշխարհի թիվ մեկ թավջութակահարն է այսօր: Երբ իմացա, որ վաղը Գերգիևը ինձ հյուր է գալու, զանգահարեցի Նարեկին, ով այդ ժամանակ Տեխասում էր, ու կարգադրեցի, որ վաղը անպայման լինի ինձ մոտ Վաշինգտոնում: Վալերիկին ասացի. «Քեզանից կյանքումս ոչինչ ինձ համար չեմ խնդրել, չէ՞, ու էլի ինձ համար ոչինչ չեմ խնդրելու, միայն մի բան. էս տղային լսի՛, շա՛տ տաղանդավոր է»: Եվ մյուս օրը գիշերվա ժամը 3-ին իմ տանը Նարեկն իր կախարդական հնչյուններով զերեց Գերգիևին, ով մեծ, եզակի երաժիշտներից է ժամանակակից աշխարհում և չէր կարող չնկատել Նարեկի ահռելի պոտենցիալը: Իսկ ես դա տեսա դեռևս «Նոր անուններ» ծրագրի մասնակից-

ների առաջին համերգին Carnegie Hall-ում, կողքիս նստած Հայաստանի դեսպան Արման Կիրակոսյանին (ի դեպ, նա մեր լավագույն դեսպանն էր ԱՄՆ-ում, Մեծ հայ՝ Ջոն Կիրակոսյանի զավակն է) ասացի. «*Էս բոլոր տաղանդավոր երեխեքը մի կողմ, Նարեկը՝ մյուս*»: Ու չսխալվեցի: Չսխալվեցի, երբ համարեցի, որ Ա. Խաչատրյանի անվ. մրցույթում նա առաջինն է, որ անկարելի է կիսել այդ մրցանակը: Մեղեա Աբրահամյանի հետ ժյուրիի կազմում լավ կռիվ տվինք Նարեկի համար: Որովհետև ես իրական տաղանդի հանդեպ անտարբեր չեմ կարող լինել, ամեն ինչ կտամ՝ սիրտս էլ կտամ: Նարեկի հայրն՝ իմ լավ ընկեր ջութակահար Սուրեն Հախնազարյանը, ինձ անվանում է «*Նարեկի ամերիկյան հայրիկ*», ու ես հպարտ եմ դրանով:

*Հոյակապ պատմություն... Բայց վերադառնանք Ձեր ամերիկյան գործունեությանը:*

Մի շարք համերգներ ունեցա որպես մենակատար. ԱՄՆ սիմֆոնիկ նվագախմբերի նվագակցությամբ հնչեցրեցի Բոկլերիմիի, Հայդնի, Մեն-Սանսի, Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները: Դասավանդում էի Վաշինգտոնի միակ երաժշտական ուսումնական հաստատությունում՝ Levine Music School-ում 15 տարի, հետո մոտ 10 տարի Մելիլենդում՝ Columbia Union College-ում, նաև մասնավոր դասեր էի տալիս:

Հիմա իմ սեփական ստուդիան ունեմ՝ երկու դաշնամուրով: Մեծ նվիրումով աշխատում եմ աշակերտների հետ, որոնք ամեն տարի հանդես են գալիս հաշվետու համերգով: Մարդիկ լսում են, համոզվում, որ իմ բոլոր ուսանողները նվագող են՝ գրագետ, պրոֆեսիոնալ և դիմողները տարեց տարի ավելանում են: Անկեղծ ասած, ինչ Հայաստանում եմ (երեք ամիս է արդեն), մի ծանոթ երաժշտից գործիք եմ խնդրել, ու ամեն օր պարապում եմ, որովհետև մեծ պատասխանատվությամբ եմ վերաբերվում իմ գործին: Երբեք չեմ հասկացել էն սառը, անհաղորդ, անհավես դասախոսներին, ովքեր դասի ժամանակ թերթ են կարդում, ասելով «*Նորից նվագիր*», ու պարզ չի, աշակերտին ընդհանրապես լսում են, թե ոչ, «*դե վա՛տ ա, հավաքվի գնա՛, տանը կպարապես՝ կգաս*»: Այդպես չեն աշխատի, դա ինձ համար անընդունելի է, իսկ նման դեպքերը, հավատացնում եմ քեզ, քիչ չեն:

Ես ոչ միայն աշխատում եմ կատարողին հարիր մարզված վիճակում լինել, որ կարողանամ ցույց տալ գործիքի վրա, թե ինչ եմ պահանջում: Ես նաև դաշնամուրով նվագակցում եմ աշակերտներին, դա բոլորովին ուրիշ մակարդակ է հաղորդում դասին: Օլգա Բաբասյանի մոտ մասնագիտական դաշնամուր եմ անցել և ընդհանրապես շատ եմ կարևորում դաշնամուրին տիրապետելու անհրաժեշտությունը բոլոր կատարողների համար: Մանկավարժ-Ռոստրոպովիչի փայլուն օրինակն ունենք, ով և՛ թավջութակով, և՛ դաշնամուրով, և՛ խոսքով հավասարապես կարողանում էր բացատրել իր ասելիքը:

*Ի՞նչ կասեք ԱՄՆ-ում երաժշտական կրթական համակարգի մասին:*

Եթե կուզեք իմանալ, Ամերիկան մի գլոբալ խնդիր ունի երաժշտական բնագավառում. պրոֆեսիոնալիզմի

տոտալ բացակայության խնդիրը: Այդքան փողերի, հնարավորությունների մեջ չի կարևորվում երեխայի երաժշտական դաստիարակությունը, ավելի լավ է երկու տանկ ավել առնեն, քան մի տարի նույն գումարով մասնագիտական երաժշտական դպրոց պահեն՝ չեն անելու: Ինչո՞ւ համար տասնամյակներով մասնագետ դաստիարակեն, եթե կարելի է միանգամից պատրաստի կադրեր գնել: Իրենց դեմոկրատիան էլ ոչ այլ ինչ է, քան ընդամենը ժողովրդավարության իմիտացիա: Մի ասացվածք կա ռուսերենով. «Демократия – это когда тебя посылают на три буквы, а ты идешь, куда хочешь...»: Երկիրը մեծահարուստների ձեռքերում է, այնտեղ մշակույթը ոչ մեկին պետք չէ:

Հեռվից ինչպիսիքն է Հայրենիքը:

...Ես եկել եմ մի եզրակացության. աշխարհի ամենալավ երկիրը Հայաստանն է: Եթե փող ունես: Եթե փող չունես, էլի աշխարհի ամենալավ երկիրը Հայաստանն է: Հոյակապ երկիր է՝ դրախտավայր: Հայի երկիր է՝ մոնոթեոստիկ: Փողոցում անցնելիս մեկը մյուսին ժպտում է, օգնության գալիս: Հայաստանը հիմա կանաչ է՝ ուզում է ծաղկել, և եթե էդ մոլախտը՝ կոռուպցիան, քոքահան արվի, այդպես էլ կլինի: Թե չէ մարդիկ պաշտոնապես գողությունը մասնագիտություն են հռչակել: Ինչ աստիճանի հիմար, անտաղանդ, մեկը մյուսից դատարկ գլուխներով դեկավարներ ունեցանք՝ իրենց կուսակցական խմբերով, ու դեռ կարողացանք ապրել ու արարել:

Երբ այստեղ եմ վերադառնում, տան պատերս եմ համբուրում: Միայն այստեղ է մարդն իրեն ապահով զգում, այստեղ է մատուցվում ամենահամեղ ուտելիքը, ի դեպ, մեր սննդահամակարգը՝ թեթև ամառային սրճարաններով, ընտիր ռեստորաններով, դարձել է երկրի դեմքը, մի փոքր էլ աշխատենք՝ կարող ենք Հայաստանը Շվեյցարիայի մակարդակի հասցնել: Հեշտ է ասելը՝ Երևանը 2800 տարեկան է, Հռոմից էլ մեծ է, պատկերացնելն անգամ դժվար է, թե ինչպիսի պատմական շերտեր է կրում իր մեջ իմ քաղաքը:

Արդեն 26 տարի է, ինչ ամեն ամառ գալիս եմ Հայաստան: Իմ ծննդյան օրը՝ դեկտեմբերի 27-ին, ընտա-

նիքս ինձ բիզնես-կլասի մեկ տոմս է նվիրում Նյու-Յորք -Մոսկվա-Երևան, և հետագարձ ուղիով: Ու ես իմ ստուդիայում 9 ամիս քրտնաջան աշխատում եմ՝ երազելով այն պահը, երբ կհայտնվեմ այստեղ ու մարտկոցներս բերնեբերան կլիցքավորեմ Հայաստանի էներգիայով, որ նորից 9 ամիս կարողանամ դիմանալ օտարության մեջ:

Իսկ Ձեր երեխաները, թոռները նմյնպես այդպիսի կարոտախտով են տառապում:

Ո՛չ, իհարկե:

Ինչո՞ւ:

Որովհետև հայրենասիրությունը նույնպես տաղանդ է, դա զգալն ու հասկանալը ամեն մեկին չի տրված:

Ինչ եք կարծում, կհաջողի՞ մեր Սիրո ու համերաշխության թավշյա հեղափոխությունը:

Ես հույսս դրել եմ Նիկոլի վրա: Իսկական դյուցազնական հերոս է՝ ժողովրդի ծոցից ելած: Իրեն օգնել, սատարել է պետք:

Ինչպե՞ս եք զնահատում երաժշտական կրթության մակարդակը Հայաստանում:

Մեր կրթական մակարդակը պետք է վերադարձնել Խորհրդային Հայաստանի լավագույն տարիների նշանոթին: Բոլոնյան համակարգը երաժշտության բնագավառում կիրառելն, իմ կարծիքով, բավական խնդրահարույց է, նույնիսկ հետադիմական: Հետաքրքիր է, այսօր Հայաստանում մեծ համբավ վայելող մասնագետները՝ իրավաբանները, տնտեսագետները, բժիշկները, կարող են արդյոք արտասահմանում միանգամից լավագույնների շարքերն անցնել, մեծ պահանջարկ ունենալ: Կարծում եմ՝ ոչ: Իսկ մեր երաժիշտների պրոֆեսիոնալ մակարդակն այնպիսին է, որ բոլորն աշխատանք ունեն: Եթե Երևանի կոնսերվատորիան ես ավարտել ու իսկապես սովորել ես՝ գլուխ չես պահել, ոչ ոք դրսում առանց գործ չի մնա: Ամեն գնով պետք է պահել մեր երաժշտական ոլորտի կրթական համակարգը, դա եզակի ազգային հարստություն է, կորցնել այսքան տարիների լավագույն ավանդույթները հանցագործություն է, ամեն երկիր չէ, որ դա ունի: Եվ ես այդ առումով ևս անչափ հպարտ եմ իմ Հայրենիքով:

**Բանալի-բաներ.** Հայաստան, հայ կատարողական արվեստ, Երևանի կոնսերվատորիա, խորհրդային և ամերիկյան երաժշտական մանկավարժության համեմատական վերլուծություն, Ջոն Գեօրգյան, Նարեկ Հախնազարյան:

**Ключевые слова:** Армения, армянское исполнительское искусство, Ереванская консерватория, сравнительный анализ советской и американской музыкальной педагогики, Джон Геворкян, Нарек Ахназарян.

**Keywords:** Armenia, the Armenian performing art, the Yerevan Conservatory, the comparative analysis of the Soviet and American musical pedagogics, John Gevorgian, Narek Hakhnazaryan.

**Տեղեկություններ հեղինակի մասին. տե՛ս էջ 60: Сведения об авторе: см на С. 60. Information about the author: Go to P. 60.**

## Резюме

Музыковед, доцент ЕГК Лилит Карленовна Епремян. – Джон Геворкян: “Армения - это Рай” (к 80-летию виолончелиста)”.  
В эксклюзивном интервью журналу “Музыкальная Армения” одного из ведущих профессоров ЕГК, виолончелиста Джона Геворкяна, который ныне живет и работает в США, дается высокая оценка советской исполнительской школы. Сравнивая систему музыкального образования в Армении и в США, 80-летний музыкант, опираясь на опыт всей своей жизни, предлагает отказаться от радикального реформирования музыкального образования в РА, объявив эту область сферой стратегических интересов РА, которая унаследовала самую продуктивную систему начального музыкального образования в мире. Он положительно отзывается о политических изменениях на родине, о самой фигуре лидера Бархатной революции 2018 г. Николе Пашиняне. Армения станет настоящим раем на Земле, считает музыкант, в котором духовные приоритеты выведут его родину на принципиально новый уровень развития.

Musicologist, PhD candidate of Art, Docent of YSC Lilit K. Yepremyan. - “John Gevorgian: “Armenia is an Eden” (devoted to the 80<sup>th</sup> anniversary of the violoncellist)”.  
One of the leading professors of YSC, the violoncellist John Gevorgian, who nowadays lives and works in the USA in an exclusive interview to the journal “Musical Armenian” gave the high mark to the Soviet performing school. Comparing the system of musical education in Armenia and in the USA, the 80-year-old musician, based on his life experience suggests to refuse radical reforming of music education in RA, announcing this area as a sphere of strategic interests of RA which inherited the most productive system of primary music education in the world. He positively speaks about political changes on the homeland, about the Velvet Revolution’s (2018) leader figure Nikola Pashinyan. Musician thinks that defeating it Armenia will become the real paradise on Earth, where spiritual priorities will bring his homeland to essentially new level of development.

## Summary

Musicologist, PhD candidate of Art, Docent of YSC Lilit K. Yepremyan. - “John Gevorgian: “Armenia is an Eden” (devoted to the 80<sup>th</sup> anniversary of the violoncellist)”.  
One of the leading professors of YSC, the violoncellist John Gevorgian, who nowadays lives and works in the USA in an exclusive interview to the journal “Musical Armenian” gave the high mark to the Soviet performing school. Comparing the system of musical education in Armenia and in the USA, the 80-year-old musician, based on his life experience suggests to refuse radical reforming of music education in RA, announcing this area as a sphere of strategic interests of RA which inherited the most productive system of primary music education in the world. He positively speaks about political changes on the homeland, about the Velvet Revolution’s (2018) leader figure Nikola Pashinyan. Musician thinks that defeating it Armenia will become the real paradise on Earth, where spiritual priorities will bring his homeland to essentially new level of development.

Musicologist, PhD candidate of Art, Docent of YSC Lilit K. Yepremyan. - “John Gevorgian: “Armenia is an Eden” (devoted to the 80<sup>th</sup> anniversary of the violoncellist)”.  
One of the leading professors of YSC, the violoncellist John Gevorgian, who nowadays lives and works in the USA in an exclusive interview to the journal “Musical Armenian” gave the high mark to the Soviet performing school. Comparing the system of musical education in Armenia and in the USA, the 80-year-old musician, based on his life experience suggests to refuse radical reforming of music education in RA, announcing this area as a sphere of strategic interests of RA which inherited the most productive system of primary music education in the world. He positively speaks about political changes on the homeland, about the Velvet Revolution’s (2018) leader figure Nikola Pashinyan. Musician thinks that defeating it Armenia will become the real paradise on Earth, where spiritual priorities will bring his homeland to essentially new level of development.



Он покинул нас, но то, что он оставил, вечно”, – заявил британский музыкант Стинг.

“Вы были моложе всех нас. Ваша страсть к работе всегда была для меня примером. Я всегда повторяю Ваши слова: “Если хотите, чтобы вас полюбил зритель, вы должны любить зрителей,” – писал известный певец Андреа Бочелли.

Владилен Бальян, композитор, народный артист РА: “Я считаю своим долгом высказать свои чувства по поводу кончины Шарля Азнавура, тем более, что я его знал лично. Он мой ровесник. Первые гастроли Азнавура в Ереване (1964) совпали с моим назначением на должность директора Армфилармонии, и он стал моим первым гостем. Я его встретил в аэропорту и фактически все дни, проведенные в Армении, сопровождал его. Поехали мы и в Гюмри, где Маэстро встретился со своей бабушкой. Это была очень трогательная и эмоциональная встреча. На следующий день нас принял мэр Еревана Григор Асатрян и долго рассказывал Шарлю о том, каким видит будущий Ереван. Перед отъездом Азнавур подарил мне свой портрет, и я его храню дома на самом видном месте. Я собирался на днях позвонить ему и договориться о нашей встрече в Ереване. Не получилось. Армения потеряла великого сына. Его искусство феноменально. Это бывает в исключительных случаях, потому что его природное дарование проявилось в полной мере”.

Мартын Вартазарян: “Что бы я сейчас не сказал, прозвучит повтором. И все-таки Шарль Азнавур – великий армянин, великий музыкант, великий человек. Музыкант от Бога”.

Фанни Ардан, актриса: “Шарль Азнавур – это окно в Париж. Окно, за которым не Париж даже, а целая Вселенная. Упоительная и влекущая. Сена, Пляс Пигаль, Мулен руж, Монмартр и Олимпия. Рычащая Пиаф, блестящая Далида, Мирей с челкой восьмиклассницы и маленький и великий Азнавур. После его концертов мы несколько раз общались в общих компаниях. Он был блестящим рассказчиком. Именно от него я впервые услышала о прошлом армян, о Геноциде 1915 г. Он никогда не забывал о своих корнях и гордился этим. Последний раз мы встретились на вечере памяти великой Далиды. Они очень дружили, и он тяжело переживал ее трагический уход. Азнавур – человек, прославивший Францию и Армению. Сколько же в тебе было добра, таланта и обаяния”.

“Альбомы родившегося в семье армянских эмигрантов певца были проданы во всем мире в количестве 180 млн. экземпляров. Он спел более, чем в 60-ти фильмах”, – напишет ВВС. В 1998 телеканал CNN признал Азнавура шансоном века.

Как все начиналось

“Когда поэт поет, он преодолевает установленные Вавилоном границы между языками; посредством ритма и тембра, пластики и интонации. Он обращается к нашим сердцам, освобождая естественную энергию общечеловеческого языка.

В начале 60-х годов, когда “железный занавес” едва приоткрылся, западный мир поразил нас как чудо. В те далекие годы кафе гостиницы “Ереван” превра-

тилось в духовное пристанище художников и поэтов. Сюда ходили как признанные классики, так и богема.

Мы спорили об искусстве, читали друг другу стихи и рассказы, ходили смотреть работы других художников. Мы все были гениями, и никто из нас ни на минуту в этом не сомневался. Мы все были героями азнавуровской песни “Богема”. Стоило нам услышать, что в Ереван приехал какой-то армянин из Киева, как мы тотчас являлись к нему в гостиницу, знакомились с ним и как с давним знакомым продолжали наши вечные споры об искусстве”.

(Гарегин Закоян,

директор армянской национальной фильмотеки)

С Азнавуром было все иначе. Сперва прошел слух, что некий армянин по имени Шарль Азнавур (Азнавурян) покорила Париж, создав нечто совершенно новое в искусстве эстрадной песни. Потом появились его пластинки. Их было всего несколько штук на весь город, но вскоре все, кто имел магнитофон, переписали песни Азнавура на кассеты. Мы слушали его едва ли не каждый день и с каждым днем он становился роднее и любимее. Но вот разнеслась невероятная весть – Азнавур приезжает в Ереван на гастроли и, в самом деле, вскоре появились афиши, а потом, забыв все на свете, мы с раннего утра простаивали в очереди. Как-то придя к кассам, мы увидели на базальтовой стене надпись, сделанную белой масляной краской “Азнавур принадлежит народу, а не ЦК”. (Суть протеста была в том, что львиная доля билетов распределялась через ЦК, и лишь мизерные остатки попадали в кассу.) Вскоре появились люди, которые такой же белой краской замазали надписи, вслед за ними пришли камнетесы и с помощью молотков и зубил стали сбивать верхний слой камня. Билета я так и не достал, но на галерке в день концерта все же оказался. Многие песни Азнавура мы уже знали и любили. Но живой кумир на сцене с его неповторимой пластикой и мимикой покорила нас вдвойне... А когда он, стоя на коленях перед сидящей в первом ряду собственной бабушкой, исполнил песню “Мама”, зал сперва обомлел и замер, охваченный единым чувством, и лишь потом взорвался громом аплодисментов. С тех пор и уже навсегда мы остались пленниками азнавуровского искусства. Это был пришелец из того свободного мира, но в жилах его текла наша кровь, эмоции и темперамент его были сродни нашему. В его интонациях мы улавливаем мелодии Саят-Новы. После Азнавура в Ереван приехал Жак Брель, и благодаря дороге, проторенной Азнавуром, нашел полное понимание и любовь армянской публики. Так Азнавур стал полномочным послом европейской культуры в Армении.

Второй его приезд в Армению состоялся много лет спустя, после землетрясения 1988 года. Азнавур приехал в совершенно новом качестве, приехал с уже облетевшей весь мир песней “Тебе, Армения”, приехал с целой программой помощи попавшей в беду земле предков. С тех пор прошло 6 лет и Шарль Азнавур стал Полномочным послом Армении по особым поручениям и это закономерный результат всей его предыдущей деятельности. Азнавур призван пред-

ставлять не только свое собственное искусство, но и познакомил армянскую публику с целым рядом неизвестных ей режиссеров, французских и западных кинематографистов”.

Из воспоминаний Нелли Саакян: “Совсем недавно в Музее литературы и искусства Армении я прочитала о том, что отец Шарля великолепно пел, и особенно любил песни Саят–Новы, и что у самого Шарля есть даже большая яхта, носящая имя “Саят–Новы”. И мне все стало ясно. Вот он, исток его пронзительной певучести и его вкуса: еще бы, еще в детстве слышать песни Саят–Новы! У отца тоже был отменный вкус. Благодаря этому родству он не просто приобщил нас к новой европейской культуре, но и привил нам уверенность в том, что мы – неотделимая часть этой культуры”.

Гарегин Закоян, директор армянской национальной фильмотеки.

Шарль Азнавур (Азнавурян)

Певец, киноактер, композитор и общественный деятель. Про себя он писал, что состоялся во всех ипостасях, но на первое место по степени важности для себя ставил: поэт, композитор, артист, певец и в последние годы жизни писатель, чьи книги расходятся как жареные пирожки и читаются на одном дыхании.

Родился в Париже 22 мая 1925 года в семье армянских актеров. Отец Шарля – Микаэл (Миша) Азнавурян из грузинского города Телави и мать Кнарик Багдасарян из Измира (Турция) поженились в Константинополе. В 1922 году эмигрировали в Грецию, где в 1923 году у них родилась дочь Аида. В 1925 году семья переезжает во Францию. В 1933 году Азнавур дебютирует на сцене маленького эстрадного театра, сперва как танцор, а затем как исполнитель детских ролей в парижских театрах, таких, как “Медлен”, “Мариньи”, “Одеон”. Учился в театральной школе на ул.Кардинала Лемуана, затем выступал в различных ревю и кабаре. Вскоре состоялся его решительный поворот к песне: в 8 лет выступал на концертных подмостках, а в 1942 году со своим другом Пьером Рошем создает вокальный дуэт. В 1944 году написал свою первую песню “Я пьян”. Важную роль в судьбе Азнавура сыграла встреча с Эдит Пиаф (1946). Он писал для нее песни, гастролировал с ее ансамблем “Компаньон де ла шансон”. Писал также песни для Жюльетт Греко, Жильбера Беко, Джонни Холидея и других звезд французской эстрады. После оглушительного успеха в “Олимпиа” (1959) слава Азнавура перешагнула границы Франции. В эти и последующие годы он много и плодотворно сотрудничает с талантливым французским композитором, армянином по происхождению Жоржем Гарваренцем (1932–1993), мужем сестры Аиды. Азнавур снимался в фильмах Франсуа Трюффо, Жюльена Дювинье, Рене Клера, Клода Лелуша, Элио Петри. В фильмах “Стреляйте в пианиста” Ф.Трюффо(1960) и “Призраки шляпника” К.Шабреля (1962) воплотил образы армян. Он автор музыки и текстов песен к ряду фильмов, среди которых: “Не убий!” (1960) Клода Отар–Лери, “Почему Париж” (1962) Дени де ла Пательера, “Париж в августе” (1965) Пьера Гренье–Дефара, “Золотая Офелия”(1975) Ральфа

Боумана, “Сафо” (1976) Жоржа Фарела и “Что подгоняет Давида”(1984) Эли Шураки. Выпустил поэтический сборник “Слава на афише”.

После двух неудачных браков в 1968 году в армянской церкви Парижа Хан Гутон обвенчался со шведской манекенщицей Уллой Торсель. Он отец шестерых детей. С третьей женой Уллой Торсель певец прожил более полувека. Со старшей дочерью Седой записал одну из песен Саят–Новы. С младшей Катей снялся в фильме “Незванные гости” (1971) режиссера Серджи Гобби. “Мы, армяне, – долгожители,–говорил Азнавур. – Я собираюсь жить до 100 лет и работать до тех пор, пока мне не стукнет 90”. (Эти слова он говорил на свое 70–летие.)

Певец или актер.

В 1961 году югославский журнал “Филмени свет” так представил Азнавура: “Он один из самых любимых певцов Франции, однако совершенно лишен голоса”. Разумеется, возникает недоумение: как же он тогда поет? И тут же следует простенький ответ на необъяснимую вроде бы загадку: “Сердцем, а не горлом!”. “А сердце актера – это и есть тема,– уверяет С. Образцов. – Он лишь сердцем жил, И сердце его – весь огромный мир...” Что ни говори, а эти слова, характеризующие героя одной из азнавуровских песен, в той же мере относятся и к нему самому. В свое время Сэмми Дэвис писал, что песни Азнавура – это “его внешний облик” и добавлял: “В фигуре этого печального шута, готового к салюту морталя, таится трагик”.

Образ маленького человека, наделенного величием души, давно уже стал визитной карточкой Шарля Азнавура.

“Я человек представления, – в одном из интервью говорил Азнавур. – Мои песни – это действительно песни актера. Я пишу маленькие пьесы и играю их перед зрителем. Причем одну и ту же песню могу исполнить 5 раз подряд и каждый раз по–иному, в различных мизансценах. Пожалуй, я не стал бы никогда певцом, если бы раньше не выступал на сцене”.

Каждый шансонье в духе традиций исконной французской песни жанра “шансон”, где проникновенная музыкальность сливается с мастерством драматического актера, лепит свой собственный сценический облик.

“Шансон” – это, по сути, авторский театр одного актера. Шансонье не только поет, он ставит на сцене и играет роль героя своих песен. “Люди забывают, что я был актером и лишь потом певцом. До 18 лет я занимался актерством”. В своих мемуарах и многочисленных интервью Азнавур вспоминает роли из постановок “Много шума из ничего”, “Королева Марго” и других, сыгранных им ранее на сценах бульварных театров “Мадлен” ”ли... одеон” “Амкезор “Ревю” и всевозможных кабаре, а в 1938–м Шарль снялся в фильме Кристиана Жека “Исчезнувшие из Сент Атиля”.

“Мой младший брат”

(из книги воспоминаний Аиды Азнавурян–Гарваренц)

Разумеется, он любил песню так, как любит французский язык, любит слово, знает в нем толк, но, между нами, я абсолютно уверена, он закончит свои дни

лицедеем. Он никогда не переставал им быть, остава-  
ясь актером и на эстраде. И когда он приносил нам  
текст, который Гарваренц должен был положить на  
музыку, у меня каждый раз оставалось впечатление,  
что он написал слова своей новой роли. (...)

Я люблю хвастать своим младшим братом. Шарль  
выигрывал конкурс за конкурсом, он уже носил фрак и  
с высоты своих 13 лет выступал перед публикой с не-  
вероятным апломбом. Он был уверен, что добьется  
успеха, он вбил себе в голову эту идею и никто и ничто  
не могло заставить его перестать в это верить. Его  
всегда восхищали большие актеры. “Пошли, посмот-  
рим актеров, музыкантов, фокусников, они едут,  
пошли...”. Когда он поет, он поет о своей давней и глу-  
бокой любви. (...)

Из книги “Азнавур об Азнавуре”

“Из робкого, стеснительного, хилого и уязвимого  
ребенка, я должен был вырасти в сильную личность,

сохранив при этом моральные принципы, заложенные  
в меня моими родителями и оставаться способным  
чувствовать биение своего сердца. Чтобы осущест-  
вить свое жизненное предназначение, я должен был  
“делать” себя: отказаться от себя настоящего и по-  
вернуться лицом к будущему. Но не вычеркивая свое-  
го прошлого – ведь моя основа – это моя французская  
песня, корни – мировой фольклор и восточная, осо-  
бенно армянская поэзия”. (...)

Эту сложность жизни, эту усталость, бесконечные  
заботы, тесно связанные с воспоминаниями, можно  
найти в песне, названной Шарлем “Автобиография”,  
которая для меня целая поэма (из воспоминаний Аи-  
ды).

А для меня автобиография певца – в песне “Мой  
путь”, написанной когда-то для Фрэнк Синастры. А  
ведь Шарля тоже часто называли французским Си-  
натрой...

**Բանալի-քառեր.** Շառլ Ազնավուր, Արիդ Ազնավուրյան-Քարվարենց, Ուլլա Տորսել, Ֆրանկոֆոնիա, Փարիզ:  
**Ключевые слова:** Шарль Азнавур, Аида Азнавурян-Гарваренц, Улла Торсель, Франкофония, Париж.  
**Keywords:** : Charles Aznavour, Aida Aznavurian-Harvardz, Ula Torsel, Francophonie, Paris.

**Сведения об авторе:** АСМАРЯН НАТАЛЬЯ ТАТЕВОСОВНА (род. 26.12.1963, Ереван). Окончила общеобразовательную школу им.Чкало-  
ва, музыкальную школу им. А. Спендиарова (пед. Н. Матевосян). В 1983 году окончила с отличием музыкальное училище им. Р. Ме-  
ликяна по классу фортепиано М. Аристакесян. В 1983 году по конкурсу поступила в Ереванский академический театр оперы и  
балета им. А. Спендиаряна вначале в качестве артистки хора, а с 1986 года – суфлера в итальянских операх, где и работает  
по сей день. В 1988 году поступила в Ереванский художественно-театральный институт на факультет театроведения (класс  
проф. Генриха Оганесяна). В Национальном оперном театре 10 лет занимала должность заведующего архивом музея, а также  
суфлера, систематизировала архив, составила подробный список всех спектаклей со дня основания театра - с 1933 года до  
наших дней. Занималась педагогической деятельностью в колледже при Хоровом обществе и Художественно-театральном ин-  
ституте на кафедре театроведения. С 1993 года статьи Н. Асмарян публикуются в республиканской прессе (“Республика Ар-  
мения”, “Голос Армении”, “ТВ канал”, “Эфир”, “Лрагир”, “Азг”, “Еражишт”), со дня основания сотрудничает с журналом “Музы-  
кальная Армения”, в газете “Республика Армения” вела рубрику “Культурная хроника”. С 2015 года – главный редактор газеты  
“Тбилисцы”.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՍՄԱՐՅԱՆ ՆԱՏԱԼՅԱ ԹԱՂԵՎՈՍԻՐ (ծ. 26.12.1963 թ., ք. Երևան) քառերգու, երաժիշտ: Ավարտել է  
Չկարտլի անվ. միջնակարգ հանրակրթական դպրոցը, Ա. Սպենդիարյանի անվ. ՄԵԴ (Ն. Մաթևոսյանի դասարանը), 1983-ին՝ Ռ. Մելիքյանի անվ.  
երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը (Մ. Արիստակեսյանի դասարանը), 1992-ին Երևանի քառերգուի և կիևոյի ինստիտուտի  
բազմալիտական բաժինը (դեկ. պրոֆ. Հենրիկ Հովհաննիսյան): Ընդունվել է մրցույթով Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի քառերգու  
դպրոց երգչախմբի արտիստ, հետագայում իտալական օպերաների հուշարար (1986-ից) առ այսօր, 10 տարի եղել է քառերգուի բանգարանի  
արխիվի վարիչ, որտեղ կարգավորել է կազմել է քառերգուի բոլոր ներկայացումների ցանկը՝ հիմնադրված 1933-ից առ այսօր: Դասավանդում է  
Երգչախմբային ընկերության և Երևանի քառերգուի և կիևոյի պետական ինստիտուտի քառերգուության ամբիոնում: Հեղինակ է և տպագրվում  
է հանրապետական ռուսալեզու մամուլում՝ 1993-ից՝ “Республика Армения”, “Голос Армении”, “ТВ канал”, “Эфир”, “Երաժիշտ” (ըստ  
բնագրերի եռլեզու) նաև հայերենով՝ «Լրագիր», «Ազգ», հիմնադրված օրվանից համագործակցում է «Երաժշտական Հայաստան» ամսագրին,  
“Республика Армения” բերրում վարել է “Культурная хроника” էջը: 2015 -ից՝ “Тбилисцы” բերրի գլխավոր խմբագիրն է:

**Information about the author:** ASMARYAN NATALYA T. (born 26.12.1963 Yerevan). Graduated from secondary school after Chkalov, music school  
after A. Spendiarov (pedagogue N. Matevosyan). In 1983 graduated with honors from musical school after R. Melikyan on a piano class  
(pedagogue M. Aristakesyan). In 1983 she entered the Yerevan Academic Theater of Opera and Ballet after A. Spendiaryan first as an artist  
of the choir and since 1986 as a prompter in Italian operas where she works till today. In 1988 she entered the Yerevan State Art and Theater  
Institute at the Faculty of Theater Studies (class of prof. Heinrich Hovhannisyen). At the National Opera House for over 10 years she held the  
position of the museum’s archive manager, as well worked as the prompter, systematized the archive, compiled a detailed list of all  
performances from the day the theater was founded, from 1933 to the present day. She was engaged in teaching activities at the college at  
the Choral Society and the Art and Theater Institute at the Department of Theater Studies. Since 1993 the articles of N. Asmaryan have been  
published in the republican press (“Republic of Armenia”, “Voice of Armenia”, “TV channel”, “Ether”, “Lragir”, “Azg”, “Erzhisht”). Since the day  
of foundation she collaborates with the journal “Musical Armenia”, with the newspaper “Republic of Armenia” led the rubric “Cultural Chronicle”.  
Since 2015 she has been the chief editor of the “Tbilisians” newspaper.

## Ամփոփում

Թատերագետ, ԹԹԿՊԻ դասախոս **Նարայա Թադևոսի  
Ասմարյան** – «Շառլ Ազնավուրի հիշագրական»:

Սույն բժականի հոկտեմբերի 1-ին 94 տարեկանում կյանքից  
հեռացավ մեծանուն ֆրանսիական շանտիե Շառլ Ազնավուրը,  
որին նվիրված է հոդվածը: Հեղինակը ներկայացնում է մեծանուն  
հային իր տաղանդի դրսևորումներով հատկապես որպես XX դարի  
կինեմատոգրաֆիայի տաղանդավոր դերասանի և ֆրանսիայի  
ամենամեծ երգչի (ձայնագրված շուրջ 1300 երգ՝ 100-ից ավելի ալ-  
բոմներում) և մեծ ներդրումով եվրոպական արվեստում: Իր մասին  
Շառլ Ազնավուրը գրում է, որ կայացել է բոլոր բնագավառներում իր  
համար հերթականությանը ըստ կարևորության նշելով՝ պոետ,  
կոմպոզիտոր, դերասան, երգիչ և կյանքի վերջին տարիներին գրող,  
որի գրքերը աննախադեպ տարածվում են և կարդացվում մեկ շնչով:

## Summary

Theatrical expert, Pedagogue of YSHC **Natalya T.  
Asmaryan**. - “Dedicated to memory of Charl Aznavour”.

The article is dedicated to the famous French singer Charles  
Aznavour passed away on October 1, 2010 at the age of 94. The  
author presents famous Armenian with his great talent,  
especially as a talented actor of the 20th century, and one of the  
greatest French singer (recorded over 1300 songs in over 100  
albums) who has a great contribution in European art. Charles  
Aznavour writes about himself that he has been a poet,  
composer, actor, singer and in the last years of life even writer  
whose books spread by unprecedented way and read in one  
breath.

Կ ո ը պ ո զ ի տ ո թ ի ժ ա ռ ա ն զ ու թ յ ա ն հ ե տ ա զ ո տ ու թ յ ու ն

**ԱՐՏՅՈՒ ԳԵՐԱՍԻՄԻ ԱՆԴՐԵԱՅԱՆ**

**Արվեստի պատմաբան, ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի մագիստրոսական 2-րդ կուրսի ուսանող**  
E-mail. harry.andrews.klavierist@gmail.com

ԵՊԿ «Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի կողմից Ծովինար Հրայրի Մովսիսյանի երաշխավորությամբ և ընդունվել տպագրության՝ դեկտեմբերի 11-ին գրախոսներ՝ Արա Բարաջանյան՝ «Առնո Բարաջանյանի հիշատակին» միջազգային հիմնադրամի նախագահ, ներկայացրել է հեղինակը՝ սեպտեմբերի 28-ին

**ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԵՐԿԵՐԸ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

**Խ**ՆՏ ժողովրդական արտիստ, պետական և միջազգային մրցանակների դափնեկիր, կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ Առնո Հարությունի Բարաջանյանի (1921-1983 թթ.) հիմնական և սիրելի երաժշտական գործիքը դաշնամուրն էր: Եթե ժամանակին գրվել է, որ նրա դաշնամուրային երկերում առավել լիակատար կերպով երևում են նրա ոճի փուլային զարգացման բոլոր շրջաններն անխտիր (15. էջ 11), ապա նրա երկերի համակողմանի ուսումնասիրումից պարզ է դառնում, որ նա չի գրել որևէ երկ, որտեղ դաշնամուրն այս կամ այն չափով տեղ չունենար:

Հայտնի է, որ Բարաջանյանն իր կատարողական արվեստը կատարելագործել է Մոսկվայում՝ նախ Ելենա Ֆաբիանի Գնեսինայի (1874-1967 թթ.), ապա Կոնրատանտին Նիկոլայի Իգումնովի (1873-1948 թթ.) և վերջինիս ասիստենտ Բորիս Մոխսելի Բեռլինի (1906-1995 թթ.) ղեկավարությամբ: Իգումնովը, որը 1924-1929 թթ. եղել է Մոսկվայի կոնսերվատորիայի դիրեկտոր (այդ թվականներին ռեկտոր չէր կոչվում պաշտոնը այլ դիրեկտոր), ոչ միայն պրոֆեսիոնալ դաշնակահար էր, այլ նաև Սերգեյ Ռախմանինովի արվեստի չգերազանցված գիտակ, որը երաժշտագետ Պավել Ալեքսանդրի Լամմի (1882-1951 թթ.) հետ միասին խմբագրել է Ռախմանինովի դաշնամուրային երկերի լիակատար ժողովածուն (4 հատորով. *М.-Т.*, 1948-1951 թթ). թերևս այսպես պիտի բացատրել նրա արվեստի մասին Բարաջանյանի խորը գիտելիքները:

Վերջինիս նվիրված գրականության մեջ գրեթե ոչ մի հիշատակություն չկա Բորիս Բեռլինի մասին: Այդ բացը լրացնելու համար նախևառաջ նշենք, որ դաշնակահար, կոմպոզիտոր, պրոֆեսոր Բորիս Բեռլինը 1931-1947 թթ. եղել է Կոնստանտին Իգումնովի ասիստենտը Մոսկվայի կոնսերվատորիայում (29. էջ 38): 1942 թ. փետրվարին, մինչ Իգումնովը հրավիրվել էր դասավանդելու Երևանի կոնսերվատորիայում, Սարատովի կոնսերվատորիայում տեղի է ունեցել Բեռլինի ուսանողների համերգը, որին մասնակցել է նաև Առնո Բարաջանյանը (29. էջ 40): Վերջինս, Ալեքսանդր Հարությունյանն ու Էդվարդ Միրզոյանը նրա մոտ ուսանել են Մոսկվայի Հայկական մշակույթի տանը 1946-1948 թթ. (29. էջ 42):

1948 թ. մարտի 24-ին վախճանվեց Կոնստանտին Իգումնովը որից հետո նրա դասարանն ստանձնեց երաժշտագետ, մանկավարժ Յակով Իսաակի Միլշտեյնը (1911-1981 թթ.). վերջինիս ղեկավարությամբ էլ Բարաջանյանը գերազանցությամբ ավարտեց Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը (34. էջ 49): Ժամանակակիցները հատկապես հիացմունքով են հիշում Մոսկվայի կոնսերվատորիայի փոքր դահլիճում տեղի ունեցած ավարտական համերգը (24.): Հայտնի է նաև, որ նույն 1948 թ. նա մասնակցել է ասպիրանտուրայի ընդունելության քննությանը, սակայն ինչ-ինչ պատճառներով «կտրվել» է (34. էջ 50)\*: (Ի դեպ՝ քննություններից մեկի ժամանակ Բարաջանյանը կատարել է Սկրյաբինի ոճով գրված մի էտյուդ\* [ըստ որոշ վկայությունների՝ իմպրովիզացիա (24.)] և մի ֆոքստորոտ. պարզ չէ, թե կոնկրետ որ՝ փոխադրման, ավարտական, թե ասպիրանտուրայի ընդունելության քննության մասին է խոսքը): Վերջերս դաշնակահարուհի Սոնա Արշակյանը հրապարակել է մի հոդված, ըստ որի՝ Բարաջանյանն ասպիրանտուրան շարունակել է Լեոնինգրադում (17. էջ 91): Այլ տվյալների համաձայն՝ 1950 թ. գրված «Հերոսական բալլադը» որպես դիպլոմային աշխատանք ներկայացվել է Մոսկվայում (19. էջ 2): Իսկ Արա Բարաջանյանը վկայում է, որ իր հայրը ասպիրանտ չի եղել ոչ Մոսկվայում, ոչ Լեոնինգրադում\*:

1950-1956 թթ. նա դաշնամուրի բաժնի դասախոս էր Երևանի կոնսերվատորիայում. նրա ուսանողներից են եղել Ռոզա Արմենակի Թանդիլյանը, Վահագն Պարույրի Ստամբուլյանը և Ռոբերտ Անդրեյի Շուգարովը: Նրանց հուշերն ու վկայությունները Բարաջանյան-մանկավարժի մասին տեղ են գտել զանազան ամսագրային հրապարակումներում, ինչպես նաև մոսկվա-

\* Արա Բարաջանյանի՝ տողերիս հեղինակին ուղղված անհատական նամակից (2017 թ. նոյեմբերի 21):

## Կոմպոզիտորի ժառանգության հետազոտություն

բնակ երաժշտագետ Միխայիլ Իվանի Տեր-Օհանյանի (1918-2011 թթ.) «*Арно Бабаджанян*» ռուսերեն մենագրությունում (34. էջեր 276-284): Ըստ այդմ՝ պարզվում է, որ իր վարած դասերի ժամանակ նա ուսանողներին ավելի հաճախ հանձնարարում էր արևմտյան (Բախ, Բեթհովեն, Շոպեն, Բրամս և այլք), ինչպես նաև ռուս (օրինակ՝ Ռախմանինով) դասական կոմպոզիտորների մանրանվագներ և պոլիֆոնիկ ստեղծագործություններ, մինչդեռ սոնատների և կոնցերտների հանդեպ առավել զգոն էր. ավելին՝ նա հատուկ ուշադրություն էր դարձրել հստակ ռիթմին և առաջարկվող ապլիկատորայի խստիվ պահպանմանը: Տեր-Օհանյանի հրապարակած տվյալներին վստահելու դեպքում ստացվում է, որ Բաբաջանյանն իր մանկավարժական պրակտիկայում էլ գերադասում էր կատարողի անհատական ստեղծագործ մոտեցումը տվյալ ստեղծագործությանը (առանց բուն տեքստն աղավաղելու, իհարկե) և դժվար էր տանում զուտ տեխնիկապես գրագետ կատարումները: Հարանման կարծիքներ կարելի է հանդիպել Բաբաջանյանի «*Израют психисты*» հոդվածում, որի ձեռագիրը հեղինակի ընտանիքի սեփականությունն է. այս հոդվածի մեջբերմամբ է ավարտվում Տեր-Օհանյանի մենագրության «*Бабаджанян-педагог*» գլուխը (34. էջ 284):

Հայտնի է, որ Բաբաջանյանը 1955 թ. ստացել է դոցենտի կոչում: Անտեստավորման գործընթացին վերաբերող փաստաթղթերը պահպանվել են ինչպես Հայաստանի ազգային արխիվում (9.), այնպես էլ Ռուսաստանի պետական արխիվում (22.): Կից երաշխավորագրերը հեղինակել են այնպիսի երաժիշտներ, ինչպես Դմիտրի Շոստակովիչը, Հենրի Նեյխաուզը, Յակով Միլշտեյնը և Դավիդ Օյստրախը, ընդ որում՝ Շոստակովիչի և Միլշտեյնի երաշխավորագրերը հրապարակված են: Հայտնի է նաև, որ իր կյանքի վերջին տարիներին Բաբաջանյանը եղել է Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի նախագահ (34. էջ 284): Ավելին՝ որոշ փաստագրական ֆիլմերում (ինչպես, օրինակ, 2011 թ. թողարկված «Մեր Առնոն» ֆիլմում) Բաբաջանյանին վերագրվել է պրոֆեսորի կոչում, մինչդեռ այս տվյալը չունի որևէ փաստական հիմք:

Կասկածից վեր է, որ Բաբաջանյանի դաշնամուրային գործերի, ինչպես նաև այլ երկերի դաշնամուրի նվագաբաժնի լավագույն կատարողը եղել է հեղինակն ինքը. նրա կատարումների ձայնագրությունները ժամանակի ընթացքում չեն կորցրել ոչ միայն իրենց տեխնիկական որակը, այլև գեղարվեստական և պատմական նշանակությունը: Բաբաջանյանի արվեստն ուսումնասիրող երաժշտագետների և դաշնակահարների համար դրանք ունեն սկզբնաղբյուրի և չգերազանցված մեկնաբանման արժեք:

Հայտնի է նաև, որ նրա կատարողական արվեստը բարձր է գնահատվել այնպիսի հռչակավոր վիրտուոզ դաշնակահարների կողմից, ինչպիսիք են Ալեքսանդր Գոլդենվեյզերը, Սվյատոսլավ Ռիխտերը, Էմիլ Գիլելսը, Լև Օրորինը: Յավայի է, որ պահպանվել են նրա կատարումների հատուկ նախագրություններ և տե-

սագրություններ միայն, որոնք շատ հաճախ վերաթողարկվել են: Ավելին՝ 1956 թ. Մոսկվայում մշտական բնակություն հաստատելուց հետո Բաբաջանյանն աստիճանաբար հրաժեշտ տվեց կատարող-դաշնակահարի կարիերային և իրեն ամբողջովին նվիրեց կոմպոզիտորական արվեստին:

Պատահական չէ, որ հատուկ ուշադրություն է դարձվում նրա մենանվագ դաշնամուրային երկերին: Դրանք ժամանակին արժանացել են մասնագիտական վերլուծության այնպիսի երաժշտագետների կողմից, ինչպիսիք են Եվգենիա Գիլինան, Մայա Պրիցկերը, Շուշանիկ Աբդյանը, Սուսաննա Ամատունին և այլք: Տեր-Օհանյանի մենագրությունում խնդրո առարկա դաշնամուրային երկերին հատկացված է առանձին գլուխ՝ «*Антология фортепианного творчества*», որտեղ կարելի է գտնել նոր տվյալներ դրանց ստեղծման և հետագա պատմության մասին: Այսօր էլ երաժշտագիտական գրականությունը պարբերաբար համալրվում է Բաբաջանյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հոդվածներով: Այնուամենայնիվ, Բաբաջանյան-արվեստագետի կերպարի ամբողջացման խնդիրը դրանով չի լուծվում, անհրաժեշտ են նրա մասին տվյալների նոր որոնումներ թանգարաններում, գրադարաններում, պետական արխիվներում և այլուր:

Բանն այն է, որ ի տարբերություն խորհրդահայ այլ կոմպոզիտորների, որոնց ստեղծագործական դիմապատկերները հիմնականում ամբողջական են և չունեն հավելյալ ճշտման կարիք, Առնո Բաբաջանյանի կյանքի և ստեղծագործության առթիվ կան բազմաթիվ հարցականներ, որոնք վերաբերում են ինչպես ժամանակագրությանը, այնպես էլ ավելի խորը հարցերի, թե՛ տվյալ ստեղծագործությունը ինչ հանգամանքներում է գրվել, ում համար, պրեմիերան երբ է եղել, ինչ մրցանակի է արժանացել և այլն: Դա վերաբերում է նաև նրա դաշնամուրային երկերին: Կոմպոզիտորի որոշ երկերի ստեղծման թվականը տարբեր աղբյուրներում տատանվում է ինչպես մեկ-երկու, անգամ էլ մինչև տասը տարի ժամանակահատվածում: Եվ այդ հակասական տվյալները հանդիպում են այնպիսի երաժշտագետների աշխատանքներում, ինչպիսիք են պրոֆեսորներ Սվետլանա Սարգսյանը և երջանկահիշատակ Գևորգ Գյոդակյանը: Խորին հարգանքը հիշյալ երաժշտագետների նկատմամբ՝ չենք կարող չբարձրաձայնել այս խնդիրների մասին, որոնք արդեն վերաճվել են գիտական թնջուկի:

Նշենք վիճահարույց մի քանի օրինակ: 1947 թ. Պրահայում անցկացված Երիտասարդության և ուսանողության առաջին համաշխարհային փառատոնի կոմպոզիտորական մրցույթին Բաբաջանյանը դր ստեղծագործություններն է ներկայացրել\* և ինչ մրցանակի է արժանացել: Ինչո՞ւ են այդ մրցույթում Բաբաջանյանի ստացած երկրորդ (11. էջ 33) մրցանակը դարձնում առաջին (12. էջ 120): Նույնպես և «Հերոսական բալլա-

\* Եթե Բաբաջանյանին նվիրված գրականության մեջ որպես 1947 թ. Պրահայի փառատոնին հնչած պիեսներ նշվում են Պրեկյուդը, Վադարշապատի պարը և Տոկկատան

դի» համար նրա ստացած Ստալինյան երրորդ կարգի (28.) մրցանակը այժմ որոշ աղբյուրներում դարձել է առաջին՝ առանց որևէ հղման կամ ապացույցի: Եթե այդ տվյալների հեղինակները փորձում են դրանով ավելի բարձրացնել Բարաջանյանի մեծությունը և նրան ավելի վառ գույներով ներկայացնել, մենք հարկ ենք համարում նշել, որ դրա կարիքն ամենևին չկա. Բարաջանյանի արվեստը առանց այդ էլ հանձարեղ է:

Խնդիրը ոչ միայն վերոհիշյալ երաժշտագետների ներկայացրած հակասական տվյալների մեջ է: Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Բարաջանյանի ֆոնդում հանդիպել ենք որոշ կենսագրական ակնարկների և ստեղծագործությունների ցուցակների, որոնք կազմվել են թերևս նրա կողմից. Տեր-Օհանյանը դրանք հիշատակում է որպես ինքնակենսագրական ուրվագիր (34. էջ 63): Այստեղ և այլուր խնդիրն առավել առնչվում է թվագրմանը: «Վաղարշապատի պարը», ըստ մի ձեռագիր ցուցակի, գրվել է 1951-1952 թթ. ընթացքում (5. № 1356-1358), այնինչ հնչել է Պրահայում 1947 թ. և տպագրվել Երևանում 1948 թ.: Կամ՝ դեռ պարզ չէ՝ «Վեց պատկեր»\* շարքի՝ ՀԽՍՀ պետական մրցանակի արժանանալու տարեթիվը, այն տարբեր աղբյուրներում տատանվում է 1965-1970 թթ. միջև: Իսկ պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի անգլալեզու հոդվածներից մեկում «Մոտորում» պիեսին տրվել է 1980 թվագրումը (37.), այնինչ այն տպագրվել է 1977 թ. և առաջին անգամ հնչել դեռևս 1969 թ.:

Իսկ թե ինչու են առաջացել այսպան խնդիրներ՝ գոյություն ունեն նաև հասկանալի պատճառներ: Բարաջանյանն իր նոտային ձեռագրերում շատ հաճախ թվական չի դրել: Հետո՝ երեսնամյա ծանր հիվանդության հետ մեկտեղ ստեղծագործական ու համերգային բուռն գործունեության պատճառով նա չհասցրեց գրել որևէ ընդարձակ ինքնակենսագրություն, որտեղ կարող էր տեղ գտնել նաև նրա երկերի ցուցակը՝ ճշգրիտ թվագրմամբ: Այս ամենը հաշվի առնելով կարող ենք եզրակացնել, որ Բարաջանյանի ստեղծագործական կենսագրությունը պիտի վերականգնվի երկրորդական աղբյուրների՝ նրա գրած և ստացած նամակների, հեռագրերի, խորհրդային մամուլի, ՀԽՍՀ և ԽՍՀՄ կոմպոզիտորների միությունների տեղեկագրերի, ժամանակակիցների հուշերի և այլնի միջոցով:

Ստորև ներկայացվում են ինչպես հաստատված, այնպես էլ հետագա ճշման կարիք ունեցող տվյալներ Բարաջանյանի հիմնական դաշնամուրային երկերի մասին. առավել անհայտ և անտիպ դաշնամուրային երկերին և դրանց հետ առնչվող տարբեր խնդիրներին անդրադառնալու համար անհրաժեշտ է լինելու առանձին ուսումնասիրություն:

**ՊՐԵԼՅՈՒՎ:** Առնո Բարաջանյանի դաշնամուրային երկերի բոլոր հեղինակային ժողովածուները սկըս-

վում են այս պիեսով: Դա կարելի է բացատրել ինչպես հեղինակային կամքի սկզբունքով, այլև նրանով, որ սա Բարաջանյանի հասուն շրջանի առաջին երկերից է: Հայտնի է, որ հեղինակն այս պիեսը կատարել է 1947 թ. Պրահայում անցկացված միջազգային երիտասարդական-ուսանողական փառատոնի ժամանակ. թերևս այդ պատճառով է այն սովորաբար թվագրվում հենց 1947 թ., չնայած ԳԱԹ Բարաջանյանի ֆոնդում պահվող անթվակիր (մոտ 1961 թ.) անգլալեզու համերգային բուկլետում այն թվագրված է 1939 թ. (5. № 1359), Տեր-Օհանյանի մենագրության մեջ՝ 1943 (34. էջ 316), Մուսաննա Ամատունու մենագրության մեջ՝ 1940 թ. (15. էջ 13), իսկ ԳԱԹ-ում պահվող վերոհիշյալ ձեռագիր ցուցակներից մեկում՝ 1938 թ. (5. № 1426), երբ հեղինակն ընդունվեց Գնեսինների ինստիտուտ:

Սեդա Թաշչյանի վկայությամբ՝ այս պիեսը նվիրված է Կոնստանտին Իգումնովին (7. էջ 36): Այլ տեղեկություն ունի Միխայիլ Տեր-Օհանյանը, ով իր մենագրության մեջ Բարաջանյանի կնոջը՝ Թերեզա Հովհաննիսյանին նվիրված գլխում գրում է, որ վերջինիս անունը նոտաների մեջ հանդիպել է “Будь со мной” երգի տպագիր տարբերակում և այս Պրեյլուդի ինքնագրում (34. էջ 39), որն, ըստ ամենայնի, կոմպոզիտորի ընտանիքի սեփականությունն է:

**ՎԱՎԱՐՇԱՊԱՏԻ ՊԱՐ:** Բարաջանյանի ամենահայտնի դաշնամուրային երկերից է: Հայտնի է, որ հեղինակն այս պիեսը ևս կատարել է 1947 թ. Պրահայի փառատոնի ժամանակ: Այժմ էլ այս պիեսը սովորաբար թվագրում են 1947 թ., չնայած այլ աղբյուրներում կարելի է հանդիպել 1944 թ. (5. № 1359, 34. էջ 217, 316), իսկ “Арно Бабаджанян — мой современник” ֆիլմում (1967 թ.)՝ 1943 թվագրմանը:

Տվյալ պիեսի հիմքում ընկած է «Ռանգի», «Րանգի» կամ «Երանգի» կոչված երևանյան պարեղանակը, որը ժամանակին դաշնամուրի համար մշակել են Կոմիտաս վարդապետը, Նիկողայոս Տիգրանյանը, Գենարի Կորգանովը և այլք: Ժողովրդական մեղեդու երեք (Տիգրանյան, Կոմիտաս, Բարաջանյան) դաշնամուրային մշակումների համեմատական վերլուծություն է իրականացրել Մուսաննա Ամատունին (15. էջ 16-19):

**ԷՔՍՊՐՈՄՏ:** Վստահելով Բարաջանյանի կյանքի և ստեղծագործության պաշտոնական ժամանակագրությանը (12. էջ 120), որտեղ այս պիեսը թվագրված է 1936 թ., կարող էինք ենթադրել, թե այն գրվել էր Վարդգես Տայյանի հանձնարարությամբ, բայց բոլորովին այլ են տեղեկությունները Տեր-Օհանյանի մոտ: Մի տեղ նա բերում է կոմպոզիտորի մոսկովյան բնակարանում պահվող ձեռագիր «Էքսպրոմտ»-ի տվյալները, թվագրված՝ 1935 թ. հունիսի 1, տեմպը՝ *Andantino*, ակնհայտ նմանություն կա Ռախմանինովի «Երաժշտական ակնթարթներ» շարքի (օր. 16) 4-րդ պիեսին (34. էջ 25), մի ուրիշ տեղ էլ՝ որ գրվել է «Պրեյլուդ»-ի, «Վաղարշապատի պարի» և դաշնամուրային Կոնցերտի հետ միաժամանակ (34. էջ 74), ավելի կոնկրետ՝ 1944 թ. (34. էջ 316): Մնում է ենթադրել, որ 1935 (կամ 1936) թ. զբրվածը մի ուրիշ էքսպրոմտ է, քանի որ ներկա «Էքսպրոմտ»-ը հազիվ թե այդչափ առնչություն ունենա Ռախ-

(34. էջ 127), ապա ըստ 1947 թ. խորհրդային մամուլի՝ մրցանակի է արժանացել դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված կոնցերտը (11. էջ 33):

\* Պրոֆ. Ռոզա Թանդիլյանի հետ տողերիս հեղինակի մասնավոր զրույցից (2017 թ. դեկտեմբերի 13)

մանհնովի արվեստի հետ. այն ավելի հայկական է, ավելի ինքնուրույն, չնայած Ամատունին նկատել է Սարգիս Բարխուդարյանի դաշնամուրային մանրանվագների որոշակի ազդեցություն (15. էջ 14-15): Այս պիեսի 1944 թվագրումը հաստատվում է նաև արխիվային նյութերով (5. № 1426):

Հայկական հանրագիտարաններում, երբ խոսվում է Բարաջանյանի՝ 1947 թ. Պրահայի դեմոկրատական երիտասարդության միջազգային փառատունին մասնակցած լինելու մասին, այնտեղ հնչած երեք պիեսների շարքում «Պոլիֆոնիկ պարտիտայի» երրորդ մասի՝ «Տոկկատայի» փոխարեն նշվում է «Էքսպրոմտը»: Այդ հոդվածների հեղինակը երաժշտագետ Գևորգ Գյոդակյանն էր, որի անունը նշված է Հայկական սովետական հանրագիտարանում, «Музыкальная энциклопедия» (21.) և «Die Musik in Geschichte und Gegenwart» (35.) հանրագիտարաններում Բարաջանյանին նվիրված հոդվածների ներքո: Կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության պաշտոնական ժամանակագրությունում, Տեր-Օհանյանի մենագրության մեջ, ինչպես նաև ժամանակակիցների հրատարակված հուշերում Պրահայում հեղինակի կատարած երեք պիեսների շարքում թվարկվում է ոչ թե «Էքսպրոմտը», այլ «Տոկկատան»:

**ԿԱՊՐԻՉՉՈՒ:** Բարաջանյանի կյանքի և ստեղծագործության ժամանակագրության մեջ այս պիեսը թվագրված է 1951 թ.: Այլ աղբյուրներում, ըստ Միխայիլ Տեր-Օհանյանի վկայության, գրման թվականը տատանվում է 1950-1953 թթ. միջև՝ ինքնագրի անհայտ լինելու պատճառով (34. էջ 127-128), նա (Տեր-Օհանյանը) թվագրել է 1952 թ.: Այս թվագրման հիմքը, թերևս, Անահիտ Գրիգորյանի գրքուկն է (23. էջ 39): Վերջինս, ապա նաև Սուսաննա Ամատունին (15. էջ 55) գրում են, որ «Կապրիչչո»-ն գրվել է «Տրիոյի» հետ գրեթե միաժամանակ: Ոճի, ոգու և տեխնիկայի առումներով այն բավականին մոտ է ինչպես «Տրիոյին» (1952 թ.), այնպես էլ հանրահայտ «Հերոսական բալլադին» (1950 թ.):

Մեզ հայտնի չէ որևէ այլ տեղեկություն «Կապրիչչո»-ի ստեղծման և այլ տվյալների մասին: Միայն պրոֆ. Ռ. Ա. Թանդիլյանը վկայում է, որ այն առաջին անգամ հնչել է հեղինակի կատարմամբ 1952 թ. Մոսկվայում (տես՝ \* էջ 66) : Իսկ Երևանի կոնսերվատորիայի 1953 թ. շրջանավարտ Կարինե Սաֆարյանն իր «*Арно Бабаджанян и его Героическая баллада*» ավարտական աշխատանքում (գիտական դեկավար՝ պրոֆ. Գ. Գ. Տիգրանով) գրում է. «1952-53 թթ. были для композитора особенно плодотворными. Он создает сначала «Каприччио» для ф-п — небольшую пьесу, ...вскоре прочно вошедшую в репертуар почти всех армянских исполнителей. Как говорит сам композитор, в «Каприччио» он стремился создать простую и доступную по музыке пьесу для широкой массы слушателей» (32. էջ 14):

**ՊՈԼԻՖՈՆԻԿ ՍՈՆԱՏ:** Նախապես խորագրված է եղել «Պոլիֆոնիկ պարտիտա», հետագայում միայն վերախմբագրվել ու հրատարակվել (1956 թ.) որպես «Պոլիֆոնիկ սոնատ»: Ի դեպ՝ գրականության մեջ (15. էջ 15, 34. էջ 25) կան հիշատակություններ Բարա-

ջանյանի դաշնամուրային մեկ այլ Սոնատի մասին, որն ստեղծվել է 1940-ական թվականների սկզբին ու մնացել անտիպ. դրա մասին առանձին վկայություն է հրատարակել երաժշտագետ Ռ. Ա. Աթայանը (19. էջ 386):

Բարաջանյանի այս Սոնատի թվագրումն էլ է հարցականի տակ դրված: Պաշտոնական ժամանակագրությունում այն թվագրվում է 1947 թ., այլ աղբյուրներում՝ 1946, իսկ դաշնակահար Հայկ Մելիքյանի ձայնագրած «*Arno Babadjanian: Complete piano works*» պրոմում այն ժամանակագրապես միացել է անտիպ սոնատին և թվագրվել 1942-1947 (36.): Երաժշտագետ Լիլիթ Եփրեմյանի «Հ. Ի. Լիտինսկու դասարանում» հոդվածում տեղ է գտել ՀԽՍՀ արվեստի վարչության պետ Ջավեն Վարդանյանին ուղղված մի նամակ, որը ստորագրել են Ադամ Խուդոյանը, Էդվարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը և Անոն Բարաջանյանը 1946 թ. մայիսի 23-ին. նրանք գրում են, որ Լիտինսկու դասարանում ավարտում են իրենց դաշնամուրային պոլիֆոնիկ սոնատների առաջին մասերը (6. էջ 374-375): Հարությունյանի, Միրզոյանի և Խուդոյանի պոլիֆոնիկ սոնատները ևս թվագրված են 1946 թ.:

Ալեքսանդր Հարությունյանն իր հուշերում գրում է, որ Լիտինսկու դասարանում Բարաջանյանի գրած երկերն առանձնանում էին մշակվածությամբ և գործնականում փոփոխության չէին ենթարկվում (10. էջ 27): Այլ է «Պոլիֆոնիկ սոնատի» դեպքը. վերը տեսանք, որ այն հրատարակվելուց առաջ ենթարկվել է վերախմբագրման: Առաջին մասը «Պրելյուդ»-ի փոխարեն նախապես խորագրված է եղել «Ինվենցիա» (7. էջ 34, 32. էջ 10): Ի դեպ, Հարությունյանի, Միրզոյանի և Խուդոյանի պոլիֆոնիկ սոնատները ևս սկսվում են «Ինվենցիայով»:

Էդվարդ Միրզոյանն այս սոնատի մասին գրում է. «*Познакомившись в 1947 году в Москве с «Полуфонической сонатой» Арно Бабаджаняна, он [կոմպոզիտոր Միքայել Միրզայանը] сказал: «Анонн գեղիայնի բան ա գրել». По возвращении в Ереван, он организовал в школе имени Спендиарова прослушивание этого произведения (вновь в исполнении автора). Однако коллеги его переглядывались в недоумении, не проявляя должного воодушевления. Отец был смущен и расстроен...» (27. էջ 6-7). Դա կարելի է բացատրել Վանո Մուրադելու «*Великая дружба*» օպերայի մասին ԽՄԿԿ Կենտկոմի 1948 թ. փետրվարի 10-ի որոշմամբ, որի հետևանքով Մուրադելին, Պրոկոֆևը, Շոստակովիչը, Խաչատրյանը և այլ կոմպոզիտորներ ևս համարվում էին ֆորմալիստներ և ենթարկվում անհիմն քննադատության: Այդ պաշտոնական հակաֆորմալիստական հայացքները հոգուտ վերոհիշյալ կոմպոզիտորների վերանայելուն էր ուղղված ԽՄԿԿ Կենտկոմի 1958 թ. մայիսի 28-ի որոշումը:*

Բարաջանյանի այս Սոնատի երրորդ հատվածը՝ «Տոկկատան», որի վերլուծությունն առկա է Կարինե Սաֆարյանի վերոհիշյալ ավարտական աշխատանքում (32. էջ 84-88), նույնպես հնչել է 1947 թ. Պրահայի համաշխարհային ուսանողական փառատունի ժամանակ իբրև առանձին պիես: Հեղինակն այս սոնատն ամբող-

ջությամբ առաջին անգամ կատարեց 1958 թ. մայիսի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների տան դահլիճում՝ «Անդրկովկասյան երաժշտական գարուն» փառատոնի շրջանակներում (7. էջ 34, 11. էջ 319, 27. էջ 274):

**ՎԵՑ ՊԱՏԿԵՐ:** Այս ցիկլը սովորաբար թվագրվում է 1965 թ., այսինքն իբր գրվելուց հետո միանգամից է ձայնագրվել ու հրատարակվել, այն ինչ *“Арно Бабаджанян — твой современник”* ֆիլմում (1967 թ.) և պաշտոնական համառոտ ժամանակագրությունում այն թվագրված է 1964 թ.: Իսկ Մոսկվայի Մ. Գլինկայի անվան երաժշտական թանգարանում պահվող ձեռագրերից (31, № 29) պարզվում է, որ այս ցիկլի վրա հեղինակը սկսել է աշխատել Դիլիջանում 1963 թ. (ի դեպ, այդ թվականին է բացվել Կոմպոզիտորների ստեղծագործական տունը, այդ թվականին վախճանվեց հեղինակի հայրը՝ Հարություն Բաբաջանյանը):

Հայտնի է, որ այս ցիկլի համար Բաբաջանյանն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի, իսկ թվականը տարբեր աղբյուրներում տատանվում է 1965-1970 թթ. միջև: Առավել հավանական է 1967 թ. (21.), չնայած այս տվյալը դեռ կարիք ունի հաստատման՝ ըստ պաշտոնական խորհրդահայ մամուլի: Նույն 1967 թվականին այս պիեսը ներկայացվել է ԽՍՀՄ պետական մրցանակի, բայց չի արժանացել (30.):

Խորհրդային ձայնաթողարկումներում «Վեց պատկեր» շարքը երբեմն ստացել է *“օր. 47”* համարը: Երաժշտագետ Իրինա Ջոլոտովան իր *“Бабаджанян - нушанст”* հոդվածում վկայակոչել է ՀՀ Հանրային ռադիոյի ֆոնդերում պահվող երկու հեղինակային ձայնագրություն՝ 1968 և 1983 թթ. (13. էջ 58): Արա Բաբաջանյանը համացանցում հրապարակել է այս ցիկլի ևս մի տեսագրություն՝ հեղինակային կատարմամբ (1977 թ.): Կոմպոզիտորին նվիրված փաստագրական ֆիլմերում տեղ են գտել նաև այլ լսողա տեսա ձայնագրություններ: Հայտնի է մի ձայնագրություն՝ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանի կատարմամբ (թողարկվել է 1972 թ.), որն, ըստ Տեր-Օհանյանի (34. էջ 137-138) և այլոց վկայության, հեղինակի հետ բանավեճի առիթ է դարձել:

Հայաստանի ազգային գրադարանում առկա է «Վեց պատկեր» շարքի մի եզակի հրատարակություն, որի առկա օրինակի վրա պահպանվել է Հայֆիլիարմոնիայի գրադարանի կնիքը, և որը չի հանդիպում այլուր, նույնիսկ Ռուսաստանի պետական գրադարանում:

Ներկայացնում ենք այդ «նորահայտ» հրատարակության տվյալներն ամբողջությամբ. նոտային տեքստի առաջին էջի անկյունում տպված է *“на правах рукописи”*, իսկ կազմի ետևի կողմում՝ *“Отпеч [атано] в нотопеч [атном] отд [елениу] Пр [оизводственно] К [омбина]та Музфонда СССР по За-к [азу]. N395 /тираж 80 экз [емпляров]. / /Мос-ква, Г-99, Смоленская наб [ережная] 2 (հապավված բառերի լրացումը մերն է – Ա. Ա.)”*: Սրա և բուն էջերը, և կազմը խմբագրական մաքրագրի լուսատիպ վերարտադրություն են, ինչը ոչ հազվադեպ է հանդիպում խորհրդային պոլիգրաֆիայի պատմության մեջ: Առաջինից բացի մյուս պիեսների վերնագրերն զրադ-

եցրել են առանձին թերթ, և ամեն պիեսից առաջ անկյունում նշված է կոմպոզիտորի անունը՝ *А. Бабаджанян*: Ընդհանուր՝ 41 էջ: Մեր կարծիքով՝ սա փորձնական հրատարակություն է կամ նախահրատարակչական օրինակ (դրա մասին է վկայում 80 օրինակով տպված լինելը, ինչպես նաև համախորհրդային երաժշտական գրականության տարեգրում (*“Нотная летопись”*) չհիշատակվելը), և հնարավոր հիմք կարող է ծառայած լինել մոսկովյան հետագա հրատարակությունների համար (օրինակ՝ 1966 թ. առանձին տպագրվածը և սրան հետևողները), որոնցում արդեն կատարվել են տարբեր տեքստային փոփոխություններ:

**ՊՈՆՄ:** Հայտնի է, որ այս պիեսը նախատեսվել է պարտադիր կատարման համար Պ. Բ. Չայկովսկու անվան երրորդ միջազգային մրցույթի (1966 թ. հունիս) երկրորդ փուլում (5. № 409-410): Այդ մրցույթում դաշնամուր անվանակարգում առաջին մրցանակն ստացավ համաշխարհային ճանաչում ունեցող հանրահայտ Գրիգորի Սոկոլովը, այդ ժամանակ 16-ամյա դաշնակահար էր: Թերևս այդ պատճառով է ընդունված այս պիեսը թվագրել 1966 թ., իսկ ինքը Բաբաջանյանն այս պիեսի ստեղծման մասին նշել է՝ *“Весной прошлого года”* (16. էջ 8), այսինքն՝ 1965 թ.:

Ի դեպ՝ ԳԱԹ Բաբաջանյանի ֆոնդում պահվում է 1965 թ. փետրվարի 17-ին կոմպոզիտորի և ԽՍՀՄ Մինկուտի երաժշտական վարչության միջև կնքված մի պայմանագիր (5. № 410), ըստ որի՝ պատվիրվող պիեսը ներկայացնելու վերջնաժամկետն է 1965 թ. ապրիլի 15-ը, իսկ փառատոնի երկրորդ փուլի համար հատուկ գրված պիեսների փակ մրցույթի արդյունքը կհայտարարվի ոչ ուշ, քան նոյեմբերի 1-ը: Այդ մրցույթում Բաբաջանյանի «Պոեմը» արժանացել է առաջին մրցանակի (33, 34. էջ 155) և, ըստ պայմանագրի, հրատարակվել մրցույթի ավարտից քիչ անց:

**ՄՏՈՐՈՒՄ:** Չնայած այս պիեսը ձայնագրվել է հեղինակի կատարմամբ (1978 թ.) և հրատարակվել նույն ժամանակահատվածում (1977 թ.), այն այսօր էլ համարվում է Բաբաջանյանի՝ առավել անհայտ ստեղծագործություն (36), ինչն իրականությանը համապատասխանում է մասամբ: Տեր-Օհանյանի մենագրության վերջում կա Բաբաջանյանի հիմնական երկերի մի ցուցակ, որտեղ *“Раздумье”* անվան մասին տողատակում գրված է. *“Это единственная пьеса, оставшаяся в рукописи. Все остальные изданы”* (34. էջ 317). Պրոֆ. Թանդիլյանի կազմած ժողովածուի (2006 թ.) ներածականում ևս տվյալ պիեսի մասին նշված է՝ «հրատարակվում է առաջին անգամ»: Այս աղբյուրներում, ըստ երևույթին, անտեսված է 1977 թ. երևանյան անթոլոգիան, որտեղ «Մեղեդու» և «Հումորեսկի» հետ տեղ է գտել նաև այս պիեսը, մյուս կողմից՝ այդ ժողովածուն հաշվի է առնվել 1983 թ. հրատարակված «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների անվանացանկում»:

Բաբաջանյանի կյանքի և գործունեության պաշտոնական ժամանակագրությունում այն «Մեղեդու» և «Հումորեսկի» հետ թվագրվում է 1972 թ. (12. էջ 120), պրոֆ. Սվետլանա Սարգսյանի վերոհիշյալ հոդվածում՝

1980 (37), իսկ Գլինկայի անվան թանգարանում պահվող ինքնագիրը մակագրված է. *“Впервые была исполнена в Париже 23 мая 1969 г. на фестивале Советской музыки”* (31. № 34, 34. էջ 131):

**ՄԵՂԵՂԻ:** Այս և հաջորդ պիեսները կոմպոզիտորը ստեղծել է իր որդու՝ Արա Բարաջանյանի համար՝ իբրև Մոսկվայի Լուսնաշարսկու անվան պետական թատերական ինստիտուտի (ГИТИС) երաժշտական բաժնի պարտադիր դաշնամուրի դասընթացի քննական ծրագրի մաս (34. էջ 130): Գլինկայի անվան թանգարանում պահվող ինքնագիրն (31. № 32) ունի ընծայագիր՝ *“Посвящаю моему сыну Араику для исполнения в институте по общему ф-п.”*:

Այս պիեսը պաշտոնական ժամանակագրությունում թվագրվում է 1972 թ. (12. էջ 120), Հ. Մելիքյանի այբոմում՝ 1973 (36), իսկ ինքնագիրն ունի հստակ թվագրում՝ 1970 թ. հունվարի 17 (31. № 32): Բացահայտ է «Մեղեդու» նմանությունն Արամ Խաչատրյանի դաշնամուրային «Անդանտինոյի» (1926 թ.) հետ: Դա հնարավոր ենք համարում բացատրել հետևյալ կերպ. այս պիեսով կոմպոզիտորը, իր իսկ խոստովանությամբ, ցանկացել է մտավոր վերադարձ կատարել դեպի մանկություն (15. էջ 91):

**ՀՈՒՄՈՐԵՍԿ:** Այս պիեսը գրվել, առաջին անգամ հրատարակվել և ձայնագրվել է նախորդի հետ գրեթե միաժամանակ (համապատասխանաբար 1970, 1976 և 1978 թթ.) և նախատեսված է կատարման համար իբրև ինստրուկտիվ-ուսուցողական ստեղծագործություն, որտեղ դաշնակահար Հայկ Մելիքյանը նույնիսկ նկատել է ջազային տարրեր (36.): «Մեղեդին» և «Հումորեսկը» մի յուրօրինակ ցիկլ են կազմում, քանի որ ունեն շատ նմանություններ: Չնայած դրան, Տեր-Օհանյանը որոշ կասկած է հայտնել այս երկու պիեսները մի ցիկլում միավորելու առթիվ (34. էջ 125, 130-131):

Հավելենք նաև, որ Բարաջանյանն իր հարցազրույցներում ցանկություն է հայտնել գրել մանկական պիեսների մի շարք (34. էջ 143), որտեղ պիտի ներառվեին նաև «Մեղեդին» և «Հումորեսկը» (4. էջ 18):

**ԷԼԵԳԻԱ:** Այս պիեսը հիմնված է Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» հայտնի երգի մեղեդու վրա և նվիրված է Արամ Խաչատրյանի հիշատակին, որը վախճանվեց 1978 թ. մայիսի 1-ին Մոսկվայում: Ինքնագիրը (3.), որը հեղինակը նվիրեց Խաչատրյանի երևանյան տուն-թանգարանին, թվագրված է 1978 թ. *“июнь 25-го /Москва”*:

Այս պիեսի մասին Բարաջանյանն իր «Ուզում եմ հուզել հոգիները» նշանավոր հարցազրույցում պատմում է. *“Когда не стало Арама Хачатуряна, я также ощутил необходимость выражения моих чувств посредством музыки. Сочинил Элегию для фортепиано, посвященную его памяти. Использовал в ней мелодию нашего замечательного ашуга, великого поэта Саят-Новы. В этом есть своя история. Летом 1938 г. я приехал на каникулы в Ереван. Застал там Арама Хачатуряна, который писал музыку, заказанную для Декады армянской культуры в Москве, планируемой на*

*будущий год. Был это балет “Гаянэ”. Пошел я с визитом к Хачатуряну. Жил он у своей двоюродной сестры, известной певицы, на улице Печатников. Она мне сказала: “Прошу Вас подождать, я спрошу. Через минуту она пригласила: “Пожалуйста, входите.: Вошел. “Садись, Арно, садись:”, - услышал я голос Хачатуряна. У него сидел гость – музыкант (դուդուկահար Մարգար Մարգարյանը), который играл ему народные мелодии на дудуке. Неизвестные себе мелодии Хачатурян сразу же записывал. Затем музыкант сыграл песню Саят-Новы. Хачатурян обратился ко мне и заметил: “Послушай, Арно, какая это гениальная мелодия! Удивительно, как создаются такие мелодии?”. Этот день и эти его слова неожиданно вынырнули из моей памяти, когда услышал трагическое известие о смерти Хачатуряна. Вспомнилась мне эта мелодия, и я написал произведение, оплакивающее эту великую утрату не только армянского народа, но и всей мировой культуры. Во время сочинения я всегда руководствуюсь голосом сердца...”* (20. էջ 7-8):

Վերը բերված տեղեկությունն առկա է Տեր-Օհանյանի մեմագրությունում (34. էջ 129-130), ինչպես նաև Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի առաջին տնօրեն Գոհար Հարությունյանի հուշերում (12. էջ 18-20): Վերջինս պատմում է, որ ներկա է եղել «Էլեգիայի» առաջին կատարմանը կոմպոզիտորի մոսկովյան բնակարանում, երբ հեղինակը հայտարարեց, որ այս պիեսն իր համերգային նվագացանկում մնայուն տեղ ունի: Հարությունյանը պատմում է նաև, որ Բարաջանյանը խոստացել էր այս պիեսը կատարել Խաչատրյանի տուն-թանգարանի բացման ժամանակ (1984 թ. հունվարի 23), սակայն վախճանվեց մինչ այդ (1983 թ. նոյեմբերի 11), իսկ նշված օրն «Էլեգիան» հնչեց արդեն Ալեքսանդր Հարությունյանի կատարմամբ:

Այլ տեղեկություն ունի արվեստաբան Հոփսիսմե Վարդանյանը, որն իր «Տղամարդու կերպարը Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում» հոդվածում գրում է, թե կոմպոզիտորն իր «Էլեգիան» գրել է մի գիշերվա ընթացքում և առաջին անգամ կատարել գեղանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի մոսկովյան արվեստանոցում (14. էջ 460-461): Ուշագրավ է, որ այս տեղեկությունը հանդիպում է միայն Հ. Վարդանյանի մոտ. վերջինիս հետ մեր մասնավոր զրույցից պարզվեց, որ դրա մասին իրեն պատմել է արվեստաբան Պողոս Հայթայանը:

Իսկ ՀՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթևոսյանը պատմում է հետևյալը. երբ Բարաջանյանի հետ պատրաստվում էր իր մոսկովյան ելույթներից մեկին, փորձից հետո. «խնդրեց երգեմ Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգի մի քանի տարբերակ: Անշուշտ, պատրաստակամությամբ կատարեցի բարեկամիս խնդրանքը: Նա ցանկանում էր Արամ Խաչատրյանի պայծառ հիշատակին մի գործ նվիրել և ասաց, որ Արամ Իլլիչը պաշտում էր Սայաթ-Նովայի մեղեդիները: Մեկ վայրկյան լռելուց հետո բացատրեց, որ իր գրած ստեղծագործության մեղեդային կառուցվածքի հենքում

գլխավոր թեման պետք է անադարտ մնար: Ուշադիր նվազակցելով՝ լսեց բոլոր տարբերակները և կանգ առավ...» (12, էջ 82):

Այս ստեղծագործությունը Կառլեն Թոփչյանի կազմած դաշնամուրային ձեռնարկում ներկայացված է որպես Սայաթ-Նովայի երգի սուկ փոխադրում (8, էջ 190): Իսկ հեղինակի խոսքերով՝ «Էլեգիան հարգանքի տուրք է Ա. Խաչատրյանին, որտեղ ես ու Սայաթ-Նովան հանդես ենք գալիս միասին: Ինձ համար անսահման թանկ այս ստեղծագործությունն արտահայտում է Արամ Խաչատրյանի հանդեպ իմ նվիրական զգացմունքները» (25, 34, էջ 130): Սայաթ-Նովայի երգի և այս պիեսի համեմատական վերլուծություն է կատարել երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր Ա. Գ. Ասատրյանը (1.):

Առնո Բաբաջանյանի գրչին են պատկանում նաև այլ դաշնամուրային երկեր, որոնք կամ տպագրվել են, սակայն չեն ներառվել հեղինակային ժողովածուներում (հայտնի են երկու այդպիսի մանրանվագներ՝ 1932 թ. առանձին տպագրության արժանացած «Պիոներական քայլերգը» և «Հայկական պարեր» ժողովածուի չորրորդ հրատարակությունն (1983 թ.) ամփոփող «Երիտասարդ հոտաղների պարը»), կամ էլ մինչ օրս մնում են անտիպ («Անդանտե» և «Սկերցո», Վարիագիաներ, «Հայկական պար», 1-ին Սոնատ և այլն): Բնականաբար, դրանք շատ հաճախ վրիպել են երաժշտագետների ուշադրությունից, կամ էլ դրանց մասին արվել են թռուցիկ ակնարկներ միայն: Մեծ է հավանականությունը, որ դրանք առաջին անգամ լույս կտեսնեն Բաբաջանյանի երկերի ակադեմիական-լիակատար ժողովածուում, ինչի անհրաժեշտության մասին գրվել է քանիցս:

Ամփոփելով վերը բերված տեղեկությունները՝ կարող ենք կատարել որոշ եզրակացություններ:

Առնո Բաբաջանյանի դաշնամուրային երկերի մասին հիմնարար և ամփոփ պատմագիտական ուսումնասիրություններ դեռևս չկան. անհրաժեշտ տվյալները ցրված են տարբեր գրքերի, գիտական հոդվածների, մամուլի և արխիվային նյութերի էջերում: Անգամ այնպիսի նշանավոր ուսումնասիրությունում, ինչպիսին Միխայիլ Տեր-Օհանյանի «*Арно Бабаджанян*» մենագրությունն է, դրանք ներկայացված են հատվածաբար: Ավելին՝ տարբեր հրատարակումներում մի երևույթի մասին պատմող աղբյուրները որոշ դեպքերում հակասում են իրար՝ երբեմն անկախ իրարից. կան նաև փաստերի դիտավորյալ աղավաղման դեպքեր: Ներկա հրատարակմամբ մենք նպատակ ենք դրել՝ առայժմ հնարավոր ամբողջությամբ ներկայացնել Բաբաջանյանի դաշնամուրային երկերի մասին առկա՝ տարբեր աղբյուրներից (մենագրություններից, ժամանակակիցների հուշերից, մամուլից, որոշ արխիվային նյութերից) քաղված տեղեկություններ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի վերստեղծել նրա ստեղծագործության տարբերությունը: Առավել լիակատար արդյունքի կարելի է հասնել երկրորդական աղբյուրների՝ Բաբաջանյանի գրած և ստացած նամակների, հեռագրերի, ՀԽՍՀ և ԽՍՀՄ կոմպոզիտորների միությունների տեղեկագրերի և այլ նյութերի միջոցով:

**Ծ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
Ն Ա Ե Վ Ա Ն Տ Ի Պ Ն Յ ՈՒ Թ Ե Ր Ի**

1. Ասատրյան Ա. Գ., Սայաթ-Նովա՝ Քանի վոր ջան իմ – Ա. Բաբաջանյանի՝ Էլեգիա //Սայաթ-Նովա – 300. հոդվածների ժողովածու. – Եր.: Գիտություն, 2012. *Asatryan A. G. Sayath-Nova – Qani vur jan im – A. Babajanyan – Elegia //Sayath-Nova – 300. hodvatsneri zhoghovatsu. – Yer.: Gituthyun, 2012.*
2. Ա. Գ. Ասատրյանի անձնական արխիվ: A. G. Asatryan andznakan arkhiv
3. Արամ Խաչատրյանի տուն-թանգարան, ԵԳԶ-34: Aram Khachatryan tun-thangaran, YeGDz-34.
4. Բաբաջանյան Ա. Հ., Միայն ժամանակի ազդեցությունը, //Սովետական արվեստ., 6, 1971 թ.: *Babajanyan A. H., Miayn zhamanaki azdetzuthyun’., //Sovetakan arvest. 6, 1971 th.:*
5. Երևանի Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան. Առնո Բաբաջանյանի ֆոնդ: Yerevani Ye. Charentzi anv grakanuthyan yev arvesti thangaran. Arno Babajanyani fond.
6. Եփրեմյան Լ. Կ., Հ. Ի. Լիտինսկու դասարանում. դիտարկումներ «հետխաչատրյանական սերունդ» եզրի շուրջ //Կանթեղ. 2-3, 2014 թ., էջ 372-382: *Yephremyan L. K., H. I. Litinskiu dasaranum. ditarkumner “hetkhachatryanakan serund” yezri shurj //Kantegh. 2-3, 2014 th., ej 372-382.*
7. Թաշյան Ս. Ս., Առնո Բաբաջանյան. – Եր.: Հայպետհրատ, 1961 թ.: *Thashchyan S. S., Ar’no Babajanyan. – Yer.: Haypetrat, 1961 th.*
8. Թոփչյան Կ. Խ., Դաշնամուրի ձեռնարկ (Կ. Թոփչյան, Հ. Բասիլյան). Եր., Ամրոց, 1998 թ.: *Thophchyan K. Kh., Dashnamuri dzer’nark., (K. Thophchyan, H. Ispiryan)., Yer.: Amrotz, 1998 th.*
9. Հայաստանի ազգային արխիվ. ֆոնդ 1372, մատյան 3, գործ 170: Hayastani azgayin arkhiv. fond. 1372, matyan 3, gorts 170.
10. Հարությունյան Ա. Գ., Հուշեր., Եր., Ամրոց, 2001 թ.: *Harutyunyan A. G., Husher., Yer., Amrotz, 2001 th.*
11. Մազմանյան Ռ. Մ. Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն, հ.2. – Եր.: ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1986 թ.: *Mazmanyanyan R’. M. Sovetahay yerazhshtakan kyanqi taregruthyun, h.2. – Yer.: HKhSH GA hrat., 1986 th.*
12. Մեր Առնոն. հուշարժան «Առնո Բաբաջանյան» բարեգործ. հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ. – Եր., Անտարես, 2006 թ.: *Mer Ar’non. hushalbom /“Ar’no Babajanyan” baregorts. himnadrami hayastanyan masnadchuygh. – Yer.: Antares, 2006 th.*
13. /Նվիրվում է Առնո Բաբաջանյանին. հոդվածների ժողովածու. Եր., Անտարես, 2008 թ.: */Nvirvum e Ar’no Babajanyanin. hodvatsneri zhoghovatsu. Yer., Antares, 2008 th.*
14. Վարդանյան Հ. Է., Տղամարդու կերպարը Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում //Կանթեղ. 2014, 2-3, էջ 451-462: *Vardanyan H. E., Tghamardu kerpar’ R’udolf Khachatryan arvestum //Kantegh. 2014, 2-3, ejj 451-462.*
15. *Аматуни С. Б., Арно Бабаджанян: инструментальное творчество., Ер.: Советакан грох, 1985. Amatuni S. B., Arno Babadzhanyan: instrumental’noe tvorchestvo., Yer.: Sovetakan grogh, 1985*
16. Арно Бабаджанян рассказывает о своей «Поэме». //III Международный конкурсе им. Чайковского. Пресс-бюл-

летень 8: июнь 21-23. М., 1966., С. 8-9. Ar'no Babadzhanyan rasskazyvaet o svoey "Poeme" //III Mezhdunarodnyj konkurs im. Chaykovskogo. Press-byulleten' 8: iyun' 21-23. М., 1966., S. 8-9.

17. *Արիսյան Ս. Գ.* Грани творчества Арно Бабаджаняна //Вестник Кемеровского государственного университета культуры и искусств. 2012, 18. – с. 89-94. *Arshakyan S. G.* Grani tvorchestva Arno Babadzhanyana //Vestnik Kemerovskogo gosudarstvennogo universiteta kul'tury i iskusstv. 2012, 18. – s. 89-94.

18. *Ատայան Ր. Ա.*, Современный музыкальный язык в произведениях армянских композиторов., //Музыка и современность: сборник статей., М., Музгиз, 1962. *Atayan R. A.*, Sovremennyy muzykal'nyj yazyk v proizvedeniyakh armyanskikh kompozitorov., //Muzyka i sovremennost': sbornik statej. – М.: Muzgiz, 1962.

19. *Բաбаджанյան Ա. Ա.*, Песни (с предисл. Н. Шумской), М.: Музыка, 1967. *Babadzhanyan A. A.*, Pesni (s predisl. N. Shumskoj), М.: Muzyka, 1967.

20. *Բաբաձձյան Ա. Ա.*, Хочу волновать сердца //Արվեստ, 1996-97 [հասունկ հասար], էջ 6-9: *Babadzhanyan A. A.*, Khochu volnovat' serdtza //Arvest, 1996-97 [hatuk hamar], ej 6-9.

21. *Գեոդակյան Գ. Մ.*, Бабаджанян Арно., //Музыкальная энциклопедия., Том 1. М., 1973, с. 268. *Geodakyan G. Sh.* Babadzhanyan Arno., //Muzykal'naya entziklopediya., Том 1. – М., 1973, s. 268.

22. Государственный архив РФ, фонд Р9506, опись N 80, дело N 30. Gosudarstvennyj arkhiv RF, fond R-9506, opis' N 80, delo N 30.

23. *Գրիգորյան Ա. Ր.*, Арно Бабаджанян., М.: Советский композитор, 1961. *Grigoryan A. R.*, Arno Babadzhanyan. – М.: Sovetskij kompozitor, 1961.

24. *Կարլան Ա. Լ.*, Предисловие к винил. пластинке “Арно Бабаджанян – пианист”. М.: Мелодия, 1985. *Karlan A. L.*, Predislovie k vinil. plastinke “Arno Babadzhanyan – pianist”. – М.: Melodiya, 1985.

25. *Մելիկյան Ն.*, Документы, рассказывающие о большой жизни., //Комсомолец (Ер.). 1980, 13 мая. *Melikyan N.*, Dokumenty, rasskazyvayushchie o bol'shoj zhizni., //Komsomoletz (Yer.) 1980, 13 maya.

26. *Միրзоева Յ. Ա.*, Бабаджанян Арно //Большая российская энциклопедия. Том 2. М., 2005, с. 617. *Mirzoyeva E. A.*, Babadzanyan Arno // Bol'shaya rossijskaya ejntziklopediya. Том 2. М. 2005, s. 617.

27. *Միրзояն Յ. Մ.*, Фрагменты. – Ер.: Амроц, 2005. *Mirzoyan E. M.* Fragmenty. – Yer.: Amrotz, 2005.

28. Постановление Совета Министров СССР “О присуждении Сталинских премий в области искусства и литературы за 1950 год” //Правда., 1951, 17 марта. Postanovlenie Soveta Ministrov SSSR “O prisuzhdenii Stalinskikh premij v oblasti iskusstva i literatury za 1950 god” //Pravda. 1951, 17 marta.

29. Режиссура игры на фортепиано. В. М. Берлин – музыкант, личность, педагог: Сборник статей и материалов /Сост. А. М. Аксенов. – М.: РАМ им. Гнесиных, 2006. Rezhissura igrы na fortepiano. V. M. Berlin – muzykant, lichnost', pedagog: Sbornik statej i materialov /Sost. A. M. Aksenov. – М.: RAM im. Gnesinykh, 2006.

30. Российский государственный архив литературы и искусства: фонд N 2916, оп. N 2, ед.хр. 319. Rossijskij gosudarstvennyj arkhiv literatury i iskusstva: fond N 2916, op. N 2, yed. khr. 319.

31. Российский национальный музей музыки, фонд N 230 (Арно Бабаджанян). Rossijskij natsional'nyj muzej muzyki, fond N 230 (Ar'no Babadzhanyan).

32. *Տաֆրյան Կ. Ս.*, Арно Бабаджанян и его “Героическая баллада”, /Руководитель: проф. Г. Г. Тигранов /Теоретико-композиторский факультет Ереванской Гос. консерватории. Ер., 1953. *Safaryan K. S.*, Arno Babadzhanyan i yevo “Geroicheskaya ballada” /Rukovoditel': prof. G. G. Tigranov /Teoretiko-kompozitorskij fakul'tet Yerevanskoj Gos. konservatorii. – Yer., 1953.

33. //Советская культура. 1965, 28 декабря, N 158. //Sovetskaya kul'tura. 1965, 28 dekabrya, N 158.

34. *Տերոգյան Մ. Ի.*, Арно Бабаджанян: монография., М.: Композитор, 2001. *Teroganyan M. I.*, Arno Babadzhanyan: monografiya. – М.: Kompozitor, 2001.

35. Geodakyan Georg. (Art.) Babajanyan, Arno //MGG Online, hrsg. von Laurenz Lütteken, Kassel, Stuttgart, New York: 2016ff., zuerst veröffentlicht 1999, online veröffentlicht 2016, <https://www.mgg-online.com/mgg/stable/15594>

36. Melikyan Hayk. [About Arno Babajanian and his piano works] //Arno Babajanian: Complete original piano works [CD recording]. – Naxos, 2014.

37. Sarkisyan Svetlana. Babadjanian, Arno Harutyuni //New Grove Dictionary of Music and Musicians, online version <https://doi.org/10.1093/gmo/9781561592630.article.01642>

**Բաճնալի-բաճնը.** Ա. Բաբաձձյանյան, Վ. Իգումնով, Բ. Բերլին, Ա. Հարությունյան, Է. Միրզոյան, Ս. Ամատունի, Մ. Տեր-Օհանյան, դաշնամուր, հուշեր, փաստաթղթեր, պատմագիտություն:

**Ключевые слова:** А. Бабаджанян, К. Игумнов, В. Берлин, А. Арутюнян, Э. Мирзоян, С. Аматауни, М. Тероганян, фортепиано, воспоминания, документы, историография.

**Keywords:** A. Babajanian, K. Igumnov, V. Berlin, A. Arutiunian, E. Mirzoyan, S. Amatuni, M. Terohanian, piano, memoires, documents, Historiography

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ ԳԵՐԱՄԻՄԻ (ծն. 10.01.1997 թ., ք. Վանաձոր) – արվեստի պատմաբան: Ավարտել է՝ 2012-ին Վանաձորի N 3 արվեստի դպրոցի դաշնամուրի բաժինը (գերազանց): 2013-ին՝ նույն տեղի N 10-րդ ավագ դպրոցը, 2017-ին՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնի բակալավրական կրթությունը (զիտ. դեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆ. Լ. Բ. Չոլախյան):

# Կ Ն Մ Ա Ն Ո Ւ Ն Ի Ժ Ա Ն Ա Ն Ո Ւ Յ Յ Ա Ն Ի Ե Խ Ա Ղ Ո Ւ Մ Ո Ւ Յ Յ Ո Ւ Ն

Ավարտական աշխատանքի թեման է՝ «Առնո Բաբաջանյանի կերպարը արվեստում և նրա քանդարանի ստեղծման հիմնահարցը»: Ներկայում նույն բաժնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող է: 2013-ից մինչ օրս ԵՊՀ մշակույթի կենտրոնի անդամ է (դաշնակահար, գործիքավորող, գրավոր): Հեղինակ է՝ և հրատարակության է պատրաստել երիտասարդ համալսարանականների երաժշտական ստեղծագործությունների «Անկախության սերնդի ձայնը» ժողովածուն., Եր., ԵՊՀ հրատարակչություն., 2018 թ.: Զբաղվում է դասական երաժշտության պատմությամբ և բնագրագիտությամբ:

**Information about the author:** ANDREASYAN ARTYOM G. (b. 10.01.1997, Vanadzor) - art historian. Graduated from the piano department of Vanadzor Art School N 3 with honors in 2012. Graduated from local High School N10 in 2013. Graduated from the Chair of History and Theory of Arts with bachelor's degree in 2017 (supervisor - Doctor of Arts, Prof. L. B. Chookaszian). The subject of his graduate thesis is "Arno Babajanian in fine arts: The problems of establishing his museum". Currently he is a candidate for master's degree in History of Arts. Since 2013 - member of the Culture Centre of YSU (pianist, arranger, engraver). He has also prepared for publication the anthology of musical compositions by young universitarians "Voice of the independence generation" (Yerevan: YSU Publishers, 2018). Also engaged in Classical music history and textual criticism.

**Сведения об авторе:** АНДРЕАСЯН АРТЕМ ГЕРАСИМОВИЧ (р. 10.01.1997, г. Ванадзор) – историк искусства. В 2012 г. окончил с отличием фортепианное отделение ванадзорской школы искусств #3. В 2013 г. окончил местную старшую школу #10. В 2017 г. окончил бакалавриат отделения искусствоведения при факультете истории ЕГУ (науч. руководитель – доктор искусствоведения, проф. Л. Б. Чугасзян). Тема дипломной работы – “Образ Арно Бабаджаняна в искусстве и основные вопросы по созданию его музея”. В настоящее время – студент 2-го курса магистратуры того же отделения. С 2013 г. – член Центра культуры ЕГУ (пианист, аранжировщик, гравер). Подготовил к изданию сборник музыкальных сочинений молодых студентов и выпускников ЕГУ “Голос поколения независимости”, Ер.: Изд-во ЕГУ, 2018. Занимается историей классической музыки и текстологией.

## Резюме

Искусствовед, магистрант кафедры истории искусств ЕГУ *Артем Герасимович Андреасян*. – “*О фортепианных сочинениях Арно Бабаджаняна и смежных историографических вопросах*”.

В статье приводятся историографические данные о фортепианных сочинениях Народного артиста СССР, композитора Арно Арутюновича Бабаджаняна. Также рассматриваются некоторые вопросы, касающиеся его обучения в Москве и преподавательской деятельности в Ереване. Основная цель статьи – уточнение датировки и прочих исторических вопросов творческой биографии Бабаджаняна, а также подготовка к наиболее полному восстановлению хронологии его жизни и творчества.

## Summary

Art historian, candidate for Master's degree in History and Theory of Arts at YSU, *Artyom Gerasim Andreyan* - “*On the piano compositions by Arno Babajanyan and adjoined historiographical issues*”.

The article presents historiographical data concerning the piano compositions by Arno Babajanyan, composer, People's Artist of the USSR. Besides, some questions about his studies in Moscow and teaching in Yerevan are examined. The main purpose of the present article is rectification of dating of some works and other historical issues on Babajanyan's biography as well as preparation for full reconstruction of the chronology of his life and work.

**ВЯЧЕСЛАВ АРШАВИРОВИЧ  
ЕДИГАРЯН**

Պիանист, кандидат искусствоведения,  
доцент АГПУ им. Х. Абовяна  
E-mail: e.va47@mail.ru

ԵՊԿ «Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամ Իրինա Լեոնիդի Ջոլոսովայի  
երաշխավորությամբ և ընդունվել տպագրության՝ 11.12.2018 թ.  
ներկայացրել է հեղինակը՝ 1.10.2018 թ.

**ГУГО РИМАН О ФОРТЕПИАННОЙ  
ПЕДАГОГИКЕ**

**Н** аучное творчество выдающегося немецкого музыковеда Гуго Римана (*Karl Wilhelm Julius Hugo Riemann, 1849–1919*) поражает как своей плодovitостью, так и разносторонностью. Пожалуй, нет музыканта, которому не был бы известен “Музыкальный словарь” (*Musik-Lexikon*) Римана и который хотя бы в общих чертах не был бы знаком с учением о ямбичности формообразования. Однако всемирно известный основоположник функционального направления в музыковедении не столь известен как теоретик фортепианного искусства. Если Риман и привлекает внимание пианистов в их практической (исполнительской и педагогической) деятельности, то прежде всего своими взглядами на строение музыкальной речи, на принципы фразировки.

В настоящей статье делается попытка расширить представление о вкладе Римана в фортепианное искусство. Автор статьи особо останавливается на вопросах, которые и сегодня продолжают быть актуальными.

В прославленной Лейпцигской консерватории Риман учился по классам композиции и фортепиано у Карла Рейнеке. Впоследствии, уже в достаточно зрелом возрасте (с 1881 по 1890 год) Риман становится преподавателем по классу фортепиано в не менее известной Гамбургской консерватории, где ему поручается также инспектирование “элементарных” (начальных) классов.

В Гамбурге Риман издает фундаментальную “Сравнительную фортепианную школу” (*Vergleichende theoretisch-praktische Klavierschule. Hamburg, 1883*), в которой особо представлен раздел “Элементарная школа”. Риман пишет, что “Элементарная школа” знакомит детей с основами его учения о фразировке, в результате чего “учащиеся гарантированы от ошибки принимать тактовый штрих (тактовую черту. – **В. Е.**) за знак препинания” (С. 101)\*. (В скобках заметим, что в то же время зрелые пианисты с учением Римана о фразировке познакомились по его редакциям сонат Мо-

царта и Бетховена, Экспромтов и Музыкальных моментов Шуберта. С новой римановской фразировкой были изданы 52 этюда И. Крамера.)

Г. Риман создает целую серию инструктивных сборников для начинающих. В помощь своей “школе” Риман издает в Лейпциге тетрадь этюдов, при изучении которых закрепляются также новые аппликатурные принципы. Для лучшего понимания своих фразировочных принципов Риман издает в Берлине “Приготовительную школу фразировки” в двух тетрадях (первая на основе этюдов Бертини, *op. 100*), там же издает сложные “Упражнения в гаммах”, *op. 41*, которые по его замыслу следует изучать лишь после этюдов Черни, *op. 299*. Для конца первого года обучения Риман пишет и издает пьесы под названием “16 маленьких этюдов”. Риман сочиняет “Шесть сонатин” *op. 42*. В соответствие с традицией своего времени Риман-педагог много внимания уделяет упражнениям и даже создает пособие – “Указание для изучения технических упражнений”.

Перечисленные римановские работы, с разных сторон касающиеся области фортепианной педагогики, свидетельствуют о широкоохватном интересе Римана к проблемам пианизма.

Основываясь на своем опыте педагога-пианиста, Г.Риман издает небольшую книжку под весьма претенциозным названием – “Катехизис фортепианной игры” (*Katechismus des Klavierspiels, Lpz., 1888*)\*. Этот заимствованный у церкви жанр – краткое изложение основных принципов и взглядов в форме вопросов и ответов – оказался очень удобным: и компактным, и динамичным\*\*. В течение короткого времени

\* После пятого издания в 1916 году Риман изменил название на “Handbuch des Klavierspiels” (“Руководство по игре на фортепиано”).

\*\* В форме вопросов и ответов публикуются не только обычные газетные интервью. По следам Римана пошли и другие пианисты. Эта удобная форма использована Иосифом Гофманом в его “Ответах на вопросы о фортепианной игре”. Глен Гульд в оригинальных “Интервью о самом себе” пропагандирует свои творческие взгляды.

\* Здесь и далее страницы указаны по изданию в Примечании 1.



Риман издал еще несколько “катехизисов”: по истории музыки, по оркестровке, по акустике.

Авторитет Римана–ученого был настолько велик, что его труды очень быстро переводились и издавались в разных странах. Так, “Катехизис фортепианной игры” уже в 1892 году был опубликован в России в переводе известного пианиста и методиста А. Буховцева\*, а в дальнейшем несколько раз переиздавался. А. Буховцев считает книгу Римана “ценным вкладом в музыкально–педагогическую литературу” (С. III).

“Катехизис” Римана состоит из введения и трех разделов, в которых даются ответы на 42 вопроса. В небольшом приложении Риман–педагог рекомендует учебный репертуар, дает краткую характеристику отдельных пособий для начинающих пианистов.

Во введении Риман дает ответы на пять вопросов общего характера. Так, он пишет, что “фортепиано представляет наиболее подходящий инструмент для замены целого оркестра” (С. 5). Поэтому, несмотря на такое отрицательное качество как наличие заданной настройщиком высоты тона, Риман считает фортепиано “существенным средством для распространения музыкального образования” (С. 6). Но для “основательного развития способности представлять высоту тона” (С. 6) обучение игре на фортепиано должно сопровождаться пением (сольфеджированием) и упражнением в написании диктантов.

Риман считает, что пианист должен быть знаком с конструкцией инструмента, уметь в случае необходимости произвести небольшой ремонт и настройку – подклеить молоточек, заменить пружинку, подтянуть струну. Эту простую и столь необходимую пианистам образовательную задачу до сих пор не могут решить во многих музыкальных учебных заведениях.

В первой главе – “Инструмент” – Риман рассказывает о конструкции фортепиано.

Рассказывая о правой демпферной педали, Риман замечает, что “современный пианист играет собственно всегда с приподнятыми демпферами” (С. 14), т.е. постоянно пользуется так называемой запаздывающей педалью.

Существуют еще “необратимые” ритмы, которые можно найти во всей моей музыке. “Необратимые” ритмы – “non-rétrogradables”: какое ужасное слово! Можно покалечить горло, чтобы это выговорить. К сожалению, не нашел лучшего... Добавлю к этому, что оно является достаточно ясным и уже прижилось в языке молодых музыкантов и музыковедов. В декоративных искусствах (архитектуре, декоративных тканях, художественном стекле, цветниках) издавна используются мотивы обратно симметричные, упорядоченные вокруг свободной середины. То же можно найти в расположении прожилок на листьях деревьев, на крыльях мотыльков, в человеческом лице и теле, и даже в древних магических формулах. Необратимый ритм функционирует точно также. Две группы ритмических длительностей, из которых одна является обрамлением другой, две группы, обрамляющие произвольную центральную длительность, общую для них обеих. Прочитаем такой ритм слева направо или справа налево: порядок длительностей остается таким же. Это есть абсолютно замкнутый ритм.

И наконец в работе над ритмом я постоянно сожалел о преграде: о слабости человеческого восприятия очень долгих и очень коротких длительностей. Несмотря на знания, приобретенные разумом и с помощью научных аппаратов, длительность беспрельдно большая или беспрельдно малая является для нас неуловимой. В сфере времени мы еще весьма беспомощны. Много музыкантов не в состоянии заметить средние, долгие или короткие длительности, если они в том или ином смысле нарушают простые арифметические деления. Еще труднее уловить небольшую

\* Мессиа́н здесь имеет в виду концепцию дления – *durée*, введенную французским философом-идеалистом Анри Бергсоном (1859–1941), определяющую жизнь и структуру сознания (Прим. пер.).

разницу между двумя долгими длительностями. В этой области я рискнул совершить шаг вперед, написав шестьдесятчетвертые длительности, которые завершают мою “Книгу для органа”. Если я сумел их сочинить, если я их читаю, если я играю, если я слышу – все шестьдесятчетвертые с их разностями, то и другие смогут исполнить. . .

Вот мое продолжительное ритмическое кредо. Но все это является чистой техникой. Вдохновение, грезы в нее не вторгаются. И мы беспрестанно далеки от совершенного произведения, о котором я говорил вначале.

Ведь вдохновение не является продуктом воли. Когда кажется, что все утрачено, когда не знаем дальнейшей дороги, когда уже действительно нечего сказать (к сожалению, это случается чаще всего), то к какому учителю обратиться, к какому демону возвать, чтобы выйти из пучины? Перед лицом стольких противоположных школ, немодных стилей, разноречивых языков не существует человека, который смог бы вернуть веру отчаявшемуся. И именно тогда вмешиваются голоса великой Природы. Как объяснить, что столько композиторов забыло об этом, в то время, когда живописцы и поэты постоянно у нее учатся? Так, в очень красивом эпизоде из “Осуждения Фауста”, названном “Леса и пещеры”, Берлиоз поместил Фауста среди гор. Вагнер слышал “шумы леса”, славил воду и огонь; бог Вотан, обращаясь к Эрде, ждал совета Земли, а в образе Фафнера воздал почитание большим и страшным динозаврам, которые так долго населяли нашу планету. Близкий нам Равель воспевал рождение дня, а Дебюсси был великим почитателем воды, ветра и “отражений на воде”. Природу можно слышать разным способом. Что касается меня, то я всегда был увлечен орнитологией. Подобно тому, как Барток исколесил Венгрию в поисках народной песни, я долго странствовал по разным провинциям Франции, чтобы занотировать пение птиц. Эта работа огромная и без

границ. Но она возвратила мне право композиторского бытия! Какая это радость открывать новое пение, новый стиль, новый пейзаж [...]

Ритмическая техника, вдохновение, найденное в пении птиц – вот моя история. Другие будут поступать иначе. Электронные сюрреалисты могут “écrire des nuits, fixer des vertiges” (“описывать ночи, фиксировать головокружения”), как сказал А. Рембо; сериальные додекафонисты могут установить ряд изменения регистров, изолированных звуков, разнородных напряжений и разрядок; стереофонисты могут смешивать источники звука и создавать абсолютно неслыханные пространственные контрапункты. Существует тысяча способов закидывания зонда в будущее. Хочу только пожелать этим людям, чтобы не забывали, что музыка составляет часть Времени, что она есть отрезок Времени, так же, как наша собственная жизнь. И что Природа – всегда прекрасная, всегда великая, всегда свежая. Природа – неисчерпаемая сокровищница красок и звуков, форм и ритмов, ни с чем несравнимая модель тотального развития и постоянной изменчивости, – является самым могущественным праисточником.

Останутся произведения. Какие же это произведения XX века? Написал ли я хоть одно произведение? Не знаю... Время – снова оно все определит. “Что принесет музыка завтра?” – спрашивают в интервью. Позволим на это ответить молодым, они держат в руках свои судьбы. Вот хотя бы два молодых гениальных композитора: Пьер Булез и Карлхайнц Штокхаузен. Им принадлежит радость разрушения, изменения, введения нового, открытия неизвестных континентов. Им принадлежит “le vierge, le vivace et le bel aujourd’hui!”\*

\* “Девственное, живучее и прекрасное сегодня”– из стихотворения Стефана Малларме.

**Բանալի-բաներ.** Օլիվյե Մեսսիան, երաժշտական ժամանակ, երաժշտական տարածականություն, ռիթմ, բնության ձայները: **Ключевые слова:** Оливье Мессиаен, музыкальное время, музыкальное пространство, ритм, голоса природы. **Keywords:** Olivier Messiaen, musical time, musical space, rhythm, voices of Nature.

**Տեղեկություններ հեղինակի մասին. տե՛ս էջ 43:**  
**Сведения об авторе: см. на С. 43.**  
**Information about the author: Go to P. 44.**

## Ամփոփում

Օլիվյե Մեսիան. «Ձեկուցում Բրուսելում» Լեհերենից - ռուսերեն թարգմանությունը արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Սվետլանա Կարսյանի Սարգսյանի:**

Ներկայացվում է ֆրանսիացի կոմպոզիտոր Օլիվյե Մեսիանի (1908-1992 թթ.) ելույթի նյութը 1958 թ. Բրյուսելում՝ միջազգային գիտաժողովում: Ձեկուցման նյութը մի քանի անգամ թարգմանվել և տպագրվել է տարբեր լեզուներով, այդ թվում լեհերեն (1978 թ.), որը թարգմանվել է Ս. Կ. Սարգսյանի կողմից: Մեսիանի հողվածի հիմնական գաղափարը ժամանակակից աշխարհում կոմպոզիտորի դերն է, նրա պատասխանատվությունն է՝ ինչպես պատմության, այնպես էլ բնության օրենքների առջև: Հողվածի հրապարակումը նվիրված է կոմպոզիտորի ծննդյան 110-ամյակին:

## Summary

“Olivier Messiaen. Lecture in Brussel” Translated from Polish by Russian PhD Doctor, Professor of YSC **Svetlana K. Sarkisyan.**

The article represent the paper by French composer Olivier Messiaen in 1958 at the international conference in Brussel. The material of the lecture has been translated and published in several languages, including Polish, which has been translated by S. K. Sarkisyan. The main idea of the article of the Messiaen is the role of the composer in the modern world, his responsibility both in history and in the laws of nature. The publication of the article is dedicated to the 110<sup>th</sup> anniversary of the composer.

**ՎԻԼՅԱՄ ՄԻՍԱԿԻ  
ՀԱԼԱԶՅԱՆ**

**ՀՀ Պետական կառավարման ակադեմիա,  
Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ**  
E-mail.williamhalajyan@gmail.com

ՄԻՋԳԻՏՄԵԹԼԻԿԱՆ ՀԵՏԱԶՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամ Կարինե Ազատի Զաղացպանյանի 30.5.2019-ին նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի (ՀՀ ՊԿԱ) Կառավարման հոգեբանության ամբիոնի 25.3.2019-ին երաշխավորությամբ և ընդունվել տպագրության 29.03.2019-ին, ներկայացրել է հեղինակը՝ 29.3.2019-ին

**ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Մ**արդու կյանքում երաժշտության ունեցած դերի և ներագրման առանձնահատկությունների մասին խոսել են բազմաթիվ մտածողներ և գիտնականներ՝ սկսած դեռևս վրա հնագույն քաղաքակրթություններից: Մարդու կյանքն առանց երաժշտության պատկերացնելն արդեն անհնար է, դա փաստ է: Մակայն ժամանակների դիմադակային և երաժշտության ոճային, գործիքային և բովանդակային փոփոխությունները ևս փաստ է, որ առաջ են բերում երաժշտության նորովի ընկալման մեխանիզմներ: Այս առումով մեր կողմից առաջադրվող թեման արդիական է հետազոտելու հատկապես հոգեբանության տեսանկյունից՝ փորձելու համար վերլուծել, թե ինչ հուզական վիճակներ կարող են առաջ բերել երաժշտության տարբեր ճյուղերը մարդու կյանքում, և արդյոք դրանք պայմանավորված են երաժշտության բովանդակությունից կամ գործիքավորումից, թե մարդու նախասիրություններից (1. էջ 63-68):

Մինչև մեր դիտարկումներին անդրադառնալը քրե-նարկենք մի քանի մտտեցումներ և փորձարարական ուսումնասիրություններ, որոնք փաստարկում են երաժշտության ընկալման սուբյեկտիվ և համընդհանուր կողմերով ազդեցության մասին: Երաժշտության ընկալման և ազդեցության վերաբերյալ գոյություն ունեն հիմնականում երկու մտտեցումներ՝ ֆիզիոլոգիական կամ հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական: Հոգեֆիզիոլոգիական տեսանկյունը պարզաբանում է երաժշտության ընկալման ֆիզիոլոգիական մեխանիզմները, անալիզատորների և գլխուղեղի համապատասխան բաժինների աշխատանքը, հնչյունի՝ որպես ֆիզիկական մեծության ուժգնության, տեմպի, ռիթմի ներգործությունը գլխուղեղի վրա: Երաժշտությունն ունի յուրահատուկ ազդեցություն մարդու ուղեղի աշխատանքի վրա: Այն ակտիվացնում է ուղեղի կեղևի որոշակի հատվածները և փոփոխում է ալֆա ալիքի տատանումները, որոնք տեղեկատվություն են հաղորդում մարդու ընդհանուր վիճակի մասին (2.): Ըստ այդմ, ակտիվացնելով ուղեղի աշխատանքը՝ երաժշտությունը զարգացնում է ամբողջ

ճանաչողական ոլորտը՝ մտածողությունը, հիշողությունը, երևակայությունը և ուշադրությունը (3. էջ 4-5): Հոգեբանության տեսանկյունից ուսումնասիրվում է երաժշտության՝ որպես ստեղծագործական տարրի ընկալման գործընթացը, դրանում դրսևորվող հույզերը, ապրումները և մարդու վարքի, օրգանիզմի կամ մարմնի հետ ունեցած կապը: Ստեղծագործության հոգեբանությունն անդրադառնում է նաև այն գործընթացների ուսումնասիրությանը, որոնք տեղի են ունենում երաժշտության ստեղծման, կատարման և ունկնդիրների վրա թողած հոգեբանական ազդեցության ժամանակ (4.):

Երաժշտությունը մարդու կողմից ընկալվում-ապրվում-յուրացվում է յուրովի այնքանով, որքան առանձին սուբյեկտ է իրենից ներկայացնում անձը: Մարդը, լինելով սոցիալական և գենետիկական նախադրյալների կրող, ապրելով մշակութային և կրոնական յուրատիպ միջավայրում, ձեռք է բերում, այսպես ասած, «մոտեցում» երաժշտության ընտրության, երաժշտական ոճի նախասիրության, հետևաբար նաև երաժշտություն լսելու նկատմամբ հորքի: Լ. Լ. Բոչկարյովը նշում է, որ կախված սուբյեկտիվ անհատականությունից՝ յուրաքանչյուր ոք յուրովի է արձագանքում արտաքին ազդակներին, այդ թվում նաև երաժշտությանը: Հեղինակն առաջ է բերում մի քանի դրույթներ, որոնք կարող են ընդգծել երաժշտության ընկալման սուբյեկտիվությունը: Այդ դրույթներից առանձնացնում է՝ 1. զգայական արտացոլումը, երաժշտության՝ վեգետատիվ նյարդային համակարգի վրա ունեցած ազդեցությունը, 2. երաժշտության՝ հուզական ապրում առաջ բերելը, 3. երաժշտություն լսելու փորձառությունը, օրինակ, եթե լսողը երաժիշտ է կամ ունի հատուկ նախասիրություններ, 4. երաժշտության հանրային տարածվածությունը և 5. երաժշտություն լսելիս մարդու հոգեկան աշխարհում ի հայտ եկող ապրումները և հիշողությունները (4. էջ 51-52): Հիմք ընդունելով այս գործոնների վերլուծությունները՝ հեղինակը կատարել է դիտարկում-հարցում, երաժշտության նախասիրությունների վերաբերյալ: Արդյունքում եզրակացրել է, որ միևնույն երաժշտությունը

## Հ ո գ ե ր ա ն ո թ յ ո ն - ե ր ա ժ շ տ ա գ ի տ ո թ յ ո ն

կարող է մեկի համար լինել հանգստացնող, մյուսի համար՝ նյարդայնացնող, մեկի մոտ կարող է առաջացնել դրական հուզական ապրումներ, կայտառ տրամադրություն, իսկ մյուսի մոտ՝ հակասակը:

Այս հետազոտությանն ի հակադրություն կա նաև այն մտտեցումը, որ երաժշտության բովանդակային և գործիքային ներդաշնակությունը, ոճը և լսելու տևողությունը կարող են հանգեցնել համընդհանրության՝ հուզական ապրման, հոգեկան գործընթացների և օրգանիզմի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից: Օրինակ՝ մի շարք հետազոտողներ ուսումնասիրություններ են կատարել դասական երաժշտության ընկալման վերաբերյալ: Հետազոտություններից ստացված արդյունքներից ընդհանրացրել են, որ նույնիսկ նորածինը կարող է ունենալ դրական հուզական ապրում դասական երաժշտություն լսելիս (M. Nöcker-Ribaupierre), որ դասական երաժշտությունը նպաստում է կոգնիտիվ գործընթացների զարգացմանը, օրինակ մտածողության ճկունությանը, երևակայության և ստեղծարարության զարգացմանը: Մի խումբ գիտնականներ ապացուցել են, որ պտուղն ակտիվորեն արձագանքում է այն երաժշտությանը, որը մայրը լսում է հղիության ընթացքում: Օրինակ, եթե Մոցարտի ու Վիվալդիի ստեղծագործությունները հանգստացնում են, ապա ռոքի դեպքում արագանում է երեխայի սրտխիռոցը, և նա սկսում է անհանգիստ շարժումներ կատարել (5. էջ 76-83): Նույնիսկ գիտնականների մի խումբ բացահայտել է, որ դասական երաժշտությունը թերապևտիկ ազդեցություն ունի հոգեկան որոշ հիվանդությունների ախտանիշների հաղթահարման ժամանակ՝ հատկապես տրամադրության խանգարումների, հուսալքության, ընկճվածության և վարքային խանգարումների առումով (6. էջ 68-78): Այս արդյունքները վկայում են, որ անկախ տարիքից, ազգությունից, մտավոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկություններից դասական երաժշտությունն ունի համընդհանուր ազդեցություն անձի հոգեվիճակների վրա:

Ջ. Լոենին և նրա գործընկերները հետաքրքիր հետազոտություն են կատարել հղի կանանց խմբի հետ: Սկզբում նրանք պարզում են, թե հղիության ընթացքում կանանցից ովքեր են հոգևոր երաժշտություն լսում և ըստ այդմ բաժանում նրանց երկու խմբի՝ լսողների և չլսողների: Այնուհետև ծննդաբերությունից մի քանի ժամ հետո, երբ երեխաները լայիս են, միացնում են նույն հոգևոր երաժշտությունը: Լսելով այն՝ առաջին խմբի մայրերի երեխաները հանգստանում են ու լռում, իսկ երկրորդ խմբի մայրերի երեխաները ոչ մի կերպ չեն արձագանքում այդ երաժշտությանը (7. էջ 903-918):

Ա. Լ. Բոչկարևը (1997 թ.) կատարել է ուսումնասիրություններ՝ փորձելով առանձնացնել և դուրս բերել այն հիմնական հուզական արտահայտումները, որոնք ունենում են մարդիկ երաժշտություն լսելիս: Նա հետազոտություն է իրականացրել ուսանողների շրջանում, նրանց տվել է լսելու իրարից լրիվ տարբեր, հակադիր երաժշտություններ: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ուսանողներից յուրաքանչյուրը յուրովի է ընկալել երկու երաժշտությունների բովանդակու-

թյունը, և յուրովի ապրել դրանցից առաջ եկած հույզերը՝ մինչև անգամ մարմնական հակազդումների մակարդակում (4. էջ 133-136):

Է. Գյանջումյանն իր հոդվածներից մեկում վերլուծության է ենթարկել երաժշտության ազդեցության մասին բազմաթիվ կոմպոզիտորների, ստեղծագործողների կարծիքները: Նա վերլուծել է երաժշտության մասնատված ժանրերի մարդու հոգեբանության վրա ունեցած ազդեցությունը, քննարկել է ազգաբնակչության շրջանում տարածված երաժշտական մշակույթը, վերջինի թողած դրական և բացասական ազդեցությունները: Ստեղծագործողի տեսանկյունից ներկայացնում է երաժշտության արարման գործընթացում դրսևորվող հուզական ապրումները, ստեղծագործողի զգացմունքներն ու հոգեվիճակը, նշելով, որ տվյալ երաժշտությունը լսողը նույնպես ապրում է այն հույզերը, որոնք ստեղծագործողն է «ներդրել» երաժշտության մեջ (8. էջ 52-58):

Հայտնի են նաև բազմաթիվ փաստեր, երբ այս կամ այն հիվանդությունը բուժվել կամ թեթևացել է երաժշտական թերապիայի շնորհիվ: Բուժական նպատակով երաժշտությունը կիրառում են դեռևս վաղեմի ժամանակներից, քանի որ մեղեդիների առաջ բերած հաճելի հույզերն ակտիվացնում են գլխուղեղի կեղևի գործունեությունը, լավացնում նյութափոխանակությունը, խթանում շնչառությունն ու արյան շրջանառությունը: Ականջի համար հաճելի երաժշտական ստեղծագործությունների հնչողության ժամանակ դրական հուզական ապրումներն ուժեղացնում են ուշադրությունը, խթանում կենտրոնական նյարդային համակարգը: Միաժամանակ ակտիվ նյարդային գործունեության մեջ են ներգրավվում լրացուցիչ նյարդային բջիջներ, որոնք այդ համակարգի՝ արդեն աշխատող օղակներից հանում են ծանրաբեռնվածությունը: Լսելով երաժշտությունը՝ վերածնունդով են օրգանիզմի ռիթմիկան, որի ազդեցությամբ ֆիզիոլոգիական ռեակցիաներն առավել արդյունավետ են ընթանում (9.):

Մեր կողմից իրականացված դիտարկումները ևս ցույց են տվել երաժշտության մեծ դերն անձի հոգեվիճակների, տրամադրության, ինքնազգացողության փոփոխության ժամանակ: Փորձագիտական խմբի (ընտրությանը մասնակցել են 5 կիրառական հոգեբան մասնագետներ) հետ քննարկել և ընտրել ենք հինգ հայկական ստեղծագործության կատարումներ, որոնք բովանդակությամբ եղել են հանգիստ, մեղմ և տարբեր գործիքավորումներով: Հետազոտությունն իրականացրել են երիտասարդների, ուսանողների շրջանում, որոնք լսել են երաժշտությունը, և համապատասխան հարցաթերթիկում 1-5 գնահատման սանդղակով նշել են երաժշտության ազդեցության աստիճանը տրամադրության, ինքնազգացողության և ակտիվության վրա, գրառել են գուգորդվող հուզական ապրումներ, որոնք ի հայտ են եկել յուրաքանչյուր ստեղծագործությունը լսելիս: Այս գործոնների փոփոխությունը գրանցելու համար կատարել ենք նաև հոգեվիճակների գնահատում՝ կիրառելով ԻԱՏԲՄ (CAH) մեթոդի հայերեն կրճատ տարբերակը (10.): Ինքնազգացողության գնահատումը կատարվել է երաժշտությունը լսելուց առաջ և հետո:

Հոգեկան վիճակների նախնական գնահատմամբ եզրերն են, որ հետազոտվող խմբում հիմնականում միջինից բարձր է գրանցվել ակտիվությունը, կայստառությունը և ինքնազգացողության լարվածությունը: Երաժշտական կատարումները լսելուց հետո հոգեվիճակների գնահատման արդյունքները ցույց են տվել, որ զգալիորեն նվազել է ակտիվությունը, ինքնազգացողության լարվածությունը փոխակերպվել է լավ ինքնազգացողության, տրամադրության ցուցանիշը զգալիորեն փոփոխվել է դեպի հանգստության, խաղաղության: (Տես՝ երաժշտության հոգեբանության մասին աշխատությունը II.)

Չուզորդական ապրումների և հույզերի բնութագրիչները նույնպես եղել են ակտիվության վիճակը նկարագրող բառերից (կայստառ, ուրախ, ինքնավստահ, առույգ և այլն) անցում դեպի հանգստության վիճակը նկարագրող բառերի (հանգստություն, տխրություն, խաղաղություն, երանություն, թուլացում և այլն): Ընդհանրացնելով հետազոտության հիմնական արդյունքը պարզ դարձավ, որ հատուկ ընտրված երաժշտական դադարները որպես հոգեկարգավորիչ տեխնիկա հնարավորություն են ընձեռում մարդուն առանց հատուկ պայմանների ստեղծման կարգավորել իր պերզեպտիվ և կոգնիտիվ գործընթացների աշխատանքը (ուշադրություն, մըտածողություն), թուլացնել հոգեհուզական լարվածությունը, ակտիվացնել և կանխարգելել հոգնածության և հյուծվածության նախանշանները, կարգավորելով նաև որոշ հոգեֆիզիոլոգիական խնդիրներ:

**Ծ Ա Ն Ո Ւ Թ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

1. Հալաջյան Վ. Մ., Անձի հոգեվիճակների և աշխատունակության կարգավորման համար երաժշտաթերապիայի կիրառման հիմնախնդիրները, //Արդի հոգեբանություն գիտական հանդես, N 1., Եր., 2018 թ., - 63-68 էջ: Halajyan V. M., Andzi hovevidchakneri ev ashkhatunakuthyan kargavorman hamar erazhshtatherapiayi kirar'man himnakhdirner', //Ardi hovebanuthyan gitakan handes, N 1., Yer., 2018 th., -63-68 ej.
2. Смолянинова С. В., Влияние музыки на психическое состояние человека., //Научно-практический электронный журнал "Аллея Науки", 13. 2017. <https://alley-science.ru>

3. Պողոսյան Բ. Ա., Ուշադրությունը և իմացական գործընթացների զարգացումը երաժշտական պարասպունքների միջոցով., Եր., Ասողիկ, 2008 թ., - 24 էջ: Poghsyan I. A., Ushadruthyun' ev imatzakan gorts'nthatzneri zargatzum' yer-azhshtakan parapunqneri mijtozov., Yer., Asoghik, 2008 th., - 24 ej:
4. Бочкарев Л. Л., Психология музыкальной деятельности., М.: Институт психологии РАН, 1997., - 352 с. Bochkareov L. L., Psikhologiya muzykal'noj deyatel'nosti., M.: Institut psikhologii RAN, 1997., - 352 s.
5. Думов Е. Л., Ноккер-Рибаупьер М., Андрущенко Н. В., Иова А. С., Музыкотерапия недонесенных новорожденных детей: успехи и перспективы., //Вестник Северо-Западного государственного медицинского университета им. И. И. Мечникова., тт. 7, 4, 2015., 76-83 с. Dumov E. L., Nöcker-Ribaupierre M., Andrushchenko N. V., Iova A. S., Muzykoterapiya nedonoshennykh novorozhdeonnykh detej: uspekhi i perspektivy., //Vestnik Severno-Zapadnogo gosudarstvennogo meditzinskogo universiteta im. I. I. Mechnikova., tt.7, 4, 2015., 76-83 s.
6. Alfredo Raglio, Lapo Attardo and el., Effects of music and music therapy on mood in neurological patients, World J Psychiatr. Mar 22, Published online Mar 22, 2015. 5(1), pp. 68-78.
7. Joanne Loewy and el., The Effects of Music Therapy on Vital Signs, Feeding, and Sleep in Premature Infants, PEDIATRICS Volume 131, Number 5, May 2013, pp. 903-918.
8. Гянджумян Э. Г., Экопсихологические особенности воздействия массовой музыки., //Музыкальная Армения, 1-2 (40-41), 2011, 52-58 с. Gyandzhumyan Ej. G., Ejkopsikhologicheskie osobennosti vozdeystviya massovoj muzyki., //Muzykal'naya Armeniya, 1-2 (40-41), 2011., 52-58 s.
9. <https://www.bostonmagazine.com/health/2013/05/15/music-therapy/> //How Music Therapy Works – Boston Magazin
10. Ավանեսյան Հ. Մ., Սպորտի կիրառական հոգեբանություն., /Ուսումնական ձեռնարկ., Եր., Էդիտ-Պրինտ, 2001., - 122 էջ: Avanesyan H. M., Sporti kirar'akan hovebanuthyun., /Usumnakan dzer'nark., Yer., Ejdit-Print, 2001., - 122 ej.
11. Назайкинский Е. В., О психологии музыкального восприятия., М.: Музыка, 1972. - 384 С. Nazajkinskij E. V., O psikhologii muzykal'nogo vospriyatiya., M.: Muzyka, 1972. - 384 P.

**Քանայի-քաներ.** երաժշտություն, հոգեբանություն, մեխանիզմներ, գիտական ուսումնասիրություն, տրամադրության, զգացմունքներ, ինքնազգացողության:

**Ключевые слова:** музыка, психология, механизмы, научные исследования, настроение, эмоции, самочувствие, релаксация.

**Keywords:** : Music, Psychology, Mechanisms, Scientific Researches, Emotions, Self-Sufficiency, Relaxation.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՀԱԼԱՋՅԱՆ ՎԻԼՅԱՄ ՄԻՍԱԿԻ (ծ. 1.1.1993 թ., ք. Երևան): Ավարտել է՝ 2014-ին ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետը, արարագետ, բակալավր (դեկ.՝ պատմական գիտ. թեկն. Ա. Գասպարյան), 2016-ին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը, Արևելագիտության ֆակուլտետը, մագիստրոսական կրթությունը, որպես արարագետ, (դեկ.՝ պատմական գիտ. թեկ., դոցենտ Ռ. Միրաբյան)՝ 2016-2019 թթ. սովորում է ՀՀ ՊԿԱ, Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտուրայում (դեկ.՝ ՀՀ ՊԿԱ ռեկտոր, հոգեբանական գիտ. դոկտոր՝ Ա. Լոքյան): Ատենախոսության թեման է՝ «Հանրային ծառայողի հոգեկան աշխատունակությունը կարգավորող տեսաձայնային ներազդման մեթոդի արդյունավետությունը»: Հեղինակ է՝ 5 գիտական հոդվածի (հայ.՝ 3, անգլ., ռուս. լեզուներով), գիտաժողովի նյութերում՝ XII *Международной научно-практической конференции /«Высшая школа: опыт, проблемы, перспективы РУДН (ՌԴ.) Մ., 2019, էջ 213-215, //Հանրային կառավարում, 2018, N 3-4, էջ 223-228, //Արդի հոգեբանություն, N 1, 2018, էջ 63-68, //Արդի հոգեբանություն, N 1, 2019, էջ 26-31, //International Journal of Engineering*

*Technologies and Management Research, Volume 6, Issue 2, February 2019/ <https://rpublication.com/ijst/ARCHIVE.html>:  
Շատարել է հետազոտություն 4 փուլով, որի նպատակն է՝ պարզել երաժշտության ազդեցությունը քաղաքացիական  
ծառայողների աշխատունակության և հոգեկան գործընթացների ակտիվացման վրա:*

**Сведения об авторе:** АЛАДЖЯН ВИЛЬЯМ МИСАКОВИЧ (род. 1 января 1993, г.Ереван). В 2014 году окончил факультет востоковедения (арабовед-бакалавр, рук. доктор исторических наук А. Гаспарян) Ереванского государственного университета. В 2019 году окончил магистратуру Международного научно-образовательного центра НАН РА, факультет востоковедения (рук. кандидат исторических наук, доцент Р. Миракян), аспирант кафедры психологии управления (рук. доктор философских наук, доктор психологических наук А. Лоян). Тема диссертации: “Эффективность аудиовизуальных эффектов умственного функционирования государственного служащего”. Автор 5 научных статей (на армянском, русском, английском) в материалах конференции XII Международной научно-практической конференции: “Высшая школа: Опыт, проблемы, перспективы”, Российская Федерация, 2019, С. 213-215; “Государственное управление”, 2018, И 3-4, С. 223-228; / /Современная психология, И 1, 2018, - С.68, / /Современная психология, И 1, 2019 г., С. 26-31; / /Международный журнал инженерных технологий и исследований в области управления, том 6, выпуск 2, февраль 2019 г. / <https://rpublication.com/ijst/ARCHIVE.HTML>. Провел исследование в 4 этапа, целью которого было выяснить влияние музыки на способность государственных служащих работать и активировать психические процессы.

**Information about the author:** HALAJYAN WILYAM MISAK (born 01.01.1993, Yerevan). Graduated from YSC Department of Oriental Studies, Arabic Studies, Bachelor's Degree (Head, PhD Doctor of History, A. Gasparyan), in 2016 International Scientific-Educational Center of NAS RA, Department of Oriental Studies, Master's Degree in Arabic Studies (Head PhD Doctor, Docent R. Miraqyan). From 2016 to 2019 has studied and got a PhD degree at the Department of Management Psychology (Head Rector of the RA Public Administration Academy, PhD Doctor of Psychological Sciences A. Loqyan). The topic of the thesis is "The effectiveness of the audio-visual effects of the public servant's mental functionality". He is the author of 5 scientific articles (in 3 languages Armenian, English, Russian), author in the materials of the conference, XII International scientific-practical conference / "High School: Experience, Problems, Perspectives", RF, 2019, p. 213-215, Public Administration, 2018, №3-4, p. 223-228, / /Modern Psychology, №1, 2018, p. -68, / /Modern Psychology, No. 1, 2019, p. 26-31, / /International Journal of Engineering Technologies and Management Research, Volume 6, Issue 2, February 2019. /<https://rpublication.com/ijst/ARCHIVE.html>. He has done research in 4 stages, which aims to find out the impact of music on the ability of civil servants' work and activate mental processes.

## Резюме

Аспирант кафедры Психологии управления Государственной академии управления РА *Вильям Мисакович Аладжан*. – “*Особенности психологического воздействия музыки*”.

В статье представлен анализ различных научных исследований о механизмах психологического воздействия музыки. Особое внимание уделяется регуляторным аспектам музыкального воздействия на настроение, эмоции и самочувствие человека. Представлены также результаты авторского исследования, которые показывают, что спокойная музыка ослабляет психическое напряжение человека, способствует ощущению релаксации, тишины и сохраняет хорошее самочувствие и настроение.

## Summary

PhD of the Department of Management Psychology at the State Academy of Management of RA *Wilyam M. Halajyan*. - “*Features of the psychological impact of music*”.

The article presents an analysis of various scientific studies on the mechanisms of the psychological impact of music. Special attention is paid to the regulatory aspects of musical influences on mood, emotions and human well-being. Presented as well the results of the author's research, which show that calm music weakens the mental stress of a person, contributes to a sense of relaxation, silence and maintains good health and mood.

# «Երաժշտական Հայաստան» ամսագրի Նորմեր և պահանջները

## Խմբագրական և մասնագիտական էթիկա

1. Խմբագրական և մասնագիտական էթիկան վերաբերում է խմբագրական աշխատակիցների հարաբերություններին, գլխավոր խմբագրի, ինչպես նաև հեղինակի ձեռագրի գիտական արժեքը գնահատելու կանոններին, գրագողության հայտնաբերման մեթոդներին համապատասխան էթիկայի չափանիշներին:

### 2. Խմբագրության աշխատակիցների հետ հեղինակի փոխհարաբերությունների էթիկական չափանիշները

Խմբագրության յուրաքանչյուր աշխատակից պետք է՝

- վերաբերվել հեղինակին հարգանքով, գրավոր կամ բանավոր խոսքում օգտագործել բարեգուսպ արտահայտություններ,
- ձեռագրի բովանդակային կողմը դիտարկելիս, խմբագրական յուրաքանչյուր միջամտություն համաձայնացնել հեղինակի հետ, չպետք է սահմանափակվել միայն քննադատական դիտողություններով, միայն ներթափանցելով հեղինակի գաղափարների և մտադրությանը, միասին և նրա համաձայնությամբ ձևակերպվում են առանձին արտահայտություններ, ձևակերպումներ, վավերացումներ, փաստեր և հայտարարություններ:

### 1.2. Հեղինակի հետ աշխատելիս չի թույլատրվում՝

- նյութի հրատարակման նախապատրաստության մասին որևէ մեկին տեղեկացնել առանց հեղինակի համաձայնության նաև խմբագրական կոլեգիայի անդամների
- որևէ մեկին տեղեկացնել, բացի հեղինակից կարծիքի կամ գրախոսության բովանդակության մասին
- բացահայտել հեղինակի նամակագրության բովանդակությունը:  
Բոլոր նյութերը պետք է ուղարկվեն խմբագրության էլ.փոստի հասցեին YerazhstakanHayastan@gmail.com կամ MusicalArmenia@gmail.com կամ ներկայացվի խմբագրություն հետևյալ հասցեով՝ 375001, Երևան, Սայաթ-Նովա 1ա 103 սենյակ:  
Ձեռագրի յուրաքանչյուր էջը պետք է ստորագրված լինի հեղինակի կողմից:

## ՆՈՐՄԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ

«Երաժշտական Հայաստան» միջազգային գիտական ամսագրում ներկայացվող հոդվածների

### 1. Հրատարակման ընդհանուր պահանջներ

«Երաժշտական Հայաստան» գիտական միջազգային ամսագրում տպագրվող հոդվածներն ընդգրկում են 070 100 «Երաժշտական արվեստ» մասնագիտության ուսումնասիրությունների բոլոր բնագավառներ, ինչպես նաև երաժշտությանը առնչվող միջդիսցիպլինար ուսումնասիրություններ:

Սույն պահանջները սահմանվում են «ԵՊԿ հրատարակչության» Կանոնակարգով, ՀՀ ԲՈԿ որոշումների և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հրատարակչությունը տեքստի առանձնացման համար օգտագործում է շեղատառը (*italic*), ընդգծումը (underline) և թավատառը (ենթադրյալ): Յրիվ շարվածքի համար չի թույլատրվում տառերի անջատման (*space*) օգտագործումը:

Հայերեն տեքստերը ընդունվում են KDwin ծրագրի Arial LatArm, Dallak Time, Times LatArm կամ նմանատիպ տառատեսակներով, սակայն ոչ Unicode ձևաչափով:

Փակագիծ նշանի համար ընդհանուր առմամբ ըզտագործվում է ( ), իսկ մեջբերման դեպքում [ ], դրա ներսում սովորական ( ): Չակերտների նշանի համար՝ « »:

Ռուսերեն լեզվով մեջբերման դեպքում՝ չակերտներ՝ “”, իսկ մեջբերման ներսում «»: Ռուսերենում անջատման գիծ “*тире*” նշանի համար օգտագործվում են [Ct+Alt+միևնույն] ստեղծների կոմբինացիա; “կարճ” անջատման գիծ “*дефис*” նշանի համար՝ [Ct+միևնույն] կոմբինացիան:

Ստեղծագործությունների անվանումները գրվում են սովորական տառատեսակով, մեծատառով (հատուկ անվանումների դեպքում՝ նաև չակերտներում): Ժանրերի անվանումները փոքրատառով: Սիմֆոնիաների, կոնցերտների, սոնատների հերթական համարները գրվում են արաբական թվերով գծիկով և վերջածանցով (օրինակ՝ 1-ին կամ 2-րդ Սոնատ) կամ բառերով:

Ստեղծագործության վերնագրերը լատինատառ նշել շարտառով և թավ, *op.* նշելիս չի առանձնացվում ստեղծագործության անվանումից ստորակետով (դաշնամուրի *C-dur* 2-րդ Կոնցերտ *op.29*):

Տոնայնությունը գրվում է լատիներեն, սովորական տառատեսակով Times New Roman (*C-dur, g-moll*), հնչյունների անվանումները լատիներեն տառերով, շեղատառով (*h, G*).

Թվականները նշվում են արաբական թվերով և վերջածանցով կամ պարզապես կետով (օրինակ՝ 1998-ին կամ 1998 թ.), տասնամյակները՝ արաբական (90-ականներին), դարերը և հազարամյակները՝ հռոմեական (XX դար, II հազարամյակ),

Չի թույլատրվում հռոմեական թվերը նշելու համար ռուսերեն “*Х*”, “*У*”, “*Ш*”, “*П*” տառերի օգտագործումը:

Տեքստում գրվում է մատենագիտական ցուցակի տվյալ աղբյուրի հերթական համարը: Մատենագիտական ցուցակը տեղադրվում է հոդվածի վերջում այբբենական կամ հերթական կարգով, սկզբից տրվում են մայրենի լեզվով գրված հրատարակումները:

Հղումներն անջատվում են հայերենում, ռուսերենում և այլ լեզուներում՝ կետ և ստորակետով:

Գրականությունն արձանագրել հետևյալ հաջորդականությամբ՝ հեղինակը (ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը), աշխատության անվանումը, հրատարակման տեղը, հրատարակչությունը, թվականը, էջերի ընդհանուր քանակը:

Ժողովածուի դեպքում՝ հեղինակի տվյալները, հոդվածի անվանումը: Ամսագրի և թերթի դեպքում՝ //անվանումը տարբերիվ, ժողովածուի դեպքում՝ /վերնագիրը, փակագծերում՝ կազմողը (կազմող ...), հրատարակման տեղը, հրատարակչությունը, թվականը, էջերի ընդհանուր քանակը և տվյալ հոդվածի էջերը:

Հղում կատարելիս տեքստում տրվում է սկզբնաղբյուրի համարը, օգտագործած էջը կամ էջերը (12. էջ 71-72 կամ 12. էջ 5):

Նոտային օրինակները և պատկերագրողումները ներկայացվում են առանձին ֆայլերի տեսքով tiff կամ jpeg (grayscale – 300 dpi, bitmap – 600 dpi):

Հոդվածի ներսում նոտային օրինակի և պատկերագրողման վկայակոչումը տրվում է փակագծում առանձին պարբերությամբ. (Օրինակ 1) կամ (Պատկերագրողում 3):

Ձեռագիրը պետք է համապատասխանի հոդվածների ձևավորման պայմաններին:

# «Երաժշտական Հայաստան» ամսագրի Նորմեր և պահանջները

## 2. Տեխնիկական պահանջները

Ամսագրում ընդունվում են հետևյալ տեխնիկական պահանջները.

- հոդվածի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
- հաջորդ տողում՝ հեղինակի անուն, հայրանուն, ազգանունը (գլխատառերով), նաև լատինատառ,
- հեղինակներին անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ կերպով՝
  - ա. հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը (լրիվ անվանումը և տեղը), պաշտոնը, էլեկտրոնային փոստը վերջինս՝ տպագրվում է),
  - բ. հակիրճ ինքնակենսագրությունը (մինչև 1000 նիշ) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, որը պետք է հրատարակվի,
  - գ. հանգուցային բառեր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,
  - դ. հոդվածները կարող են ներկայացվել բնագրերով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ եվրոպական որևէ լեզվով. դրանք պետք է ունենան մյուս երկու լեզուներով ամփոփում (մինչև՝ 600 նիշ հայերեն և ռուսերեն, մինչև՝ 1000 նիշ անգլերեն լեզվով):
- հոդվածները և առընթեր նյութերը ընդունվում են էլ.փոստով (մեկ ֆայլով, նուսային օրինակները և պատկերները յուրաքանչյուրն առանձին ֆայլով (ֆայլի անունը պետք է բաղկացած լինի հեղինակի անունից և ազգանունից և պատկերների համարների անվանումից) կամ էլեկտրոնային կրիչներով, ֆայլի անունը հանդիսանում է հեղինակի անուն ազգանունը:
- հոդվածները պետք է ներկայացվեն Ա4 .doc ձևաչափով
- տեքստը հավաքել առանց Tab ստեղծող օգտագործելու,
- տեքստի լուսանցքները. վերև 2.5 սմ, ներքև 2.5 սմ, աջ՝ 1.5 սմ, ձախ՝ 3 սմ
- հիմնական տեքստի տառաչափը՝ 12,
- միջտողայինը՝ 1.5,
- նկարները ցանկացած՝ մինչև Ա4 չափի,
- նոտաները, աղյուսակները և գրաֆիկան՝ սև-սպիտակ,
- ծավալուն հոդվածները կարող են ընդունվել խմբագրական խորհրդի որոշմամբ,
- տողատակը՝ տեքստի էջում աստղանիշով, առանց ավտոմատ հրահանգի, անմիջապես \* հետո՝ 10 տառաչափով:
- աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, փակագծում՝ կազմողը կամ խմբագիրը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, տարեթիվը (մասնույի դեպքում նաև համարը, թերթերի դեպքում՝ տողատակում), էջը:
- ծանոթագրությունները տեղադրվում են վերջում, համարակալումը՝ միջանցիկ:
- հոդվածների ծավալը 0.5-1.0 մամուլ (20000-40000 նիշ. հղումները ներառված տեքստի ծավալում):
- հոդվածները պետք է ներկայացվեն առանց տողադարձի, առանց էջում տողատակերի,
- հղումները ներկայացնել տառադարձությամբ (տես՝ համապատասխան պահանջներում ստորև)

ա - a	զ - z	ի - i	հ - h	յ - ey	պ - p	տ - t	ք - q	
բ - b	է - ej	լ - l	ձ - dz	ն - n	ջ - j	ր - r	և - ev	
գ - g	ը - ‘	խ - kh	ղ - gh	շ - sh	ռ - r’	ց - tz	օ - o	
դ - d	թ - th	ծ - ts	ճ - dch	ն - vo	ս - s	ու - u	ֆ - f	
ե - e	ժ - zh	կ - k	մ - m	չ - ch	վ - v	փ - ph		
ա - a	д - d	з - z	л - l	п - p	у - u	ч - ch	ы - y	я - ya
б - b	е - e	и - i	м - m	р - r	ф - f	ш - sh	ь - ‘	
в - v	ё - eo	й - j	н - n	с - s	х - kh	щ - shch	э - ej	
г - g	ж - zh	к - k	о - o	т - t	ц - tz	ь - ‘	ю - yu	

## 3. Հոդվածներում ամփոփումների պահանջները

Ամփոփումները պետք է արտահայտեն հետևյալ տեսանկյունները՝

- որպես գիտական աշխատանքի բնութագրիչ հիմք.
- գիտական հիմնախնդիրը, հեղինակի լուծումը և նրա գիտական նորույթը,
- հիմնախնդրի արդիականությունը,
- ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը,
- հիմնախնդրի շարադրման մակարդակը (ոչ ակնհայտ լուծումները, տեսական փնտրտույթների անհրաժեշտությունը, գործնականում դժվարությունների հաղթահարում),
- հեղինակի դրույթների և եզրահանգումների առնչությունը տվյալ բնագավառում գոյություն ունեցող ժամանակակից գիտական տեսանկյուններից:

## 4. Հոդվածը քննելու և հրատարակելու կարգը

Հոդվածները կարող են ամսագրի խմբագրությանը հանձնվել հոդվածի հրապարակման թույլտվության նախնական որոշման դեպքում ամբիոնների երաշխավորմամբ համապատասխան խորհրդակցությունների կամ գիտաժողովների արդյունքներում, պահանջվում է ամբիոնի նիստ քաղվածքը, և 2 գրախոսի՝ 1-ին՝ գիտական աստիճան ունեցող երաժշտագետի, 2-րդ՝ համապատասխան ամբիոնի պրոֆեսորի կամ դոցենտի գրախոսությունները:

Գրախոսը որոշում է հոդվածի հրապարակման նպատակահարմարությունը, հնարավոր է նյութի լրացուցիչ մշակումից և խմբագրումից հետո: Էական փոփոխությունների անհրաժեշտության դեպքում հոդվածը հեղինակային լրացուցիչ մշակումից հետո կրկին ուղարկվում է գրախոսության նույն մասնագետին:

Արվեստագիտության թեկնածուների, դոկտորների հոդվածները երաշխավորում են «Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամներից որևէ մեկի կողմից:

Գրախոսությունները պահվում են խմբագրությունում և ըստ ՀՀ ԲՈԿԻ պահանջի ներկայացվում:

Հոդվածները խմբագրությանը տրվում են անհատույց. ձեռագրերը չեն վերադարձվում:

# Բովանդակություն

# Content

# Содержание

Ճողկորագիտություն Фольклористика Folk Art	<b>Ա. Ա. ՀԱԿՈՒՅԱՆ</b> Մշո դաշտի ծիսական երգերը ..... 4 <b>A. A. АКОПЯН</b> Обрядовые песни Мушской долины исторической Армении <b>A. A. HAKOBYAN</b> Culture ritual songs of Moush field's historical Armenia
Գործիքագիտություն (ժողովրդական գործիքների) Инструментоведение (народные инструменты) Organology (National tools)	<b>Ա. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ</b> Հայկական ժողովրդական գործիքադարանի պատմության էջեր .... 9 <b>A. A. КИРАКОСЯН</b> Страницы истории армянского народного инструментария <b>A. A. KIRAKOSYAN</b> Pages of history of the Armenian national tools
Օպերային ռեժիսուրա Оперная режиссура Opera direction	<b>A. A. КАЗАРЯН</b> Оперная режиссура в Армении: времена, события, обстоятельства .....14 <b>Ա. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ</b> Հայաստանում օպերային ռեժիսուրան. ժամանակներ, իրադարձություններ, հանգամանքներ <b>A. A. KAZARYAN</b> Directing of the opera in Armenia. Times, Events, Circumstances
Վոկալ արվեստի մեթոդաբանություն Методология вокального искусства Methodology of Vocal Art	<b>Լ. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ</b> Вокально-методические рекомендации по работе с женским голосом сопрано ..... 23 <b>Լ. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ</b> Կանանց սոպրանո ձայնի հետ աշխատելու երգչական մեթոդիկային վերաբերող առաջարկներ <b>L. V. VARDANYAN</b> Singing methods for working with women's soprano voices
Կոմպոզիտորական արվեստ Композиторское творчество Composer Art	<b>Վ. Ն. ԽՈԼՈՊՈՎԱ</b> Современность Николая Попова: новизна музыки – новизна миропредставления ..... 28 <b>Վ. Ն. ԽՈԼՈՊՈՎԱ</b> Նիկոլայ Պոպովի արդիականությունը. երաժշտության և աշխարհայացքի նորամտությունը <b>V. N. KHOLOPOVA</b> The Modernity of Nikolai Popov: The novelty of music and the novelty of the world
Կատարողական արվեստի մեթոդաբանություն Методология исполнительского искусства Methodology of Performing Art	<b>Ա. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ</b> Կատարողի բեմական հոգեբանական ազատության մասին ..... 37 <b>A. G. ХАЧАТРЯН</b> О психологической свободе исполнителя на сцене <b>A. G. XACHATRYAN</b> About psychological freedom of the performer on the stage
Երաժշտական քննադատություն Музыкальная критика Musical Criticism	<b>Տ. Կ. ՏԱՐԿԻՍՅԱՆ</b> Эстонские акценты “Ереванских перспектив” ..... 41 <b>Ս. Կ. ՍԱՐԳՍՅԱՆ</b> «Երևանյան հեռանկարների» էստոնական շեշտադրությունները <b>S. K. SARGSYAN</b> Estonian estimation of «Yerevan perspectives»
Եկեղեցական երաժշտություն Церковная музыка Church music	<b>Ա. Օ. ԲԱԳԴԱՏԱՐՅԱՆ</b> Парижский хор “Акн” поет армянскую традиционную церковную музыку ..... 45 <b>Ա. Հ. ԲԱԳԴԱՏԱՐՅԱՆ</b> Փարիզի «Ակն» երգչախումբը կատարում է հայ ավանդական եկեղեցական երաժշտություն <b>A. H. BAGHDASARYAN</b> “Akñ” choir of Paris is performing traditional Armenian church music
Կատարողական արվեստ Исполнительское искусство Performing Art	<b>Ի. Լ. ՅՈԼՈՏՈՎԱ</b> Игорь Яврян: к 75-летию со дня рождения ..... 48 <b>Ի. Լ. ՅՈԼՈՏՈՎԱ</b> Իգոր Յավրյանի ծննդյան 75-ամյակին <b>I. L. ZOLOTOVA</b> Dedicated to Igor Yavryan's 75 <sup>th</sup> Anniversary

**Կատարողական արվեստի մեթոդաբանություն**  
*Методология исполнителяского искусства*  
*Methodology of Performing Art*

- Լ. Կ. ԵՓՐԵՄՅԱՆ** *Կյանքի և արվեստի սիրահարը. Նվիրվում է Իգոր Յավրյանի 75-ամյակին* .....51
- Л. К. ЕПРЕМЯН** *Влюбленный в жизнь и искусство (к 75-летию со дня рождения Игоря Явяряна)*
- L. K. YEPREMYAN** *Devoted to Igor Yavryan's 75<sup>th</sup> Anniversary*

- Լ. Կ. ԵՓՐԵՄՅԱՆ** **Ջոն Գևորգյան.** «Հայաստանը դրախտավայր է» (նվիրվում է թավջութակահարի 80-ամյա հոբելյանին) .....61
- Л. К. ЕПРЕМЯН** *Джон Геворгян: “Армения - это Рай” (к 80-летию виолончелиста)*
- L. K. YEPREMYAN** *John Gevorgian: "Armenia is an Eden" (devoted to the 80<sup>th</sup> anniversary of the violoncellist)*

**Ստեղծագործական դիմանկար**  
*Теоретический портрет*  
*Creative Portret*

- Н. Т. АСМАРЯН** *Памяти Шарля Азнавура* .....64
- Ն. Տ. ԱՍՄԱՐՅԱՆ** *Շառլ Ազնավուրի հիշատակին*
- N. T. ASMARYAN** *Dedicated to memory of Charl Aznavour*

**Կոմպոզիտորի ժառանգությունը**  
*Композиторское наследие*  
*Composer's Heritage*

- Ա. Գ. ԱՆԴՐԵԱՅԱՆ** *Առնո Բաբաջանյանի դաշնամուրային երկերը պատմագիտական տեսանկյունից* .....68
- A. G. АНДРЕАСЯН** *О фортепианных сочинениях Арно Бабаджаняна и смежных историографических вопросах*
- A. G. ANDREASYAN** *- On the piano compositions by Arno Babajanian and adjoined historiographical issues*

**Դաշնամուրային արվեստ**  
*Фортепианное искусство*  
*Piano Art*

- В. А. ЕДИГАРЯН** *Гуго Риман о фортепианной педагогике* .....77
- Վ. Ա. ԵԴԻԳԱՐՅԱՆ** *Հուգո Ռիմանի. դաշնամուրային մանկավարժության մասին*
- V. A. YEDIGARYAN** *Hugo Riman's about piano pedagogy*

**Թարգմանչական երաժշտագիտություն**  
*Переводческое музыковедение*  
*Translation Musicology*

- Ն. ՍԼՈՆՆԻՄՍԿԻ** *Արամ Խաչատրյանի հոդվածը «Ստեղծագործական արիության և ոգեշնչման մասին» Անգլերենից՝ հայերեն թարգմանությունը՝ Տ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ* .....81
- Н. СЛОНИМСКИЙ** *Статья Арама Хачатуряна “О творческой смелости и вдохновении” перевод с английского на русский язык Т. Г. ГРИГОРЯН*
- N. SLONIMSKY** *Aram Khachaturan's article: “On Creative Boldness and Inspiration” Translate from English into Russian T. G. GRIGORYAN*

- О. МЕССИАН** *Доклад в Брюсселе* перевод с польского на русский язык **С. К. САРКИСЯН** .....86
- О. ՄԵՍԻԱՆ** *Ջեկուցում Բրուսելում* Լեհերենից - հայերեն թարգմանությունը՝ **Ս. Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻ**
- O. MESSIAEN** *Lecture in Brussel* Translate from Polish in to Russian **S. K. SARKISYAN**

**Միջդիսցիպլինար գիտություն**  
*հոգեբանություն-երաժշտություն*  
*Междисциплинарные науки: психология- музыка*  
*Inderdisciplinary Science (Psychologia-Music)*

- Վ. Մ. ՀԱԼԱՋՅԱՆ** *Երաժշտության հոգեբանական ներգործության առանձնահատկությունների մասին* .....89
- В. М. АЛАДЖЯН** *Особенности психологического воздействия музыки*
- W. M. HALAJYAN** *Features of the psychological impact of music*